Зорин

# ՍՐԲՈՅ
## ՀՕՐՆ ՄԵՐՈՅ
## ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ
# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

*Երգոց երգոյն սողոմոնի :*

Տպագրեալ յամի Տն. 1789. 'ի Նոյեմբ. 23։
Եւ 'ի թուականութեան հայոց. ՌՄԼԸ :

*'Ի հայրապետութեան տն Ղուկասու Հայոց կաթուղիկոսի :*




'Ի ՎԵՆԵՏԻԿ.
'Ի Վանս սրբոյն Ղազարու :
յամին առաջնորդութեան
[illegible]



Սբ՟ գրիգոր Նարեկացի ։–

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑՆ ՍՈՂՈՄՈՆԻ.

Զոր ասացեալ է ի Գրիգորէ Նարեկայ վանաց, և հոգեշնորհ վարդապետէ որդւոյ ի Խոսրովայ:

*(Ի խնդրոյ ածասէր և քննասիրական արքային Գուրգենայ. որ) սակս իւրոյ ածային երկիւղածութեն, և ընթերցասէր գոլով ցանկացեալ այսմ տառի, մեծաւ աղաչանօք, և խնդրուածովք եառ մեկնել զասակս փեսայի և հարսինն: Որ բացայայտի մեկնութիւն Քի, և յեկեղեցի:*

ՀՐԱՄԱՆՔ Ի ածասէր թագաւորութեդ, ով Տէր արքայ, բուռն և աւելի էր քան զկար մեր. զի այդպիսի խնդիր, մեկնել զերգ երգոց՝ այնոցիկ էր, որ ըստ սողոմոնին է հոգւով: Զի եթէ նիւ-

տացին գրիգոր , որ կատարեալ վարդապետ էր և հոգեխաբնակ , 'ի բուն կատարմանն մեկնութեան այսմ գրոցս վերջացեալ գտանի , որչափ եւս առաւել եւս , որ ամենայնիւ տղէտ եմ , և ունայն 'ի հոգւոյն շնորհաց՝ ոչ կարացից հետեւել մտացն ասացելոց 'ի սողոմոնեան հոգւոյն ։ Մանաւանդ զի չէ փոքր դատապարտութիւն և սպառնալիք՝ զբանս սրբոյ գրոց օտար մեկնութեամբ աղաւաղեալ՝ վասն ոչ տղէտ երևելոյ , և փառամոլ հպարտութեան՝ զոչէնս իբրև զճշմարիտ ցուցանել ։ Բայց զի հրաման ունիմք հնազանդ լինել Թագաւորաց հրամանաց , յանդգնիմ առնել զիմ տկար մտացս հասողութիւն ․ յուսացեալ 'ի հօրն սէ , զնորայն կատարելով հրամանն , որ ասաց , Թէ հպատակ կացէք Թագաւորաց ։

Արդ՝ նախ առաջին՝ խնդրացի ընդայս , որ այսպիսի միտս երևեցուցեր առ 'ի քննել զգիրս , և հոգտանել ուսմանց , որ է գուշակ երկիւղի տն , և օտարանալոյ 'ի սիղծ

հոգ-

հոգւոց , և 'ի վայրապար քննութեց , և 'ի մեղսասէր բարուց . և այնմ երանութեց մօտաւորիլ , որ մարգարէն ասէ , Թէ Երանեալ է այր՝ որ ոչ գնաց 'ի խորհուրդս ամբարշտաց ։ և որ զկնի գայ ։ Որ և սակաւ ինչ յառաջ երթեալ՝ ասաց . Այլ յօրէնս տն խորհեսցի նա 'ի տուէ և 'ի գիշերի ։ Ապա զհատուցումն խորհելոյն զօրէնս տն 'ի վերայ բերեալ ասէ , Թէ Եղիցի նա որպէս ծառ՝ որ տնկեալ է 'ի գնացս ջուրց ։ Զի որպէս ծառ՝ որ տնկեալ է 'ի գնացս ջուրց , անթարշամ է , նոյնպէս և որ ըզպատուիրանս այ քննէ , և այնմ հոգ տանի 'ի տուէ և 'ի գիշերի , այնպէս անթարշամ մնայ յայսմ՝ 'ի կեանս . և զամ զոր ինչ առնէ , յաջողէ նմա ած ։ Որպէս դաւթին իսկ յաջողեաց . զի այր թագաւոր էր . և այնչափ մեծ թագաւորն զպատերազմացն՝ և զամ ախոյից մարմնոյ հոգս առ ոտն հարեալ , զայսն և եթ խորհէր . վասն որոյ անպարտելի մնաց 'ի թշնամեաց ։ Նոյնպէս և 'ի սողոմոնի տեսանեմք , Թէ քանի՛ տիեզերակալ թագաւոր էր .

էր . բայց հանապազորդեան հոգք այն էր նորա , զոր յընթեռնուլդ էք . և այլ ևս անչափ գրեան , զոր և աշխարհս չէր բաւական 'ի բառնալ՝ եթէ մնացեալ էին գրեանն . բայց զի չէր աշխարհ արժանի , և չախտէր որ ուսանէին մարդիկ , զայնպիսի անչափ գիտութիւն եբարձ ա̃ծ յերկրէ . զի զո̃ր ինչ 'ի գիտութ̃ի էր բերեալ , որ ինչ աբարեալք էին ա̃յ 'ի վերայ երկրի . և եթէ չէր գրեալ , այլ ևս մեծաց շնորհաց էր հասեալ : Արդ՝ ընդ այնպիսին պարտ է նախանձել թագաւորաց , և անյագաբար ուսանել զօրէնս ա̃ն : Բայց այժմ կացցէ այդ , զի 'ի սկիզբն մեկնութ̃ե գրոցս մտեսցուք :

Արդ՝ նախ զայս արժան է ասել , թէ զինչ մեկնի Երգ Երգոց . և այսու զանբաւ պատուականութիւն նորա ուսանել : Երգ երգոց , թէ օրհնութ̃ի օրհնութեանց : Որպէս մեք սովոր եմք խորանին սրբութեան , ուր սեղանն 'ո̃ք կայանոյ , սրբութիւնք սրբութ̃եց կոչել . ո̃ն ասէ խոկ առաքեալ : Այսինքն՝ ե-

թէ

թէ եկեղեցին է սրբութիւն, և խո-
րանն իւր՝ կրկին սուրբ և առաւել
իւր: Նոյնպէս և նա իմ երգոց և
օրհնութեանց դեր 'ի վերոյ է. որպէս
և 'ի նորումն աւետարանին՝ իւր. և
պատուական կոչի քան զայլ գիրս.
նոյնպէս և նա քան զՀինն: Յա-
ղագս որոյ իմանալի է՝ թէ ձայնիւ
երգելին 'ի տաճարին, առաւել ևս
յանգուցն, և մարգարէական հոգ-
ւով՝ քան զդաւթեան սաղմոսն.
զի անձամբ է խորհուրդն՝ որ 'ի յայն
սարսափելի բանսն ծածկեալ է:
Այլ ոչ կարէ ոք 'ի մարմնեղինաց
իմանալ, բայց եթէ որք ըստ պօ-
ղոսին են հոգւով, որ յերրորդ եր-
կինս ել, և զանձառ բանսն լուա.
զոր ոչ էր կար մարդոյ խօսել: Ա՛ն-
զի ոչ տեսէ ընելիքս այս իմ խորհր-
դոյն ընելութե, ո՛չ և ոչ աչացս
այս՝ տեսողութենն իմ:

Բրդ՝ զանձառելին կամեցեալ
պատմել սողոմոնի՝ 'ի մարմնաւոր
իրս առակեաց. այսինքն 'ի փեսայ՝
և 'ի հարսն, յեղբօրորդի՝ և յօ-
րիորդ, 'ի դուստր՝ և յաղաւնի, 'ի
սոխնս՝ և 'ի տաչխս, և յիւղ թա-
փեալ.

փեալ. 'ի խնձոր, յայծեամն. 'ի
սողոմոնն, 'ի Թագաւոր. 'ի քա-
ղաքն Երուսաղէմ, 'ի պարտէզ, և
որ այսպիսիք ցանկալիք աչաց հայե-
լոյ, և լսելեաց ախորժելիք, և մը-
տաց փափաքելիք: Ո՜վ ո՜չ ծնօղք
տղայոց՝ զպատուականն իրս 'ի բա-
րետեսակ ամանի ծածկեն, զի նոյ
արտաքոյ տեսեալն ցանկալի Թը-
ուին քան զոր 'ի ներքս եղեալ գան-
ձըն, զի այնու յորդորեսցին՝ և ըզ-
գուշութ՟ե պահպանութեան որ 'ի
ներքս: Նա և խուղ անոյշ և մե-
ծագին, ո՜չ նարդոսն՝ որ սա խակ
յիշէ, ամենին՝ ամփոփի. այլև հոտ
անոյշ ոչ 'ի բացի մարթի մնալ. ո՞չ
և ո՛րն 'ի սրբում աւետարանին ա-
սէ, Թէ Մի արկանէք զմարգարիտս ձեր
առաջի խոզաց: Ը՟ռ, Թէ մի տայք ու-
կար լսելեաց զանձառելիսն. նոյն
հոգի ուսոյց սողոմոնի՝ մի յայտ-
նապէս ասել զորս ետես հոգւով
լուսոյն. և մի ամենեւին Թագու-
ցանել զխորհուրդս եկեղեցւոյ, և
զփրկութի, և զք՟սի մարմնանալն,
և զամ՟ ինչ զոր կրեաց վասն մարդ-
կան սիրոյ, և զմահն, և զյարու-
Թիւն,

թին , և զմիւսանգամ գալուստն ,
և զոր ինչ անդ կայ պահի պարգևք
սրբոց՝ անիմանալիք , և զտռփումն
սիրոյ սրբոցն որ առ Քն , որ արբեամբ
և մահուչափ կրեցին յանձինս , սի-
րելով զՔն , ոպ և նա զմեզ · որ վն
զիւր անբաւ սէրն յայտ ածելոյ մեզ՝
հարկեցաւ մարմին զգենուլ , և
դարձեալ՝ զմր արիւնն հեղուլ վն
մեր ։ Որ կարողն էր իշխանաբար
փրկել զմեզ ՚ի սատանայական բռ-
նութեանց իբրև զԱծ , զայն իրա-
ւամբք արար , և ընա բռնութբ
կապեաց ։ Նա և զայն համդար-
տութբ գործեաց , և ոչ տիրութբ ։
Զի իրաւամբք փրկեացի գերու-
թենէ նորա , և ողորմութբ , որ է
այսինքն զմահն՝ զոր ըստ իրաւանց
դատեաց զմեզ ՚ի հող դառնալ
վն անարգելոյ զպատուիրանն՝ որ
վն պտղոյն չուտելոյ , և զարդար
դատն՝ առանց իրաւանց ոչ երբէք
որ ունէրն իշխանութի ։ Նոյն ինքն
զադամեան զգեցաւ մարմին , և
զմահ նր յինքն առ , և իրաւամբք
փրկեաց ։ Նաև ընդ իրաւունսն
զողորմութի խառնեաց , և ընդ ո-
ղոր-

զօրութիւնն՝ զիրաւունս . և այսու ամի՛ եցոյց զանպատմելի սէրն՝ որ առ մեզ : Զայս ամ՟ պատմէ Երգ երգոցն , և զեկեղեցւոյ պայծառազարդութի՟ն խաչի՛ն և սեղանոյն , մարմնոյն և արեամբն տ՟ն , որք աւազանաւն , և իւղոյն սրբով . Հին և նոր կտակարանօք . առաքելովք , և մարգարէիւք , և վ՟կայօք . քահանայականօք , և ճգնաւորականօք . կուսանօք , և մարտիրոսօք . քրիստոնեայ թագաւորօք , և բովանդակ ամբիծ ժողովրդօք , որ յեկեղեցւոջ էր անկեալ . և զայնպիսի պարգևսն , և զանբննելի , և որ այլն ևս սոյնպիսիք անճառպարգևք , որ առակաւոր բանիւս եցոյց մեզ : Այլ և նա ճշմարտապ՟ ոչ ծանեաւ զբովանդակն , և ոչ մեզ ծանուցանել մարթաց . և ոչ զոր ինքն գիտաց , մեզ յայտնի 'ի յայտ եբեր , այլ առակաւ :

Այս եթէ հարցանէ ոք , թէ զիարդ 'ի հարսն՝ և 'ի փեսայ առակեաց . և զիարդ մարթի զո՟յ խորհուրդն մարմնաւոր ցանկութ՟ նշանակել , և զանչափ սէրն ա՟յ՝ ախ-

տի

տի սիրոյ օրինակաւ 'ի յայտ բե-
րել ։ Նախ՝ արժան է զցանկասէր
բարս մեր աւաղել · որ այնչափ օ-
տարացեալ եմք յայ խորհրդոյն , որ
այս անսամանական ցանկութ̄ հարկե-
ցաւ հոգին սբ. 'ի ձեռն սողոմոնի
պատմել մեզ զանտանելիսն ։ Այս-
պիսի իրաց աղագաւ և երանելի
վարդապետն տիեզերաց յոհան վա-
րի բանիւ , թէ այնպիսի սրբական
վարս պիտոյանայր մեզ ստանալ ,
որ գիրս ոչ պիտոյ էր · այլ նոյին ,
և աբրահամուն , և նորին որդւոց ,
և Թուանց · այլ յոբայն , և մով-
սէսին , և առաքելոցն · որ փոխա-
նակ գրոյ 'ի սիրտս նց բնակէր , և
ուսուցանէր , և 'ի տախտակս սր-
տին գրէր , և ոչ 'ի գիրս ։ Արդ՝
նոյնպէս պարտ էր լուսաւոր և հր-
րեշտակային սիրտ ստանալ , որ ոչ
պիտոյանայր մեզ այնպիսի առակ
ցուցակի՝ 'ի հարսն և 'ի փեսայ
կերպարանել զխորհուրդս քնի՝ և
եկեղեցւոյ , և որ յերկինս են ան-
իմանալի բարութիք ։ Արդ՝ քանզի
զայնպիսի պատիւ կորուսաք , և
զայնպիսի աչս կուրացուցաք , ո՛ն

ա-

առեալ յերկրորդն դիմեսցուք , և 'ի ձեռն մարմնաւորացս տեսցուք զհոգևորսն . ո՞վ և պատմէ սողո-մոն՝ ընկալեալ զշնորհս հոգւոյն սրբ̅յ : Նաև սուրբ ամուսնութի , և սէր փեսայի ընդ հարսին , և հար-սին ընդ փեսային , որ ազատ լինի 'ի պիղծ խառնից , չէ՛ օտար 'ի հոգ-ւոյն շնորհաց , որով և խորհուրդն 'ի ք̅ի և յեկեղեցի աւարտի , ըստ առաքելոյն , թե Խորհուրդս այս մեծ է . Բայց ես ասեմ 'ի ք̅ս , և յեկեղեցի . վը-կայելով բանիցն սողոմոնի : Արդ՝ որ զսուրբ ամուսնութիւն պղծէ պիղծ խառնակութեամբ և չար գործովք , զեկեղեցւոյ խորհուրդ պղծէ , և զք̅ի անարգէ , որ այսմ օրինակն է :

Բայց մեք դեռ զառաջին եղեալ խորհուրդս մեկնեսցուք , և ցուց-ցուք , թե որչափ սէր ունի ա̅ծ առ մարդիկ . այնպէս , ո՞վ փեսայ ընդ հարսին . ո՞վ ասէ եսայի , թե որպէս ուրախ լինի փեսայ առ հարսին , այնպէս ուրախ լինի տ̅ր 'ի քեզ : Որ և դա-ւիթ խսկ ասէ յողբսն յովնաթա-նու , թե Բաղձամ ցատ է սէր քո ինձ

ժան ղուէր կանանց ։ Որդ՝ չէք յերկրէ պատուականագոյն և առաւել՝ քան զսէր առն և կնոջ ։ Ապա եթէ ոմանց ոչ շատ կարծի և կարևոր , յաղագս այնր չթուէ՝ զի ոչ սրբութբ՟ լինի եկեալ յամուսնութիւն . և ոչ սրբութբ՟ իցէ պահեալ զկուսութիւն . այլ անառակ պղծութբ՟քն խու-րովք փախուցեալ իցէ յինքենէ ըղձորչս հոգւոյն ։ Իսկ որ ամբիծ և անարատ գայ ՚ի նը ամուսնութիւն , և անձառ սիրով հոգւոյն սբ՟յ իցեն միաւորեալ ընդ միմեանս , այն օրհնութբ՟ն օրհնին , որով ադամն , և եւայն օրհնեալ միաւորեցան ։ Նա՝ որ այսպիսի սիրով և օրհնութբ՟ լինին միաւորեալ , ՚ի վերայ իւ-րաց արեամբ չափ մեռանին ։ Նա ես և վասն ընտանեաց սիրոյ բաղումք ՚ի քեզ անկանին՝ և ուրացան ՚ի հալածանաց ժամանակին ։ Այլ և ադամ ես ՚ի դրախտէն և ՚ի լուսեղէն փառացն՝ յաղագս կնոջն սիրոյ մերժեցաւ , և արտաքս անկաւ . և ոչ վասն ա՟ծ լինելոյ , այլ ՚ի նորա սիրոյն ծանր համարեցաւ քակել ։ Որ գիտէր ճշմարտապէս՝

թէ պատժելոց էր ինքն յԱյ. զի
ոչ էր անգէտ, այլ լի մարգարէա-
կան հոգւով. և զի դեռ չէր ևս 'ի
շնորհաց հոգւոյն անկեալ. վն զի
չէր անցեալ ըստ պատուիրանաւն:
Նա՝ և յետ ուտելոյն զպտուղն ոչ
իսպառ կորոյս զհոգին. այլ որպէս
մինչ 'ի դրախտին էր, հոգւով սըր-
բով ծանեաւ զամենայն կենդա-
նեաց զբարս, և յածելն Այ զնոսա
առ Ադամ՝ ըստ իւրաքանչիւր բա-
րուց՝ և բնութեց կարգեաց զմի մի
անուանս նց: Եւ 'ի ննջելն իւրում
ստեղծաւ Եւա, և յածել զնա առ
նա՝ մարգարէութբ ասաց, թէ Այս
այժմ ոսկր յոսկերաց իմոց. և զորդեծը-
նուէ աճումն որ 'ի կնոջէն, և թո-
ղուլ զհայր՝ և զմայր, և երթալ
զհետ կնոջ, և լինել մարմին մի:
Նա և յետ ուտելոյն 'ի պտղոյն՝
գիտաց մարգարէութբ զփրկութիւն
մեր, զոր 'ի ձեռն կնոջ էր լինե-
լոց. Քս, 'ի ձեռն սբ Ածածնին.
վասն որոյ և կեանս կոչեաց զկինն.
ապա թէ ոչ այդպէս, զիարդ կո-
չէր զնա կեանս, որ մահ ծննդոց ա-
դամայ՝ մահու պատճառն եղև:

Նա՝

Նա՝ և ո̄ղ ասէ որ Յ ուսուցիչն ,
թէ զայս ասելով զա̄մ որ մինչ 'ի յառա-
բած գործոյ ընթերցոյ էր յերկրէ , եւ 'ի չեռոն
ջոյ պեղեկութեան գիտաց նա ։ Արդ՝ ե-
թէ մինչ 'ի փառաց անտի անկեալ
էր , զմարգարէութ ունէր հոգի ,
որչափ եւս առաւել մինչդեռ 'ի
փառսն էր . այո՛ և առաւել եւս ու-
նէր ։ Արդ՝ յայտ խոկ է , ո̄ղ առա-
քեալ ասէ , թէ Ադամ ոչ պատրեցաւ
յօձին սուտ խոստմամբ՝ որ սատա-
նայն , այլ կինն պատրեցաւ եւ յանցեաւ .
և ադամ յաղագս ոչ բաժանելոյ
'ի կնոջէն եկեր զպտուղն , և 'ի
սիրելոյ զնա , այլ ոչ վասն ա̄ծանա-
լոյ՝ ո̄ղ կինն ։ Նա և այժմ խոկ յա-
ղագս սիրելոյ զկանայս՝ մեծարեն
արք զկանանց խրատս՝ և զչար կամս
նոցա կարի յոյժ գիտեն , թէ չէ
պատշաճ , այլ 'ի սիրոյն հարկին
առնել ։ Արդ՝ զայս գիտացեալ սո-
ղոմոնի՝ կարեւոր ասէր 'ի մարդում
քան զ̄ամ ասէր , և առակեաց 'ի քն̄ջ
ասէր՝ և յեկեղեցւոյ առ միմեանս ։
Այլ ոչ եթէ այսու միայն կշռե
ասէրն ա̄յ . զի որչափ է̄ ա̄ծ և ընդ-
մարդիկ է առաւելութ , նոյնչափ

սիրոյն գերազանցութեան քան զամենա-
նութե՛։ Այլ որ զգիրս զայս ըն-
թեռնու, պէտս ունի մաքրել ըզ-
միտս, և զխորհուրդս յա՟մ մարմ-
նաւոր ամուսնական մտածութեց,
և ապա մտել 'ի լսելութի։ Զի է
սա լեառն քորեբ, ուր ա՟ծ ընա-
կեաց. և ո՟չ անդ յորժամ զազան
մերձենայր 'ի լեառն, քարկոծ լի-
նէր, նոյնպէս և որ զազանաբա-
րոյ մտօք մերձենայ յերևելի բանս
գրոցս այսորիկ, զնոյն կրէ զկիրս։
Մ՟ն որոց արտաքոյ ա՟մ խորհրդոց
մարմնեղինաց պարտիմք լինել,
խնլով զաչս մարմնոյ, և բանալ
զհոգւոյն. զի կարասցուք նման
մովսիսի՝ յա՟ծաբնակ յայս ելա-
նել իմանալի լեառն. և զ'ի սմա
ա՟ծային խորոցն զծածուկս ա՟ն կա-
րի յայտ ածել։ Որում առաջնորդ-
եսցէ հոգին ս՟բ, յաւելլով 'ի մեզ
լեզու ասելոյ, և լողացդ միտս
լսելոյ։

ԵԿԴԵՍԻԱՍՏԵՍ։

Այսինքն, ժողովումն եկեղեցւոյ,
որ բաժանեալ էր 'ի մնոտի պաշ-
տամանց. զի եկեղեցի, կոչի ժողո-
վուրդ։

վուրդ ։

Գիտացի , թէ նորին զօրացուցանէ ըն-
ճանէկութէ ։

Այսինքն , ծերացեալ մեղօք ման-
կութին ադամայ՝ հոգւովն սրբով 'ի
գլխուն ելն սողոմոնի · այն մար-
մինն , զոր քն զգենլոց էր 'ի մէնջ ։
Դարձեալ , այսմ մարմնով մեր
հնացեալ բնութիւնս զօրացեալ՝ 'ի
մանկութի դառնայ , զլուսեղէնն
զգենլով զփառսն , յորմէ մերկա-
ցաւն ։

Նարջրացուցէ 'ի շոէնարան մեր ։

Ոէ զգլախան , և եթէ զերկլնս
խմացիս , երկուքին լսին , յոր բար-
բացուցէ տր զխոնարհեալքս մե-
ղօք ։ Իսկ եթէ հարցանէ ոք , թէ
ո արար զայս փրկութի , լսէ ։

Ոտափառին մեր քն , որ 'ի գահոյս էբբեւ
արձան ոսկեղէն դմաստիս ։

Ոտաստորեալ մարմին միանալովն
ըն իւր բանին , 'Ի գահոյսն իւր ։ Ա-
ձան ոսկեղէն , մաքուր 'ի մեղաց
կբրև զոսկի , զոնծուին դուշակէ՝
միացեալ ըն մարմնոյն , յիշ , ըն աս-
տուածոյն ։ Իսկ թէ զիարդ մար-
մինս մեր արմանեսի կոչե ցաւ , մն

զի անբիծ 'ի մեղաց՝ նորայն մար-մինն էր։ Օ՜ի եթէ գաւիթ զար-դարս իբրև զարմաւենի ծաղկեալ-սա՛՝ վասն վայելչականութեան, քա-նիօն ածացեալ մարմինն։ Նաև ըն-ծառայէր, զի զմեռելութին կրեաց։ Որում և բերաւ խունկ 'ի մոգուցն ընծայ՝ ընդ երկուսն պատարագան՝ սա 'ի գուշակութիւն այսմ։ Թողում սաեղ, որ 'ի թաղմանն զմուռեցաւ։ Գեորգեայ Բափառորն ամբրէն 'ի Հանձխա-Բէանն։

Այս բան զառաջին բանման կրկնէ, որ ասացն, թէ Մարիամ զօրացուցա-նէ պճանէքանէ։ Նաև զի թագաւոր և կոչի մարդս՝ զի 'ի պատկեր իմ արարաւ։ Գեորգեայ Բափառորն ամբրէն 'ի Հանձնաբէան։ Այսինքն՝ յառաջին մասն, զոր 'ի դրախտին ունէր։ Ներքեւն 'ի տեղեկութ իւր։

Որպէս յառաջաբանին՝ շտեմարան կոչեաց զարքայութեին, ուր շտե-մարանելոց է զարդարան, գնոյն սա դարձեալ սենեակ անուան-եալ։ Նաև օրէնքէ, վասն զի սիրեաց զմարդիկ առաւել քան զհրեշ-տակս. յաղագս որոյ սիրոյ և զմեր բնու-

բնութիւն զգեցաւ ։

Երգեցէք զՏէրն ։

Այսինքն, թէ օրհնեցէք զայն սէրն, որ այնչափ սիրեաց. որ զայնչափ պարգեւս դարձեալ շնորհեաց մեզ իւրով իսկ մահուամբն ։

Զի նոր եմ՝ ի սաղմոսարանին ։

Երկու կըս լսի բանս, թէ գրեալսն 'ի սաղմոսարանին ես եմ, զոր ինչ արարի ուղղութիւն փրկութեան, և կրեցի, գրեալ է 'ի սաղմոսարանին ։ Այլ և ես մի մի ոչ կամիմ բերել զվկայութիւնն, զի 'ի համառօտն եմ 'ի փութալ ։ Այլ երկրորդն, թէ կամի ոք երգել և օրհնել զմեսերն 'ի սաղմոսին, ես եմ որ ուսուցանեմ, թէ ո՞րպ պարտ է օրհնել ։ Այլ և առաքեալ վկայէ, թէ Զոր կամքն յաղօթս, որպէս արժան իցէ՝ ո՛չ գիտեմք. այլ ինքն հոգին բարեխօս լինի 'ի հեծութիւնս անմռունչս ։ Եթէ 'ի հեծութեան աղօթելն քո՝ հոգին որ ուսուցանէ քեզ զբանս օրհնութեան անբարբառ անմռունչ ։

Երգեցէք ընդ ընկերս իմ ։

Այսինքն ը հրեշտակս ։ Այլ թէ զիարդ հրեշտակք ընկերք կոչին .

մի՛

մի՝ զի յարարչէն ևեթ գոյացեալ՝
ոչ և նոքայն. և երկրորդ՝ զի ոչ
էաք հեռի 'ի հրեշտակաց փառաց,
այլ փոքր ինչ խոնարհ քան զհրեշ-
տակս, ոչ և ասէ դաւիթ:

Սրբեսցուք և ոգւով ընթասցուք 'ի Թագա-
ւոր սիրելի:

Այսինքն, 'ի Թագաւորն մեր Քս,
որ սիրեացն զմեզ, ուրախ լիցուք
ի մերատին ստանալն զկորուսեալ
զփառսն. և երգեսցուք օրհնու-
թեամբ նմա:

Ուխտեա և ծածկեսցուք 'ի փեսային:

Այսու յայտնի, թէպէտ և ան-
տես է ած, զի մարմնաւորս ունիմք
աչս, անտեսութ օրհնեսցուք զնա:

Այս վեր յշնաւորք:

'Ի համարս թուոց տասնն է կա-
տարեալ. և եթէ այլ թուէ, 'ի
մին դառնայ, ասել՝ մետասան. և
որ 'ի կարգին է. նաև ածարքան
վկայէ այսմ: Որդ՝ ոչ 'ի միակսն,
նոյնպէս և 'ի տասնեակսն տասն
տասն հարիւր է. և հինգ տասն
յիսուն. հարիւրն կատարեալ թիւ
է ոչ զտասն. և յիսունն կէս թիւ
ոչ զհինգն: Որդ՝ զկէս աչս ունի
մարդ.

մարդ, և ոչ զկատարեալ. այսինքն յլմնաւորք ։ Որդ՝ զխառդ կարէ տեսանել զծածկեալն 'ի տեսլենէ . քո յլմնաւորէս ։ Նա և 'ի հարկա-բաւորացն , քո 'ի հրեշտակացն՝ ան-տեսանելի է . Թէպէտ և ոչ որպէս զմեզ , այլ և ոչ կատարեալ ։

Տէր արար զքեզ և հաստատեաց զքեզ ։

Նա արար զառաջինն , և նա դար-ձեալ հաստատեաց զանկեալն՝ 'ի նոյն փառսն ։

Աստուածեաց զքեզ յարգանդէ , գեղե-ցիկէր 'ի կանայս մայր քո ։

Որդանոց 'որ ստացանն է . և մայր սիոն եկեղեցի կոչի . զի սիոն ասէ մայր . և մարդ ծնաւ 'ի նմա ։

Ծնցի մարմին առ նոյն անխիղճ անաղտ յայլն տեսչութեանն ։

Այսինքն 'ի հոգւոյն սրբոյ ։ Նա և առաքեալ ասէ , Ծնեալ վերստին՝ ոչ յապականացու սերմանէն , այլ յանա-պականացուէն , կենդանի և մշտնջենաւոր բանին այ ։

Ծնէ այսպէս ասէր ։

Այսինքն թէ յառաջ այսպէս ու-նէին մարմին անխիղճ , անարատ , լուսաւոր , մինչև էր 'ի պտղոյն

ճա-

Ճաշակեալ։

Այս հայր այս յօրհնութեան օրհնութեանցն։
Վասն զգաւթայ քահանան հօր իւ-
րոյ բերէ վկայ, օրհնութիւն օրհնու-
թեանց, ասելով, թէ Տէր ասաց ցիս որդի
իմ ես դու. եւ ես այսօր ծնայ զքեզ։

# ԵՐԳ ԵՐԳՈՑ·

որ է

## ՍՈՂՈՄՈՆԻ։

Սողոմոն՝ խաղաղութ(եա)ն թարգմանի . որով առակէ զՔ(րիստո)ս . զի նա է խաղաղութ(իւ)ն մեր , որպ(էս) ասէ առաքեալ։ Երգ՝ քանզի ծնաք նոր ծնունդ , աղաչեմք զծնօղն՝ մայրական սիրով համբուրել զմեզ , մերձեցուցանել զբերանն ա̄ծայինն . զի՛ ի համբուրելն նորա զմեզ՝ արբցուք յայնմ բերանոյ զայն՝ որ ինքն ամենայնը բերանն ասաց . Եթէ ոք ծարաւի իցէ , եկեսցէ առ իս , և արբցէ ։ Յաղագս այնորիկ ասէ ,

## ԳԼ. Ա։

1 . Համբուրեսցէ զիս ՚ի համբուրից բերանոյ իւրոյ ։

Նա և անառակ որդին գոլով մեք , համբուրիմք յերկնաւոր հօրէն , ըստ ասելոյ առակին յաւետարանին ։

Երգ՝

Արդ՝ զաւէրն՝ զոր սիրեաց զմեզ, առաւելուլ աղաչեմք՝ համբուրին առաւկաւ :

Զի բարի են ստինք քո քան զգինի :

Աստուածախրատք՝ որ ծծին 'ի հոգւոյն 'ի ստեանց գրոց, բարի են քան ըզգինի, ըստ մարգարէին ասելոյ, Թէ

Բարի են ինձ բանք բերանոյ քո քան ըզհազարս ոսկւոյ՝ և արծաթոյ :

Զի կաթըն որ 'ի ստենէ բղխէ, կենդանութե է պատճառ . իսկ գինին՝ միայն զօրութե :

2. Եւ հոտ իւղոց քոց քան զամ̃ խնկօք անուշահոտութե :

Այսպէս առաքինութիւնք և բարի գործք՝ որ յամ̃այն իւղոյն բուրեն . ըստ զոր ուսուցանէ հոգին մ̃ք՝ որոյ մերձենան՝ և հաստատին 'ի նա :

Իւղ թափեալ է անուն քո :

Եւ զի որ թափեալ է յամանէ, անքննին է, և միայն ամանին ճանաչի լեալ 'ի նմա իւղոյն . այսպէս ա̃ծութեն բնութի անքննին և անխմանալի՝ և աներևանելի է, իբրև զիւղն թափեալ : Այլ զոգիս արդարոց և առաքինեաց 'ի մեզաց՝ անուշահոտէ, ող և զամենն՝ իւղն

 պատ-

պատուհական : Ո՛րդ՝ զի թէ իբրև Թափեալ իւղ է ա̃ծուէն անուն , և զխոուէն 'ի մարդկանէ անհա- սողու̃ն , նա և 'ի կատարեալ սըր- բոց , և ոչ միայն 'ի սրբոց , այլ և 'ի բովանդակ յերկնայնոցն , սա- կայն մեր բնութիւն միու̃ 'ի ծբ կու- սէն՝ որչափ մարթ էր տեսանել զիւղն , տեսաք : Զոր և ինքն տ̃րն ասաց ցկոյրն , իբրև եհարց եթէ դու հաւատաս յորդի ա̃յ . և նա պա- տասխանեաց , թէ ո՞ է տ̃ր . և տ̃րն ասաց , և տեսեր զնա , և որ խօսի ընդ քեզ , նա է : Զմարմինն ա̃ծացեալ տեսանելով՝ զինքն զիւղն անտես՝ ասաց տեսանել :

Վասն այսորիկ օրիորդք սիրեցին զքեզ :

Զօրիորդս՝ զայնոսիկ կոչէ , որք 'ի մեղաց տղայացան . նա և զհրեշ- տակս ևս :

3 . Զհետ քոյ 'ի հոտ իւղոց քոց ընթաս- ցուք :

Զի որք արժանի լինին զւանինն ա̃յ Ճաշակս Ճաշակել , և զնորա հոտն առնուլ , անյագաբար զհետ հոտոյ իւղոյն ընթանան . և ոչ եր- բեք դադարեն յընթացից . թէ և

Է̃　　C　　բանն ,

բանտ , և կապանք հաստանիցէ կը_րել , ոչ դառնան . և եթէ զորդիս պարտ իցէ թողուլ . ոպ̄ և առնին իսկ յանձն առաջին մ՚րքն , որք յայսմ հատոյ եղեն հատուածեալք :

Օրհնորդացն պատմէ հարսն զայն փեսայէն զոր ինչ շնորհեաց նմա :

Հարսն՝ եկեղեցի և ժողովուրդ կո_չի . և օրհնորդք՝ հրեշտակք , և մ՚րք . որպէս աստ տղայացեալն 'ի մե_ղաց : Արդ՝ պատմէ հարսն օրհնո_ղացն . զ̄ի առաջին հարցն , և մար_գարէիցն , և արդարոցն , նա և հրեշտակաց :

Տարաւ զիս արքայ 'ի սենեակ իւր :

Մեծ յարքայութիւնն փոխեաց զիս յիւր բնակութին . վ՚ն զի փոխանակ դրախտին՝ մերոյ բուն բնակութեն , յորմէ մերժեցայ , զեւս առաւե_լագոյնն ետ ինձ :

Հարսնն պատմէ օրհնորդացն , և նոքա ա_սեն , ցնծասցուք՝ և ուրախ լիցուք 'ի քեզ . և սիրեսցուք զստինս քան զգինի :

Այսինքն ուրախակից լինին ար_դարքն՝ հեթանոսաց փրկութե . և միաբան ցնծան 'ի փրկիչն յս̄ , և սիրակից լինին միմեանց ըստեանցն

սէ_

սիրոյ, որ են պատուիրանքն այ։

Օրէորդք ֆեւային բորբոքեն ղոնուն հարսէնն։

Օրիորդս՝ զաւրեկամս փեսային քովի առէ. բազում անգամ չէ պէտ մի կնել։

Աղղուաթէ սէրեայ ղբեղ։

Այս և դաւիթ առէ, ուղիղ է տր ձը մեր։ Որդ՝ եթէ նա սի֊րեաց զմեզ՝ որ ուղիղն է, և 'ի քէն զնոյն պահանջէ սէր 'ի սիրեցելոյդ։

4. Հարսնն առէ. սէառ եմ էս, և գէ֊ղեցէկ՝ դստերք եէմ, էբրև ղվրանն կեդա֊րու, և էբրև ղխորանն սողոմնոնէ։ Մ'է հայէք յէս, զի էս եմ սևացեալ. զի խեթէ֊հայեցաւ յէս արեգակն։ Որդէք մօր էմոյ մարտեան ընդէս. և եդեալ զէս պահապան այգեստանէն, զի զայգին էմ ոչ պահեցի։

Որդ՝ եթէ բանքն յիրեաըս ոչ յա֊րին՝ դրոց մարդարեականաց, դու մի անմնելին զհաւատալին պահան֊ջեր։ Օ՛ի առէ երանելի մարդա֊պետն անեղերաց յոհան, թէ յէբ֊րայեցւոց լեզուէ 'ի հելլենացի թարգմա֊նեալ, և 'ի հելլենացւոյն ղեարէ ղբանն բոլանդակ բերել. մանաւանդ որ առ֊մեզ՝ որ 'ի յոյն լեզուէն, կամ յա֊

տօրւոյն թարգմանեալ՝ մնայ առեալ է 'ի հայ լեզու։ Նոյն և նիւսեայ գրիգոր ասէ 'ի սոյն մեկնուէ։ Բայց միտք բանիս այս է. յաւել օրիորդայն ցհարսն, որ է ցհեթանոսս հաւատացեալս, թէ ուղղութի՛ սիրեաց զքեզ զայնպիսի մեծ սէր. որդ՝ մի՛ այլ թիւրի և հեռանար յուղղութե՛ն։

Պառնոյ հարսն զոհանալով ըղփեսայէն քո՛նէ պատմէ զիւր առաջին յանցանսն և զպատիժսն՝ զոր կրեաց։ ՍԵՒ ԵՄ ԵՍ, որ գեղեցկացայն այժմ Նորայ ողորմելովն, ՊԱՏԵՐԲ ԵԷՖ։ Պատերբ ե՛ն մի՛ արգարոյն ասէ, նա և հրեշտակացն եւ զաստեղս սուրբ է կոչել. որ բազում անգամ կայ 'ի գիրս մարգարէականաց. զի զհամեստութի ունին ոգ զկանոյս. վասն զի պատկառելի է կանանց ազգ առաւել քան զարանց։ Նա որ ասէ, թէ ԻԲՐԵՒ ԶՎՐԱՆՆ ԿԵԴԱՐՈՒ, Կեդար, խաւար թարգմանի. ա՟ թէ սատանայի վրան եղէ ես, և ողորմելովն Ա՟յ՝ այժմ սողոմոնի խորան յարմարեցայ։ Զայս զառաջարէն ասէ՝ խո-

խորան Սողոմոնի , Թէ այժմ իբ-
րեւ զխորանն Սողոմոնի եղէ տուն
ա̃յ : Այսու զեկեղեցի հեթանո-
սաց գուշակէ : Ապա դարձեալ զա-
ռաջին տաճարին յուշ ածեալ՝ ՚ի
վերայ բերէ , ասելով :

5 . Մ՛ի հայիք յիս , զի ես եմ սեւացեալ :

Օմեղօք սեւութիւն ասէ . զի յան-
ցանս ըմբռնելով իմ , խեթիւ հայ-
եցաւ յիս արեգակն ա̃ծ : Այ-
սու զգաւնունէ պատիժն՝ զոր ա̃ծ
՚ի վերայ , և զմերժելն յերեսացն
ա̃յ , և ՚ի դրախտէն՝ ասէ : Նաեւ մե̃
ղք յանցման այս եղեւ :

Ասէ հարսն . Որդիք մօր իմոյ մարտեան
ընդ իս :

Իմոյ մօրն որդի՝ զսատանայ կոչէ .
զի ՚ի միոյ արարչէ ստեղծեալ էն :

Նա եդեալ զիս պահապան այգեստանին .
զի զայգին իմ ոչ պահեցի :

Այս այն է , որ ասէ , Թէ Եդ զնա
ա̃ծ ՚ի դրախտին փափկութե̃ , գործել զնա՝
և պահել : Ոչ եթէ գործոց ինչ ,
կամ պահպանութե̃ պէտս ունէր
դրախտն , ուր ա̃ծ վայելչու̃ի , և
ա̃ծային պահպանու̃ի էր . այլ գոր-
ծել զարդարու̃ի , և պահել զպատու-

ուխրանն յառաջադոյն վարդապե-
տեալ ։

6 ․ Յետ այն ասէ հարսնն ․ պատմեա ինձ
զոր սիրեաց անձն իմ ․ ո՞ւր հովուես , ո՞ւր
հանգուցանես 'ի միջօրէի ․ գուցէ լինիցիմ
իբրև զընկեցեալն յերամակս ընկերաց քոց ։
Որդ՝ պատմեալ հարսինն , թէ յոր
աղեղու՞է և 'ի սեւու՞է յորքան գե-
ղեցկու՞ի փոխեցաւ , անյիշաչար ե-
ղեալ փեսայի՛ն՝ հարսինն անօրէ-
նութե՛ , վ՛ն անչափ սիրոյն իւրոյ ․
նոյնգունակ բորբոքեալ և սա 'ի
սէր նո՛ր , և աղաչէ զփեսայն՝ պատ-
մել՝ թէ ո՛ւր է Ճանապարհն՝ որ հով-
ուեսցի է ձեռամբ հովուի՛ն՝ յան-
բաստուեր լեյան գնացեալ , որ 'ի
թշնամւոյն որսոյ անպարտելի մնալ
մարթասցէ ։ Զի միջօրէն՝ լոյս և
արև անստուե՛ր է ․ վասն այնորիկ
ասէ 'ի միջօրէի ։ Գուցէ լինիցիմ
սատանայական վարուք սեւացեալ
ընդ յառաջադոյն ընկերացեալսն
մեղօք , և օտարացեալ 'ի բարի
տեղւոյ Ճարակացն ։ Որպէս ասէ
իսկ ինքն տ՛րն 'ի սրբում աւետա-
րանին ․ Ես եմ դուռն հովուաց ․ ընդ իս ե-
թէ ոք մտցէ , կեցցէ , և որ զկնի իմ գայ ։

7 ․

7. Փեսայն ցհարսնն ասէ. եթէ ոչ ծանէ-
ցես զանձն քո, գեղեցիկդ 'ի կանայս. ել
դու զհետ գարշապարացն հօտից. և արա-
ծեա՛ զուլս քո 'ի վրանս հովուաց:

Ըստ հարցման հարսինն սպասա-
խանէ առնէ փեսայն, յիշեցուցա-
նելով զգեղեցկութիւն զոր ետ նմա,
և զգուշացուցանելով զանձնաշէր
զանձն. ըստ մարդարէին ասելոյ,
թէ հայեաց յանձն քո: Որդ՝ զայն
ասէ, թէ յիշեա՛ զառաջին պար-
գևսն, զի զդրախտն, և զխոստումն՝
զոր առեալ ապականեցեր մեղօք,
և դարձեալ ողորմութիւն գտեր.
ոչ 'ի բարի գործոցն՝ զոր արարեր
դու, այլ 'ի ձեռն իմ, որ հատու-
ցանող եղէ ընդ քեզ՝ քոյ մեղացն.
ոմ՟ ասէ մարդարէն, թէ Տր՟ հատու-
ցանող ընդ էՆ: Այլ եթէ զայս ամ՟
զմտաւ ոչ ածես, և ոչ հայիս 'ի
քեզ, և ոչ խոնարհեցուցանես ըզ-
քեզ յամբարտաւանութենէ քոյ, և
կամ 'ի ձեռն ուղիղ վարուց քոյ,
և կամ այլ բարի գործոց քոյ, զոր
'ի դառնալդ քո 'ի չարէն, հպար-
տանաս որպէս Նախահայրն քո, և
յայսմ հետէ ոչ գտաս բարւոք.
յա-

յաղագս այնորիկ եղանես 'ի հօտէս իմմէ, որք աւրով, և կաթուածք պտղաբերին. և փոխանակ արօտի իմոյ՝ խառնիս յուլոցն ջոկս. որ ամենևին անպտուղ են. զի ոչ տար, և ոչ կիթ ունին. որք օտարացեալ են 'ի բարուք հովուէի վրանէս. եղեալ ընդ այլ գարշապարս օտար հօտից, որ կարծին հօտ գոլ՝ և ոչ են հօտ. և ապա այլ ոչ ես գտանես զբարի հովիւն : Արդ՝ զգուշացի՛ր զփրկութի՛ն՝ զոր արարի քեզ, ընդ կառացն և ընդ երիվարացն աներևոյթ փարաւոնին պատերազմելովն իմով անարգել զօրութ̃ես. այս է որ ասէ :

8. Ձիոյն իմոյ 'ի կառսն փարաւոնի նմանեցուցի զքեզ մերձաւոր իմ :

Սէ ընկղմեալ զկառս նորա, մերձաւոր իմ արարի, անցուցեալ ընդ ծով մեղաց : Արդ՝ ես 'ի համառօտն եմ 'ի փութալ. և թէ երկայն կամիս լսել զբանս, երթ առ նիւսացին գրիգոր :

9. Օրէորդքն ցհարանն ասէն :

Այժմիքն բարեկամք փեսային, որ են առաքեալք և մարգարէք, և

վար-

վարդապետք, որ համապազ խրա-
տեն զմեզ զմտաւ ածել զվերջա-
ւորն ստեղծուածս մեր, թէ քանի
քան զառաջինն աւաւելագոյն ու-
նի. առակելով ՚ի տատրակ, ՚ի մա-
նեակ, յասկի, և յարծաթ, և ՚ի
ձիս :

Օրինակ է գեղեցկագոյն ծնօղք ու եէրբն ըն-
տատրակին :

Ո՛վ ի սքանչելի է հաւն այն. և ե-
թէ դէպ լինի վարուժանին իւր
մեռանել, ոչ երբէք միաւորի ընդ-
այլ ումեք ՚ի կյիւրոցն մինչև ՚ի վախ-
ճան իւր : Որդ՝ զծնօտն գովելով
ձևով տատրակին՝ զայս ցուցանէ,
թէ երես և պատկեր ես իմ. և
սրբութ՟ ես զարդարեալ ոմ՟ զտատ-
րակ. և ահ պատուիրանաց նորա
զարդարեալ է զքեզ իբրև զմա-
նեակ ՚ի պարանոցի, սուրբ և մա-
քուր ՚ի մեղաց ոմ՟ զոսկի և զար-
ծաթ : Նոյնու՝ նմանեալ, և ոչ
ճշմարիտ արծաթ, և ոսկի : Ո՛վ ի
արտաքոյ է մնաց մարդոյ այն գե-
ղեցկութին հոգևոր, որով զարդա-
րեալն է մարդն. և համեստարան
իմ իբրև զձի. որ և միայն պօղոսի
նմա-

նմանի , և նորայոյն հոգւով , որ զբանսն անճառ լուծաւ ։ Արդ՝ զայս ասացին օրիորդքն , վկայելով փեսային բանից , որ ձիոյն իւրոյ՝ որ ընդ փարաւոնի մարտեաւ , նմանեցոյց զառաքինութ̅ հարսնն ։ Սոքա առաւել ևս ցուցին պարգևաց հասանել , թէ ոչ միայն 'ի քեզ հանգչի ոգ̅ 'ի ձին , եթէ բարի գործովք զարդարիս , այլ և 'ի գլուխ իւր ընդունի զքեզ · վ̅ն այնր ասէ ։

11 · Մ՚ինչև արքայ 'ի գիրկս իւր ընկալցի զքեզ ։

Այլ ինձ այսպէս թուի , թէ կատարեալ մեկնութե̅ բանիցս հասու ոչ եղէր , վասն որոյ հարկիմ դարձեալ համառօտել ։

Ձիոյն իմոյ 'ի կառսն փարաւոնի նմանեցուցի զքեզ՝ մերձաւոր իմ ։

Արդ՝ հարցանելի է վ̅ն ձիոյն · եթէ քո իցէ , զիարդ իցէ 'ի կառսն փարաւոնի · և կամ ո՞վ իցէ փարաւոն ։ Լո՛ւր , և մեկնեցից ։ Ձիոյ է մարդկային բնութիւն · վասն զի հանգստարան և բնակարան էր ա̅ծութեն , որ պարծէր խրոխտալով իբրև զձի խստերախ , և դարձեալ

ձեալ 'ի ձեռն մեղացն եղև կառա-
վար սատանայի, որ առաքի 'ի փա-
րաւոն. ընդ որում փրկիչն յո̅ մար-
տեաւ խաչին. որ օրինակ էր խա-
չին՝ գաւազանն մովսէսի, որ եհերձ
զծովն. և ընկղմեաց զփարաւոն.
յ̅ն զսատանայ. և զիւր սպատկերն,
որ իբրև զձի կապեալ էր 'ի կառա
նի̅ր, դարձեալ յինքն ամփոփեաց։
Այս է, որ ասէ, Զերծոյն ինոյ 'ի ձեռանէ
փարաւոնէ։ Վասն զի կարօղ զօրու-
թեան մ̅ծութեան կործանեաց զփա-
րաւոնի կառսն։ Նաև դարձեալ.
երևոյթ ձին, որ իբրև զթագա-
ւորական խիկ զարդարեալ էր, և 'ի
կառսն փարաւոնի լծեալ էր, իմ էր
և այն. զի խմ է ա̅մ սանձուած։
Արդ՝ այն զարդարեալ ձիոյն իմոյ
նմանեցուցից զքեզ. զոր վարեցի
բանուք. ում ասէինն, փախիցուք
յերեսաց նէլի։ Նոյնպէս և զար-
դարեալ մանեկաւ, և որով համա-
րեաց 'ի կարգի, արար իւր երի-
վար, ընկղմեալ զաներևոյթ փա-
րաւոնն 'ի ծովն հրեղէն, և զքեզ
այնչափ պերճացոյց առաքինութ̅բ
առեալ յինքն, որ նորա երիվար
էիր,

Ելիր , որ փոխանակ նստելոյն 'ի վե-
րայ քո՝'ի գիրկս իւր ընկալաւ ըզ-
քեզ . մանաւանդ թէ 'ի վերայ ու-
սոց իւր եբարձ . ո՟պ ասէ տ՟րն յա-
ւետարանին :

12 . Ճարմնն ցէոր անձն , և ցփեայն
ամէ . Նարդոս իմ բուրեաց զհոտ : Ծր-
րարս ստաշխա եղբօրորդին իմ . 'ի մէջ ըս-
տեանց իմոց հանգիցէ : 13 . Ողկոյզ ծաղ-
կեալ եղբօրորդին իմ ինձ 'ի մէջ այգես-
տանեաց Էնգադայ :

Պարարտ է այն 'ի բերս այգեաց .
Նախ առաջին զայս իմա , թէ որ
փեսայն կոչի , նոյն և եղբօրորդի
կոչի . զի բանն ա՟ծ 'ի հրէից մարմ-
նացաւ . և հրեայք և հեթանոսք
եղբարք են . վ՟ա զի յադամայ են
երկոքին :

Ծրարս ստաշխա եղբօրորդին իմ 'ի մէջ
ստեանց իմոց հանգիցէ :

Այս այն է , որ ասէ յաւետարա-
նին , թէ Որ հաւատայ յիս , կնքեաց ,
թէ ա՟ծ ճշմարիտ է : Արդ՝ որ 'ի նոյն
հաւատոյ , և զնորայն պատուէ-
րանն , և զերկխուղն 'ի սիրտս իւր
ծրարեալ ժողովէ , իբրև զպատ-
ուական իւղ , և զանուշահոտ

Է խունկ

խունկ է . մանաւանդ որ այլոց ևս
տարածանէ զհոտն , որպէս առա-
քեալն ասէ , Թէ Հոտ անոյշ եմք քրի-
ստոսի 'ի մէջ փրկելոցն , և 'ի մէջ կորո-
ւելոցն : Նոյն և կայ կենդանւոյն՝ որ
յանոյշ հոտոյն մեռանի . որպէս և մե-
ղաւորք՝ որ ոչ ընդունին զխորհրդա-
պետութիւն անուշահոտ գրոց , որ 'ի
մէջ ստեանցն համդեալ է , մն 'ի
սիրտս սրբոց : Նա որք ընդունին ,
կենաց 'ի կեանս լինին փոփոխումն ,
և որք ոչն ընդունին , 'ի մահուանէ
'ի մահ : Որպէս ասէր մեծ նահա-
տակն քրի Իգնատիոս , Թէ Օ՛ քա-
ջես կրեմ : Օ՛ որ լուեալ տրայիանո-
սի , ասաց , Թէ զԻգնատիոս՝ որ ա-
սաց զխաչեալն յինքն ունել , կա-
պել հրամայեմ , որ խաչեալն ևս
զինի դորա այրեսցի :

14 . Փեսայն ցհարսն ասէ : Ահաւասիկ
ես մերձաւոր իմ . ահաւասիկ ես գեղե-
ցիկ իմ . աչք քո աղաւնիք :

Նաև որովհետև մերձեցար յիս , և
օտարացար 'ի մեղաց , զառաջին
գեղեցկութիւն՝ որ 'ի դրախտին ու-
նէիր , ստացար . և ոչ միայն այսմ
պարգևի հասեր , այլ և աղաւնոյ

աչս ստացար յիս նայելովդ , ո՛ ըղ-
հոգւոյն սրբոյ : Զի զոր ինչ հայի
ոք , 'ի նոյն փոխի միոք : Ո՛րդ՝ ե-
թէ ոչ յերկարանամ՝ 'ի բանս մեկ-
նութեան , գիտեմ եթէ զհամառօտն
եմ յախորժել :

15 . Հարքն ցխէտոյն աւէ : Աչ հաւադէն
Եղբօրորդէնէմ , այլ և գեղեցիկ . առ հո-
վոյս մեր հովանաւորք : 16 . Գիերանք
տանց մերոց մայրք . տախտակամածք մեր նոճք :
Ցուցեալ փեսայն զդուոյն այն
մաքուր ոգ̅ զաղաւնի , վկայէ հար-
սին , թէ զոր ոչ կարէի յայնժամ
տեսանել՝ մինչ ոչն էի յաղաւնոյ
բնութիւն փոխեալ , արդ աղաւնի
լեալ՝ տեսանեմ զեղբօրորդիդ իմ :
Զի թէպէտ և եղբօրորդի իմ ե-
ղեր՝ մարմին առեալ զիմ զաղեղու-
թիւն , այլ և գեղեցիկ իմ ես մ̅ն
խառնելոյ ա̅ծութեդ ընդ իմս .
ո̅ր ասէ մարգարէն , Գեղեցիկ տե-
սանելով քան զա̅ն որդիս մարդկան : Աչ-
փահոյս մեր հովանաւորք : Այսինքն ,
հովանի մեզ և տուն՝ զք̅ո անուա-
նէ տնօրէնութիւն : Գերանք տանց մե-
րոց մայրք : Նոճիքն և անուշահոտ
են փայտքն այն . և պատշաճ առ
'ի

'ի շինուած . ո՛չ եւ մարմին ոն մե-
րոյ պատշաճի շինել զտունս զայս ,
եւ կամ զմեզ յինքեանս մաքրել 'ի
բնակել . որոյ տունն մեք իսկ եմք՝
ըստ պօղոսի :

---

## Գլ. Ը. :

1 . Փեսայն չէր անջնն՝ եւ չհարսն առէ :

Նաեւ յայտնաբանէ փեսայն զիւր գեղեցկութի , զոր հարսինն հոգւոյ ակամբ ընդ աղօտ տեսեալ , պատմեաց զանտեսանելին , եւ զանպատմելին :

Նա ծաղիկ դաշտաց շուշան հովտաց :

Ո զարմանալի էրս . ոչ մարմինն անօրինեալ ոն , այնու զանտեսանելին մեզ 'ի տեսութի ած , նոյնպէս ջանայ ցուցանել զգարեզարդութին՝ զոր զգեցաւ երկիր՝ զքն ընդունելով . թէ ոչ երկրի տեսութի ծաղկովք պսակեալ՝ զուարճացուցանէ զակն տեսողաց , եւ շուշան՝ որ 'ի հովիտս , այնպէս որք որպէս զգաստս տարածանէն զգլխ խուրեանց լինէ 'ի բնակութի , եւ իւրեւ զհովիտս հորդին լինե , փթթին

զինև առ 'ի ցնծութեն անճառելի
տեսողաց · և ոչ միայն այս , այլ

2 · ՈՐՊԷՍ ՇՈՒՇԱՆ 'Ի ՄԷՋ ՓՇՈՑ , ԱՅՆՊԷՍ
ՄԵՐՁԱՒՈՐՆ ԻՄ 'Ի ՄԷՋ ԴՍՏԵՐԱՑ :

Եթէ ոչ ես միայն փեսայս գեղե-
ցիկ այսմ ծաղկաց օրինակաւ , այլ
և որ յիս մերձ է հարսնն , 'ի մէջ
դստերաց այնպէս վայելչանայ՝ ոպ
շուշան 'ի մէջ փշոց : Դստերս ,
զհարսնացեալսն սատանայի ասէ ·
զտ̄ զմեղաւորս : Փշոցս՝ մեկնութե
չեն պէտք , յիշելով զառակս փշոյն
և զորոմնն յաւետարանին · զոր
տ̄րն ոչ հրամայեաց հանել 'ի միջոյ
ցորենոյն մինչև 'ի ժամանակն հըն-
ձոց , որ է կատարած աշխարհիս :
Այլ երգ երգոցս կարևոր և վայ-
ելուչ համարեցաւ զլինելն արդա-
րոց 'ի մէջ մեղաւորաց : Մի , զի
առաւել ևս պայծառ երևեսցին
վարք արդարոցն , որ ընտրի պատ-
ուականն 'ի մէջ անարգաց : Եւ
երկրորդ , զի Թերևս դարձցին
փուշքն 'ի շուշան , տեսանելով ըզ-
նոցայն պիտանութի :

3 · ՀԱՐՍՆՆ ՑՓԵՍԱՅՆ ԱՍԷ : ԻԲՐԵՒ ԽՆՁՈՐ
'Ի ՓԱՅՏԱՆՏԱՌԻ , ԱՅՆՊԷՍ ԵՂԲՕՐՈՐԴԻՆ ԻՄ
'Ի

'ի ՎԷՋ դասերոյ :

Տես զայն, զի աստիճան աստիճան
յառնելու 'ի գովուն փեսայլին : Ո որ
յառաջն շուշան և ծաղիկ անուշա֊
նեաց, այժմ խնձոր : Ո ի ծաղկին
զաչս միայն զուարճացուցանէ .
բայց խնձորն՝ տեսակաւ զաչսն,
հոտով զքիմսն, և ապա 'ի զօրուն
կերակրոյ գայ : Այս զոր անդ փուշ֊
ասաց, սառ՝ անստատ . որ անստա֊
ւացեալ են մեզօք մարդկիկ . որպէս
ասէ, թէ Աշ պաշտօնեայ չէս խող ան֊
դամէ : Այս զգաստոյս՝ զանօրէն հարց
որդկան ասէ :

Ընդ հովանեաւ նորա ցանկացայ նստել,
և նստայ . և պտուղ նորա քաղցրացաւ 'ի
կոկորդ իմ :

Զանի այս շատ պէտս մեկնութե .
որք յանստատս և 'ի ծառս վարսա֊
ւորս ձօնեալք, արդ զխնձորն ծա֊
նուցեալ՝ որ 'ի կենաց փայտէն մեզ
տուեալ, փափաքմամբ 'ի հովանիս
նորա ապաւինիմք, և անշարժ հաս֊
տատուն կամիմք : Աստեղն՝
զանյառնելին 'ի թիւր վարդապե֊
տութեանն ասէ : Այս պտուղ նո֊
րա քաղցրացաւ 'ի կոկորդի իմում : Բա֊
նու՝

նու՝ թէ զխորհուրդն կենարար , և զպտուղն որ 'ի փայտէն կենաց իմանաս . և թէ զբանս որ յա̄ծային բերանոյն մեզ տուաւ , երկրպագին լսին , ա̄ք մարգարէին , թէ Ո՛ քաղցր են 'ի քիմս իմ բանք քո՛ քան զմեղր բերանոյ իմոյ ։

Յ՚Երգերգոցն ասէ Սողոմոն ։ Տարայք զիս 'ի տուն գինւոյ ։

Ա՛սէ , թէ ոչ յաղթիմ բացուստ 'ի բաց բերմամբ 'ի բաժակէն , կամ 'ի բանիցն ա̄ծայնոց . զի անյագցանկութի ունիմ , և անաշխատելի ընթացս . արդ՝ տարէք զիս 'ի տունն իսկ այսմ բարութեց . զի չունիմ այնպիսի փափագութի առ փեսայն , և առ պատուիրանս նորա՝ եթէ ձեօք տեսից , և լուայց . և այնու յագեցայց ։ Գինին՝ զուարթութիւն առիթ է . և յայս կեանս միասցութի սիրեն առնել տրամութե . մ՚ն այնորիկ գինի կոչէ զպարգևացըն ա̄յ ձիր ։

Արգելեցէ՛ք 'ի Հերայ եմ սէր ։

Մ՚ի յարմարման բանից 'ի խնդիր զինչ . զպատճառաւն միայն հաւանեալ , զոր յառաջ ասացի ։ Արա-

գէ-

գեղեցիկն այսպէս լսի. որպ յայլում տեղւոջ ասէ. Օրհնեցէք զՏէրն: Ասէր՝ բծ է. վ զի անունն ոչ սէր ձայնայի. որպ առաքեալ ասէ, թէ ԱԾ սէր է. և որ կայ 'ի սէրն, ընակեալ է յԱծ, և Ած 'ի նմա: Որդ՝ ուղակէ հայրանն զբարեկամն փեսային՝ քեռեալ սիրով փեսային՝ մի՝ հեռաւորութբ պատգամաւորիւ, որպ յառաջ մարգարէքն, այլ առաքելոբար մուծանել 'ի տունն քի, զոր գինի կոչեաց. զի տեսութբ երեսաց առաւել բորբոքի սէր սիրեցելոյն յերկոցունց: Այս է՝ կարգեցէք 'ի վէ իմ սէր:

5. Նա հաստատեցէք զիս իւղովք:

Իւղ՝ ողորմութն կոչի. որդ՝ զայս ասէ, թէ 'ի տեսանելն զփեսայն՝ առաւել ծանեայց ոգւոյն ակմն բացմամբ զանչափ ողորմութն՝ զոր մեզ արար, և ես հաստատեցայց, և ողորմութբ պատեայց. որպ ասէ ածաբան:

Բոլորեցէք զիս խնձորովք:

Խնձոր՝ զբարի գործոց գեղեցկութիւն ասէ: Զի որպ խնձոր տեսութբն, և հոտովն յառաջ ևս քան

զձա

զՃաշակելն ախորժելի է , նոյնպէս զմնացան առաքինութեն տեսակս զուարթացուցանէ զտեսօղս :

ՍԱՆՈՒՇ ԽԱՆԴԱՂԱՏԱՆՔ ԵՆ ՍԻՐՈՅ :

Ո՛րչափ համդիսիւ սէրն , որ առ սրտամ բնակեաց 'ի ձեռն քոյ դալա-տեամն , որ անյագ եղեն , որ զայն համ սիրոյն Ճաշակեցին . զի ո՛չ բաւականացան ոչ՛ապէս նեղութեքն զոր կրեցին՝ կամ 'ի սատանայէ , կամ 'ի մարդկանէ , այլ և յան-ձանց ևս անբաւ յաւելլն նեղու-թիս . մարգարէին դաւթի նմա-նեալ , որ 'ի յայլոց նեղութեց վերայ , ասաց , թէ ՇՐՋԵՑԱՆ ԶԻՆԵՒ ԵՐԿՈՒՆՔ ՄԱՀՈՒ , ԵՒ ՎԻՇՏՔ ԴԺՈԽՈՑ ԳՏԻՆ ԶԻՍ . յաւել ևս զնեղութի անձին իւրոյ . որպ ասէ , ՆԵՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՎՇՏԱԿՈՒԹԻՒՆ ԳՏԻ : Սրբ՛ ո՛ր լուսաւորիչն , և մեծն պօղոս , և այլ սրբ՛ք՝ նոցին նմանք , պարգևս զնեղութիւն՝ որ վ՛ն քոյ , համարեցին . զոր օրինակ խնձորս . զոր և ասէր ցմ՛րն գրիգոր՝ տրդատ , թէ այդ է ուրախութիւն : Նաև նա ա-սէ , այս՛ այս է ուրախութիւն :

6 . ԱՀԵԱԿ ՆՈՐԱ 'Ի ՎԵՐԱՅ ԳԼԽՈՅ ԻՄՈՅ . ԵՒ ԱՋ ՆՈՐԱ ՊԱՏԻՑԷ ԶԻՆԵՒ :

Ոսյն

Օ սոյն զայս յայլում տեղի նմին երկրորդէ ։ Արքայութե կենաց յաշխէ . և յաւէտէ իւրմէ փառք և մեծութէ ։ Որդ՝ զայս ասէ, թէ չէ իմ սիրոյ՝ և համարձակի սրտիս մեք լցուած, բայց միայն ՚ի նա յարիլ, և զնա տեսանել . թէ և ոչ ամս փորձուք նեղուեց ՚ի վերայ եկեսցեն, միայն զաջն՝ և զահեակն ինձ հովանի և պահապան կալցի ։

7 . Հարանն ցորերորդն ասէ ։

Ընկորդք՝ հրեշտակք կոչին . և մարդիկ՝ որք հրեշտակացան ։

Արդմեցուցեց չէին դասէրք էէփ՝ ՚ի նշրութեա, և յաւիտենութեա անդառնալի, եթէ յանձնէցէք, պարթեւանէք պէտըն՝ մնչև կամեայէ ։

Անդաստան՝ աշխարհս կոչի . նա և երկինք . և զօրութի և ուժգնութիւն անդաստանի՝ մծ, որով հաստատեցաւ աշխարհ, և երկինք . և կայ սեղմեալ և աղխեալ անշարժ զօրութեամբն և ուժգնութե անդաստանի, ճբ, ճդ ։ Նա և հրեշտակք, և մարդիկք, որ յանդաստանս են բնակեալ, երդմամբն յիշին ։ Որդ՝ յայն զօրութի երդմնեցուցանեմ յաս-

յառնել և աղօթել, և զարթու-
ցանել զնոյն ինքն զբովանդակ
սէրն զքո · զի զկամս իւր ցուցէ
'ի մեզ : Այս է՝ զոր ինքն տրն ա-
ղօթել հրամայեաց · Եղիցին ասէ
կամք քո որպէս յերկինս, և յերկրի : Որդ՝
որք երդմնեցուցանէինն դստերք
վերինն Երուսաղէմի՝ են հրեշտակք,
և սրբք որ յերկրէս :

Ը · Լուեալ զձայն փեսային՝ հարսն, ասէ ·
Ձայն եղբօրորդւոյ իմոյ :

Տես աւանիկ, որ յառաջ քան ըզ-
խոստովանելն բերանով՝ զծածուկ-
սրն ճանաչէ, սակայն մինչ պաղա-
տանաց, զի և այլք ծանիցեն զար-
դարութի՛ նորա : Ո՛չ թէ և ողոր-
մած է, այլ՝ արդարադատ : Ո՛չ ձայ-
նելն առ նա, և զփափաքանօք պա-
ղատելն՝ պարտուցն մեր ՝ի ձայրումն
համարի : Որդ՝ յաղաչել հարսինն,
այսինքն, եկեղեցւոյ որ 'ի հեթանո-
սաց՝ զօրինողմն, տանել 'ի տուն
գինւոյ · և մի՛ որպէս յանցաւորայ՝
պատգամաւ՝ արտաքոյ փեսային ե-
րեսաց · և յերդմնեցուցանելն ըզ-
դստերս Եմի՝ զարթուցանել ըզ-
սէրն, մինչև կատարեսցին կամք նո-
րա.

բարիք առ մարդիկ ․ ոչ միայն բա-
րեխօսացն աղաչանաց փեսայն ․
այլ լռեալ զաղաչողին մաղթանս ,
ձայնեաց նա զհաշտումն ․ և ընթա-
ցաւ ընդ առաջ ․ որպէս և յաւետարա-
նին ասէ իսկ առակաւ անառակ
որդւոյն ։ Որ ինքն շրջի խնդրել
զարժանաւորսն ․ և որք սիրեն՝ և
խնդրեն զկամս նր , ծանուցեալ
յառաջատեսութեամբն ։ Հարցմանն
ասէ ։

Զայն եղբօրորդւոյն իմոյ ․ ահաւասիկ եկն
սա վաղվաղելով՝ ի վերայ լերանց , խայտալով
՚ի վերայ բլրոց ։

Զայն ասէ , որ ՚ի մարգարէիցն
առ մեզ լուր ։ Որպէս լուաք , այնպէս
և տեսաք ․ յս զբանն այ ․ որ բազում
մասամբք , և բազում օրինակօք խօսեցաւ
ընդ հարս մեր մարգարէիւք ․ ՚ի վախճան
աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդ-
ւովն ։ Այս է որ ասէ ․ Ահա սա եկն
վաղելով՝ ի վր լերանց , խայտալով՝ ի վե-
րայ բլրոց ։ Լերինք , և բլուրք՝ բլու-
նութիւնք սատանայի կոչին ․ զոր
առ ոտն կոխեաց զաւատեամբն իւ-
րով ․ ըստ ասելոյ մարգարէին , թէ
Լերինք և բլուրք խաղասցեն , սատանէ-
ցան ․

ցան . և դրդուածն հալածան ընտրան ։ Նա և զնոյն իշխանութիւն՝ առաքելոյն եա տըրն 'ի վերայ լերանց . ոչ միայն խայտալ 'ի վերայ լեռնացեալ մեղացն , այլ և 'ի ծով առաքելոյ ։

Գ . Նման է եղբօրորդին իմ այծեման , կամ որթու եղանց 'ի վերայ լերանց բեթելայ ։

Վասն տեսանողութեան նմանեցուցանէ զեղբօրորդին այծեման . թէպէտ և չէ կարի պատշաճ . զի նա յառաջ քան զաներեւանելն ևս տեսանէ զինչ առ մարդումն . ըստ ասելոյն , թէ Մինչչև տեղծեալ էր զքեզ յորովայնէ՝ գիտեմ զքեզ ։ Այլ սակայն զի յանտառունս քան զայծեամն չիք տեսանող , մա այնորիկ քան տեսանողութեան օրինակէ զնա ։ Իսկ զի եղն՝ օձի սատակիչ է . ոտն և տըրն՝ աներևոյթ օձին ։ Ի վերայ լերանց բեթելայ ։ Ըստ եբրայեցւոց լեզուին բեթէլ՝ երկինք կոչի . յոր և հանէ զփրկեալսն յօձէն ։

Հարսնանշան տայ զնեղայէն՝ օրինակացն . ահաւասիկ՝ սա եկաց զկնի որմոյն մերոյ ։

Որմ՝ զմարմինն ասէ , որ 'ի կուսէն ։ Յառնել ընդ պատուհանն՝ զմարդա֊

 րէսն ։

րեմն : Հայեցեալ ընդ վանդակապատն՝
զօրէնսն : Այսինքն թէ յառաջ
նոքօք զլոյս ա̄ծութեն 'ի մեզ նշո-
ղեաց , ապա եկաւորութ̄ն մարմնով
'ի կուսէն :

10. Պատասխանի ետ եղբօրորդին իմ
ինչ , եւ ասէ . արի էջ մերձաւոր իմ , գեղե-
ցիկ իմ , աղաւնի իմ :

Այս կոչն է , որ ք̄սիւ եղեւ , որ ա-
սաց : Եկայք առ իս ա̄մ աշխատեալք .
եւ որ զկնի : Իսկ գեղեցիկ , վասն ա-
ւազանի լուսացմանն ասէ : Աղաւ-
նի , վասն հոգւոյն զգեցմանն : Մեր-
ձաւոր իմ , վասն զի մարմնակից քո
եղաք :

11. Զան զի ահաւասիկ ձմեռն էանց :
Ձմեռն՝ զկռապաշտութիւն ասէ , որ
տարածեալ էր 'ի վերայ երկրի :
Իսկ եւս , յ̄ն գալստեամբ եղբօր-
որդւոյն , որ է ք̄ս : Այսպէս , անձ-
րեւ անցին , եւ գնացեալ մեկնեցան . ըղ-
խաբէութիւն սատանայի նշանակէ .
որ իբրեւ զւարի կերպարանի . եւ
կորստեան անձրեւ է . ո̄պ առ ջրհե-
ղեղաւն . յորմէ հալածական գնա-
ցին դ̄եքն . այս է՝ գնացեալ մեկնեցան :

12. Ծաղիկք երեւեցան յերկրի մերում .

Ժամանակ յատանելոյ եհաս :

Այսու զգեղեցկութի գարնանն նշանակէ, որ քնին եղև 'ի ձմերայնոյն հալածմանն. և ծաղիկ, զարդարոց բազմութին առաքինութեք և ա̃ծպաշտութե̃ն ծաղկոցովք կոչէ : Ժամանակ յատանելոյ եհաս. կտրել, և յօտել զպղծս 'ի սրբոյ :

Ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում :

Որպէս հաւք 'ի ժամ գարնայնոյն արօրանան, և տարածանին ընդ երկիր, նոյնպէս և 'ի գալ հոգևոր գարնայնոյս ցնծան սի̃քն. մանաւանդ առաքեալք և մարգարէք, և վարդապետք, և որ նոցա քարոզութ̃ հրեշտակային և հոգևոր երգովք օրհնեն զա̃ծ 'ի գիշերի և 'ի տուընջեան : Այս է, Ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում :

13. Այգիք ծաղկեցին, և ետուն ըն-հոտ իւրեանց :

Այգի՝ զհաւատացեալս անուանեաց. որք ծաղկեցան այլ և այլ և պէսպէս գունովք՝ և պտղովք, և հոտովք, այն մարտիրոսութ̃. այն՝ զանազան առաքինութ̃ք. այն՝ բա-

բարեգործութիւնք ։

Ահա՛ եկ Տէրյաւար եմ, գեղեցիկ եմ, ա-
ղուանի եմ, կատարեալ եմ ։

Զնոյն զառաջին բանս կրկնեաց՝
հաստատելով զնոր կոչումն, թէ
ոչ 'ի ձեռն պատուհանին և վան-
դակապատին, իբր մարգարէիւք,
կամ օրինօք . այլ խոնարհ խօսի կոչ-
մամբս արի՛ եկ ։ Եւ կրկնելով ըզ-
բանսն՝ եցոյց թէ յարքայութեան Ճա-
նապարհն զկայ չառնու, որչափ 'ի
մարմնի է . ըստ ասելոյն Տն, Ո՛ր-
արէ՛ք գնասցո՛ւք աստի, և ածարանն
մեկնելոյն ։

14 . Ա՛ւա՛ եկ աղաւնի իմ ընդ հովանեաւ
վիմի, մերձ 'ի պատուար պարսպին ։

Տե՛ս, թէպէտ և աղաւնի եղև,
այլ հանապազ պահանջէ յաւե-
լուլ եւ 'ի մաքրութի, և չհամարել
զինքն 'ի կատարեալ մաքրութեն ։ Եւ
որ համարեցի էակ, զգո՛յշ կայցէ, գուցէ
անկանիցի ։

Ընդ հովանեաւ վիմի ։ Վէմ, զՔս
կոչէ . զի առաքեալ ասէ, թէ Վէմն
էր ինքն Քս ։ Եւ պարիսպ, զպա-
տուիրանն ասէ . որ կայ 'ի գիրս ։
Եւ՝ Հրամայէ այսուհետև աւե-

տարմանաւն վարել, և նոյա քարո-
զութ՟, և ոչ օրինօքն։ Որում վկայէ
առաքեալ, թէ Խափանեալ էք ՚ի Քսէ,
որ օրէնօքն արդարանայք։

Նա մերձ ՚ի պատուհան պարսպէդ։

Թէ՝ և զաւետարանականին պահե-
լոյն, չես հեռի յօրինացն. վասն
զի լրումն օրինացն Քս է, ասէ առա-
քեալ։ Եւ ինքն տէրն ասէ, թէ ՚ի
լնուլ եկի զօրէնս. այսու ցուցանէ՝
թէ թերի էին օրէնքն։ Արդ՝ զօ-
վանդակ լցեալն կատարելով քոյ՝
մերձիս ՚ի պարիսպն, Քս յօրէնսն։

Ցոյց ինձ զդէմս քո, և լսելի արա ինձ
զբարբառ քո. զի ձայն քո քաղցր
է, և դէմք քո գեղեցիկ։

Օ այս՝ երգ երգոցս փեսային բա-
նիւ ասէ. և Նիւսացին Գրիգոր՝
բաժանէ զայս, և հարսինն բանիւ
ասէ. որում և մեք հաւանիմք։
Արդ՝ աղաւնի լեալ հարսինն, և
զկէսն խմացեալ, որ է քո, աղաչէ,
ցոյց ինձ զդէմս քո. և մի ևս ընդ-
ես մարգարէիւք, և օրինօք խօսիր.
այլ որչափ տեսանելի ես մարմնա-
ւորաց, ցոյց ինձ երևելապէս ըզ-
դէմս քո, զի տեսից, և յագեցայց
յե-

յերկնել փառաց քոց . և որչափ տամկին լսելիք մարդկան՝ լսելն ինձ զձայն քո . զի ընդ հովանեաւ աւետարանական քաղցրութեդ արածեալ , զօտարի հովուի զհետ ոչ երթայց . զի թէ Ը պատուհանն , յի Ը մարգարէից հոյլն՝ այսքան ախորժելի էր քո ձայնդ , ապա որչափ թէ դիմաց քոյ արժանացայց՝ լսել զփրկութեան խնդ աւետեաց լուր :

15 . Յերգ երգոցն գլխոյն ասէ . Կալարուք մեզ աղուեսս փոքրկունս որ ապականեն զայգիս . զի այգիք մեր ծաղկեալ են :

Ո այս զհրեշտակսն ասէ , որ հարկաւոր հոգիքն են , առաքեալք 'ի սպասաւորութիւն մարդկան : Նու դարձեալ՝ ես առաւել զառաքեալսն ասէ , որ որսորդք եղեն ընդհանուր աշխարհաց : Վասն զի նոքա նախ զաղուէսն որսացին առ 'ի կորուստ , հալածելով յայգեացն : Աղուէս , զսատանայ կոչէ . և այգիք՝ զեկեղեցի , որ են հաւատացելոց անձինք , զորս առաքեալքն արտաքս կորզեցին 'ի ժանեաց աղուէսուն , որ հակառակն էր Ճշմար_

տուեալսն. զի և 'ի մահուանէ 'ի կենաց փոխեցին : Ո՛ր և ասաց իսկ Տէրն , յորժամ դարձան առաքեալքն խնդութեամբ , և ասեն , Տէր , և դևք հնազանդէին մեզ յանուն քո . ասէ , Ահա ետու ձեզ իշխանութիւն կոխել զօձս , և զկարիճս , և զամ զօրութիւն թշնամւոյն : Նաև որ յայլ ժամու՝ լեառն , և վիմայ , և իշխան կոչէ զսատանայ , ասա աղուէս՝ և փոքր , յաղագս ահարկու զօրութեց առաքելոյն , զոր ընկալան 'ի վերայ նոցա՝ ասէ :

16 . Հարսն ասէ զայս էնք . Եղբօրորդին իմ ինձ , և ես նմա . որ հովուէին 'ի մէջ շուշանաց . մինչև տիւն լուսաւորեսցէ , և շարժեսցին ստուերք :

Հարսինն տեսեալ զինքն յորսոյ աղուեսուն ազատեալ , խնդամիտութեամբ տայ զինքն եղբօրորդին , որ զմիջնորմն ցանկոյն քակեաց : Նա քանզի ոչ ես որմով օրինացն 'ի միաւորութենէ փափաքելոյն որոշի , ապա ասէ , թէ ես եղբօրորդւոյն իմոյ , և եղբօրորդին իմ ինձ : Նա դարձեալ , թէ որովհետև ճաշակեցի 'ի սիրոյ նորա , և տեսի զցան_

կա_

կալի դէմնն , և լուայ զախորժելի զձայնն , ես 'ի նմա , և նա յիս · տուր՝ յայսմ հետէ ոչ կարէ երկ_ րային ցանկալի , կամ կարիք որո_ շել զիս 'ի նմանէ : Այլ և եղև իսկ , և տեսաք զայս 'ի մարտիրոսացն՝ և 'ի ճգնաւորացն հանդէսս : Այլ ա_ ռաքեալ տէ , թէ Ո՞վ մեկնեսցէ զմեզ 'ի սիրոյն ք՟ի , նեղութի՟ , թէ անձկութի՟ , թէ հալածանք · և որ 'ի կարգին է :

17 · Որ հովուէին 'ի մէջ շուշանաց · մին_ չև տիւն լուսաւորեսցի · և շարժեսցին ստուերք :

Նա յինքն թէ ոչ ես խոստովանեալ Ճշմարտա_ կեցուցանէ , որ է անսահմանեալ_ մարդոյ կերակուր : Այսո , զմարմ_ նաւոր վայելչութիս ատէ · այլ ոչ այ_ սու , այլ հոգևոր կերակրովք կե_ րակրէ , զոր կերան իսկ՝ և զնոյնե_ ցան սրբք տմ · և արհամարհեցին զանոսի ցանկութիս · և մնան յուսով տանջեանն ծաղկելոյ , որ է օրն վերջին · և մի՛ յաւիտեան շարժես_ ցին · այսինքն անցանեն · և առա_ յաղին սրբքն անչափ ծարաւութիւն՝ որ տու փեսային քն :

Պարզէս՝ նմանէ եղբօրորդին իմ այծե_ մանն ,

ծառ , կամ որթոյ եղանց 'ի մէջ լերանց խնկաբերաց ։

*Այսինքն թէ տես զամենաշատ զգործուածս սրահայեաց ակամբք՝ որ նստին 'ի բարձունս . և առ ոտն հար զօձս , և զվիշապս ։ Որպէս և է իսկ բնութի եղանց՝ կոխել զօձս , և սպանանել ։*

---

## ԳԼ. Գ.

1. Յանկողինս իմում 'ի գիշերի խնդրեցի զոր սիրեաց անձն իմ . խնդրեցի զնա , և ոչ գտի . կոչեցի զնա , և ոչ ետ ինձ ձայն ։

*Այս բանք բազում բանից պէտս ունի մեկնութե . և սակաւուք ոչ պարփակի ։ Բայց սակաւ պատմի . զցանկացողն ընդարձակ բանից՝ 'ի նիւսացին գրիգոր յուղարկեցից ։ Իբրև անց հարսինն գիտութին ընդ այսքան առակս՝ զոր թուեաց , և եհաս 'ի կատար գիտութեան քոյ , յորում էմքս , ապա համադիտ կարծեաց զգիտութին՝ թէ արդ հասեալ էմ , և անհոգացաւ ։ Որպէս մարդ աշխատեալ , և յանկողնի հանգեաւ .*

եալ. նոյնպէս և սա յուղիւք մեծ-
գանձուց, ը̄ն լուսաւոր մեծ գի-
տութեան և ճշմարիտ, յոր Հասեալ
ցանկութ̄՝ Հանդչի ոգ̄ի յանկողնի.
և զպօղոսի ասելն ոչ յիշեաց, թէ
փոքր 'ի շատէ գիտեմք, և փոքր 'ի շատէ
մարգարէանամք. և թէ այժմ խելամուտ
եմ փոքր 'ի շատէ: Գիտէր՝ զայս կեանս
կոչէ՝ առ այն կենօքն. և մթին,
և աղջամղջին ծածկեալ մարմնովն
ողէք ոգ̄ 'ի տան, կամ 'ի բանտի
խակ, անտես են արտաքոյ կացե-
լոյն: Օ որ և մարգարէն բանտ,
և կապանս ասէ, թէ Խզեր զկա-
պանս իմ. և Դ̄ր, Հան 'ի բանտէ զանձն
իմ, գոհանալ զանուանէ քում:
Երգ՝ յանկողնի իմում 'ի գիշերի խնդ-
րեցի, զոր սիրեաց անձն իմ. խնդրեցի
զնա, և ոչ գտի. կոչեցի զնա, և ձայն
ոչ ետ ինձ: Այսինքն թէ որչափ
և խնդրեմ զայ̄ զօրութ̄ն, կամ ըղ-
տեսութ̄ե փառացն, կամ զանուանն
մեծութ̄ի, կամ զպարգևսն, որ ար-
դարոցն է պատրաստեալ, և որ սո-
ցին նման, օտարացեալ գտանիմ:
Եւ զայս Հասեալ գիտութ̄ն որ 'ի
մարգարէից, և յառաքելոց, և 'ի
վար-

վարդապետաց մեզ ուսուցաւ հոգ-ւոյն սրբոյ, և 'ի նոյն ինքն 'ի մէնէ աւետարանեալ, զայս իբրև ոչ գը-տեալ համարեցաւ կատարեալ գի-տութի՛ւ որ 'ի հանդերձեալն գի-տունք լինին՝ որ արժանաւորին այնմ, և այնպէս համարին , թէ չէ իսկ տուեալ ձայն , և ո՛չ խօսեալ սորօք : Զի ո՛չ կարէ մարմնեղէն լեզու խօսել զայն կենաց իրս . ո՛րչ ասէ իսկ առաքեալն պօղոս , թէ Լսեաց զբանս անճառս , զոր ո՛չ է պարտ մարդոյ խօսել : Պարտն՝ փոխանակ չկարելոյ է :

2 · Յարեայց և շրջեցայց ընդ քաղաքս , 'ի հրապարակս և 'ի փողոցս , և խնդրեցի զնա՝ և ո՛չ գտի . կոչեցի զնա , և ո՛չ ետ ինձ ձայն :

Քաղաք , և փողոց , և հրապա-րակս՝ զերկինս կոչէ , և զհրեշտա-կս՝ որ 'ի նմա . յորոց ո՛չ կարաց հասու լինել գիտութե՛ն վերին խոր-հրդոյն 'ի նոցանէ :

3 · Գտին զիս պահապանքն , որք շրջէին 'ի քաղաքին : Հարցի՝ թէ զոր սիրեաց անձն իմ , տեսէ՞ք :

Եւ նոքա ոչ պատասխանելոյն , ի-

մա

մացուցին՝ թէ անհաս են և նոքա
գիտութեն ։ Զի որչափ ՚ի գիտութե
հասանէ մարդ, հեռի լինի առաւել
բարձրագոյն գիտութեն ։

4 · Իբրև փոքր ինչ անցի ընդ նոսա, գտի
զոր սիրեաց անձն իմ ։

Նշանգի է գիտութի, որ ամ ծանօ-
թութեն համաման խափանութեն խընդ-
րողացն առ գիւտն լինի․ յաղագս
այնորիկ ասէ, թէ փոքր ինչ յոր-
ժամ անցի ընդ նոսա, գտի․ այսպէս
՚ի հաւատ, և ՚ի հոգին ՚որ ասպա-
ռինեցայ ։ Նման է այս և բանքն
պօղոսի, թէ Իբրև ոչ ծանեաւ աշ-
խարհ իմաստութեամբ զԱծ, հաճեցաւ Այ
յիմարութբ քարոզութեանն ապրեցուցանել
զհաւատացեալս ։

Գտեալ զփեսայն, ասէ․ կալայ զնա, և
ոչ թողի զնա՝ մինչև մուծի զնա ՚ի տուն
մօր իմոյ, և ՚ի սենեակ յղացելոյն զիս ։

Զհաւատոյն ընթանումն ասէ, ո-
րով մուծանիմք ՚ի մայրն, ՚ի տունն
և ՚ի սենեակ յղացելոյն զմեզ․ որ
է դրախտ և երկինք ։

5 · Զօրէնքով երդմնեցուցանէ այս եր-
կրորդ անգամ հարսնն․ Երդմնեցուցանեմ
զձեզ դստերք երուսաղէմի՝ ՚ի զօրութիւնս և յուժգ-
նութ

զօրութեանս անդաստանի . թէ յարուցանիցէք , զարթուցանիցէք զսէրն մինչև կամեսցի :

Օ՛ այս միանգամ մեկնեալ եմ : Բայց դու անս զառաւելութի սիրոյն քոյ՝ յորս ընակէ , թէ որչափ անյագ առնէ զմարդիկ : Այնչափ հասեալ ընդհուպ և գխօսութե , ոք թէ չև հասեալ՝ զայն տայ երդումն , յորում անհասութն էր՝ և տղխօսութե . զարթուցանէ զսէրն իբրև ոչ կատարեալ առեալ :

6 . Փեսայն ձայն հարսինն առէ . Ո՞վ է սա , որ ելանէ յանապատէ իբրև ծուխ ծխոյ խնկեալ , զմուռս և կնդրուկ յամ̃ փոշեաց անոյշհոտոց :

Կամի ցուցանել փեսայն զգեղեցկութի հարսինն , զի զհաւատացելոց , ցհրեշտակս հարցմամբն , որ օրիորդքն առակին , թէ սեաւ գեղեմ ես զդա՝ կորուսանելով զիւր կերպարանն 'ի դրախտին . արդ՝ ուստի՞ է սմա այս կերպարանք , և անուշահոտութի , զոր յանապատէ առեալ՝ և գայ 'ի բարձրութիւն երկնից : Անապատ՝ զանապատացեալսըն 'ի չար գործոց ասէ . որում և Դաւիթ ցանկայր թևօք հոգւոյն

Է Թռ-

թաչել ։ Մերն զարեղն ծխոյ խնկեալ․ զիւրեաւ պարփակելով զառաքինութիւն, և զբարեգործութիւն կոչէ ։

Մերն զմաննկս, և զմռռսս, և զնպրոսէ յամ ժողեալ անոյշ խաղոյ ։

Ո մուռս՝ մեռելութեան նշանակ-կնքրուկ՝ անուշահոտ վարուց ։ Որդ՝ տես դու, զի մեռուցանել նախ պարտ է զմարմին մեղաց, և քոյ մահակից լինել, և անուշահոտ վարուք՝ քոյ մաքրութեան հաւատարել․ և ապա հարսն լինել, և մերձանալ առ փեսայն քո ։

(Ո)րերորդն ասէն զայս էնչ ։

Կամեցեալ հարսինն առաւել և զփեսայն գեղեցկութիւն, և ըղձայելութիւնն ծանուցանել, ըզփեսայն սողոմոնն անուանէ․ մա զի սողոմոնն խաղաղութիւն թարգմանի․ որ է քո, որ եղև խաղաղութիւն մեզ․ և զմիջնորմն ցանկոյն քակեաց, և զմեզ ընդ մարդկան հաշտեցոյց ։

7 · Ահա գահոյք սողոմոնի, վաթսուն զօրաւորք շուրջ զնովաւ 'ի զօրաւորացն Իսրայէլի ։

Է F Յեր

Յերկոտասան ազգս բաժանեցաւ իսրայէլ. և երկոտասան հիմնն վաթսունն է. նա և զգայութիւնն 'ի մարդ՝ հինգ : Արդ՝ այսպէս կամի ասել, թէ ո̃պ յօրէնս երկոտասան ազգ. իսրայէլացւոց, և իւրաքանչիւր հնգեկին զգայութ̃ք մաքրեալք հաճոյացան ա̃յ. և ըստ երեւելեացս ինքն իսրայէլ սողոմոնի թագաւորութ̃են կամաւորք, և գոհոյք. նոյնպէս այժմ այսմ սողոմոնի ա̃մ տիեզերք՝ գոհոյք են, ուր հանդչին կամքն ա̃յ : Զօրաւորք շուրջ զնովաւ 'ի զօրաւորացն իսրայէլի : Արդ՝ 'ի նոր իսրայէլին զօրաւորք են ա̃մ ս̃րք հաւատացեալք :

8. Ամենեքեան ունին սուր, և ուսեալք պատերազմ :

Այս սուր՝ սուսեր հոգւոյն է, որ է բանն ա̃յ. որով ուսան պատերազմել ընդ աներեւոյթ թշնամւոյն : Արդ՝ իւրաքանչիւր սուսեր յաղթեր : Զի ոչ է մարտ ընդ մարմնոյ՝ և ընդ արեան, եթէ յարաժամ ընդ իւր ունել ոչ մարթի, այլ անդնելի յաղթերն հաստատեալ է, որով ընդ իշխանութիւն, և

և ե̃ պետութիւն մարմնոյն ։

Յարհաւրայ Վեշերայնոյ ։

Որդ՝ յայտ է, թէ արհաւիրք գի-
շերային՝ և խաւարային՝ որ ան-
կեալն է յերկնից, կոչի ։

9. Պատահաւարակ արար էար արքայ սողո-
մոն 'ի փայտից Լիբանանու ։ 10. Զսիւ-
նս նր արար արծաթի, և զյենարս նր ոսկի․
և զյետոնս նր ծիրանի․ և զմէջ նր ա-
կանակապ տարածեալ, սէր 'ի դստերաց ե-
րուսաղէմի ։

Նայեցեալ եմ բազում անգամ, թէ
սողոմոն զքո նշանակէ․ զի 'ի զա-
ւակէ դաւթի, և թագաւոր ար-
դարադատ և խաղաղարար, և տա-
ճարաշէն ։ Սակայն բանք որ 'ի սա,
տակաւ․ իսկ 'ի քո յոլով․ զի ար-
մատ դաւթի․ և թագաւոր երկ-
նի՝ և երկրի․ և արդարադատ ա-
ռաւել, և ողորմած, և ա̃մ երկրի
խաղաղութե̃ ամէն, բառնալով
զկռապաշտութիւն յաշխարհէ, և
զխռովութի̃ երկնայնոցն ընդ երկ-
րայինս․ որով և ընդ ա̃մ երկիր
տաճար ա̃յ՝ 'ի ձեռն քո կազմե-
ցաւ, փոխեալ զօրինակն 'ի ճշմար-
տութիւն, թագաւորան, և տաճա-

րօքն, որ են եկեղեցիք :

Գահաւորակ արար իւր արքայ սողոմոն յանփուտ փայտից :

Փայտ լիբանանու՝ հեթանոսք են : Նա վկայէ քեզ դաւիթ, թէ Մանրեսցէ զմայրսն լիբանանու : Նա դարձեալ՝ մանրեսցէ որթուն օրինակաւ, զոր մոլեխն մանրեաց . որ է սատանայ, և նորա կամարարքն . և 'ի կռապաշտութէ առեալ զմեզ՝ արար իւր գահոյս . զի 'որ է որ, և 'ի սրբս հանգուցեալ . և հաստեաւ աւէ . Նա յո՞ հանգեայց, և պարպարեցից, եթէ ոչ 'ի հեզս, և 'ի խոնարհս, և որ դողան 'ի բանից իմոց : Նա և առաքեալ ասէ, թէ 'Ի տան մեծի ո՛չ միայն անօթք ոսկեղէնք, և արծաթեղէնք, այլ և խեցեղէնք, և փայտեղէնք . 'ի մերոյ բերին, Եթէ ոք սրբեսցէ զանձն իւր յայսպիսեաց աստի, եղիցի անօթ պատուական . և որ զինի գայ : Եցոյց, թէ չէ մարդ ոչ զայլ տուեալ, և զորս որ 'ի մնունդ, այլ 'ի կամս է լինել . թէպէտ ոսկի լինի, թէպէտ արծաթ, թէպէտ խնծոր . թէպէտ դառնաբեր, թէպէտ քաղցրաբեր, թէպէտ փշաբեր : Ո՞վ և մեր առաքեալն

-քեալն և լուսաւորիչն յաճախ բա-
նիւ ասէ զայս : Որդ՝ 'ի փայտից
լիբանանու՝ ոմանք արծաթ , ո-
մանք ծիրանիք , և լինին փոխելով
զչարն 'ի բարի : Նոյց պատշաճ է
զգահաւորականն՝ 'ի բովանդականն յե-
կեղեցի առնուլ . և որ 'ի նմա ա-
ռաքեալք , և մարգարէք , և վար-
դապետք , և կուսանք , և այլապէս
առաքինութբք զարդարեալք սրբք :
Զոր և բացայայտէ առաքեալն ,
Թէ Զորս ետ ած յեկեղեցւոջ , այս
էն , նախ՝ զառաքեալս , երկրորդ՝ զմար-
գարէս . երրորդ՝ զվարդապետս . և որ
զկնի շարէ ընդ իրեարս : Նաև ոչ
մի մի համարէ . զի բուն պատուա-
կանքն գահաւորակին այս են ե-
րեք կարգս , այսինքն եկեղեցւոյ
շինութեն :

11 . Սէր 'ի դասերոյ ԷԷն : Նուէ՞ք , և
հայեցարո՛ւք դասերք երրասաղէն յարքայ
աղօթնան 'ի պաշտօն , որով պանծեայ զնա
մայր էր յաստուր ֆնսայութէ էարոյ , և
յաստուր ոարախնութէ էարոյ :
Սէր 'ի դասերոյ երրասաղէն : Սերա-
խաւկիցս , և սիրակիցս , և զահա-
ցողակիցս իւր կոչէ զզաստրս եէմի ,

զհրեշտակս . և որոյ աղաղակաւ փո-
խեցաւ լիբանան անտառացեալն
մեղօք , և եղև գահաւորակ քնի
այնպէս առաքինութե՟ք զարդա-
րեալ պսակաւն փշեայ , զոր 'ի գը-
լուխ իւր եդ արքայ սողոմոն , յ՟ս
ք՟ս , և օրհնեաց զերկիր , զանէծսն
'ի գլուխ իւր բառնալով , որ ասա-
ցին , Թէ Վաշ , և պատուակ Բուսոյէ
գեղ ։ Այս և ո՛ք լուսաւորիչն մեկնէ
այսպէս . Թէպէտ և նիւսացին
գրիգոր՝ այլազգ ։ Այլ զաս որ
գեր 'ի վերոյ է քան զնա , և զկուրս
առնումք վկայ ։ Այլ որ ասէ , Թէ
Ելէք , հայեցարուք դստերք Եէմ , այ-
սու վերինն երուսաղէմի դստերք
ըսկին , 'ի տես կոչելով զնա առ 'ի
տեսանել զՏ՞րն իւրեանց՝ զայնպի-
սի ունելով զպսակ , որ վասն եկե-
ղեցւոյ յանձն էառ զզարմանալին
մահ ։ Դարձեալ , և զներքին եհեմ
զդստերցն ասէ , յորս ինքն Տ՞րն
դարձաւ , և ասաց , Թէ Դստերք
Երուսաղէմի , մի՛ լայք 'ի վերայ իմ ։
Որով պսակեաց զնա մայր իւր ։
Մայր՝ զխաչն ասէ . զի սխաչն
թարգմանի մայր . և որք զՏ՞րն
պսա-

պսակեցին , 'ի նմա բնակեալ էին ։
Վասն այնր 'ի մօրէն առէ զպսա-
կին ։

Յաւուր փեսայութեան սրտոյ , և յաւուր
ուրախութեան սրտոյ ։

Որդ՝ մի զարմանար դու , թէ ու-
րախութեան և փեսայութեան օր կոչէ ըզ-
չարչարանացն օր . վասն զի ինքն
իսկ տէրն՝ փառս կոչեաց իւր զօրն
զայն և զժամն , ասելովն՝ թէ Եհաս
ժամ , զի փառաւորեսցի որդի մարդոյ ։
Օր զմերն՝ իւր առէ . վասն որոյ
և զայնպիսի պսակ յանձն էառ . և
մեք այն օրն իսկ փեսայացաք , և
ուրախացաք , որ 'ի տրտմութեան էաք
հինգ հազար ամ վասն դրախտին
կորստեան , և անկեալ էաք 'ի փա-
ռացն՝ զոր ունէաք լուսեղէն զգես-
տուն , յորմէ մերկացեալ անար-
գեցաք ։

---

## Գլ. Գ ։

1 . Փեսայն ասէ . Ահաւասիկ ես մեր-
ձաւոր իմ , գեղեցիկ իմ , աչք քո աղաւնեակ ։
Այսինքն թէ այդ գեղեցկութիւն-
քո այժմ՝ եղև իմ այլազգ պսակե-
լովս .

լովս. որով և դու գեղեցկացար
իսկ, յիս առնելով զտգեղութիւն
մեղացն քոց՝ իմ փչեայ պատկերովս:
Ո՜հ այս գեղեցկութի՜ զաւազա֊
նի՜ն մաքրութի՜ն յայտ առնէ, որ 'ի
ձեռն հոգւոյն սրբոյ նոր ծննդեանն
եղև: Արկնելովն՝ յայտ առար, թէ
առաւել գեղեցիկ կերպարան ունին
որ 'ի նոր ստեղծումն ստեղծանին,
և պաշտեն անարատ. և յաւէտ քան
զառաջինն՝ զոր ադամ ունէր յիւ֊
րում փառսն: Այլ առէ իսկ երա֊
նելին գրիգոր ա՟ծաբան: Ստեղ֊
ծումն ա՟ծայինն և քան զառաջինն
ես բարձրագոյն. զի այն ստեղ֊
ծումն թէպէտ և լուսաւորութի,
և անցաւս, և անտրտումս ունէր
կեանս համդերձ անմահութ՟բ, սա֊
կայն միջասահմանն էր փորձն. և
թէ պահեսցէ, ապա անմահ մնալ:
Բայց այժմ՝ որդի ա՟յ լինել, և
այսց ա՟մի պարգևաց հասանել,
զոր ա՟ծայինն սողոմոն սխրացեալ՝
և զարմացեալ, 'ի ձև համեալ որ
ինչ ըստ երկրէքս տենչալի թը֊
ունին, այսու երևեցուցանել կամի
զանձնաւ հնորհացն մեր ձիր: Բայց
և

և ոչ ՚ի ծայրս գիտութեն համբուր-
ժեաց հասանել, թէպէտ և ջանայ
օրինակաւ յայտնաբանել : Բայց
արդ՝ ասա, թէ կայ ինչ ըստ ե-
րևելեացս գեղեցկութեն այնորիկ օ-
րինակ, յոր դարձեալ դոյացաք,
ով փեսայդ մեր քս : Այլ ինձ այս-
պէս թուի, որպէս տղայոց՝ կաթն
կամիս ջամբել, և ոչ հաստատուն
կերակուր . զի դեռ մարմնաւոր
եմք՝ յայսմ կեանս գոլով, և ոչ կա-
րեմք զհոգևորան իմանալ :

Աչք քո աղաւնիք բաց ՚ի լռութենէդ
քումմէ :

Ահա վկայեաց բանիւ, թէ մա-
քուր ես, և միամիտ իբրև աղաւ-
նի . այլ որչափ եսդ՝ լռութեն փա-
կեալ է, ոչ կարելով յայտնել . վն
զի ոչ կարես լսել . զի ամեն խե-
ցեղէն են ականջքդ, և ոչ բաւ-
անդակին անձառելեացն լսող լի-
նել :

Վարսք քո իբրև երամակս այծեաց, որ
երևեցան ՚ի Գաղաադէ :

Այսինքն, զի իբրև մեռեալ է
միտ, անկենդան, անցանկութի,
անհպարտ, օտարացեալ յաշխար-
հէ,

հէ, և մռռեալ. զի վարսն անըզգայական է. որպէս աչքն տեսանող է և անխոտորնակ 'ի չարն, և միամտութ̅ 'ի բարին, նոյնպէս և որպէս զհերսն կամ զմազն արտաքոյ ա̅մ ախտից ես:

2. Ատամունք քո իբրև զերամակս կերտելոց, որ ելանեն 'ի լուացելոյ:

Սասն զի մաքուր, և ախորժակ է լուացեալն և թեթևացեալն 'ի բեռանց աստուծոյն:

Ամենեքեան երկուորիք են, և անորդի ոչ գոյ:

Այսինքն թէ բազում են որդիք ընդնէր առաւել քան զերամբոյն. և ոչ է թէ քեզ միայն վարդապետեն որոձողութ̅ ատամունքդ զմաքրութի, այլ և զայլս ծնանին մանր խրատելով վարդապետական բանիւքն, և որոձողաբար ուսուցանելով մանր մեկնութ̅ գրոց:

3. Իբրև շղար կարմիր են շրթունք քո. և խօսք քո գեղեցիկ:

Նախ կարմրութիւն գոյնի այն է, որ արեամբ ներկանին շրթունքն: Ապա այն, զի աւետարանական բանիւքն խօսին, և ա̅մ հոգևոր

գեոր խօսիւք ։ Բայց զլարն չէ՛ արժան թողուլ , զի բազում ինչ այն է , որ լարիւս թակարդի ։ Երգ՝ ասէ , թէ որ 'ի կարմրացեալ շըրթանց խօսք ելանէ , լար է , և կարթէ զմարդիկ , և առ ա͞ծ ձգէ 'ի բարուք քարշուածս ։

Երկու շնչեղէն նուան այսպէս են բաց 'ի լուսաւորէ խումբն ։

Երկու բնութիւնք են նուան . զի երևելիքն դաժանք են , և աներևոյթքն ախորժականք , և բազում առողջութե՛ ախիթք ։ Երգ՝ Հարսնն քնի , զի եկեղեցի՝ 'ի վերոյ սքօղեալ է զերեսս առաքինական վարուք , և խոշորած գնացք , և տաժանելիք . այսք արտաքոյ՝ նըռան կերպին ։ Իսկ որ 'ի ներքս 'ի նա ամբարեալ է , լոյսն է և սէրն և հաւատն որ առ ա͞ծ ։ Որով յուսով այնմ ամենայնի համբերէ . զի որպէս նուան 'ի ներքս համբարեալքն կարի յոյժ ցանկալի է 'ի կերակուր , նոյնպէս և վարքս առաքինութեց քրտնալիր է , և մեծ աշխատութ՟ աւլցեալ . իսկ պտուղ որդին ա͞մ փառօք է և փառաւորեալ .

րեալ · յՂՂգս որոյ մարգարէն ասէ :
ԱՄՆ փառք դստեր Թագաւորի 'ի ներքոյ :
Բայց 'ի լուսաւորէք քասմէ :
Ոչ է որչափ ես գեղեցիկ , ընդ լու-
սոյն է . և ոչ յայտնի առ այժմ ,
որչափ 'ի տկարութե մարմնոյդ պա-
տեալ ես : Ըստ այնմ , Զոր ակն
ոչ ետես , և ունկն ոչ լուաւ :
Իբրև զաշտարակն Դաւթի պարանոց քո ,
որ շինեալն է 'ի Թալպիովթ :
Դաւիթ աշտարակ է շինեալ նշա-
նաւոր . և այնմ նմանեցուցանէ
փայելչականութե պարանոց հար-
սինն :
Հազար վահանք կախեալ կան զնմանէ , և
ամ նետք սպառազինաց :
Հազարն՝ զբազմաւորականն ցու-
ցանէ . ըստ այնմ , Թէ կառք այ բիւ-
րապատիկ են , և հազարք ուրախք : Զոր
և առաքեալ՝ վահան զհաւատոն
կոչէ , ասելով , Թէ ԱՌ ունէք զվահանն
հաւատոյ : Որ կախեալ կայ զպարա-
նոցաւն . որով և գեղեցկացեալ՝
աշտարակին դաւթի նման է :
5 · Երկու ստինք քո իբրև զերկուս ուլս
երկուորիս , որ արածին 'ի շուշանս :
Երկու ստինս ասէ , վասն զի եր-

 կու

կու բնութիւնք են 'ի մարդումն , մարմին և հոգի . և երկուս ունելով աչս մարմնոյ . զհոգւոյն և ըզմտաց , և ընտրողականութ՟ե արածին , զի զփուշն թողլով՝ շուշանօք բուծանին . ո՟ր հոգևոր կերակրովք :

6. Մինչև տեսն պայծառասցի , և շարժեսցին առաքելք :

Տիւ և լոյս ո՞վ է , եթէ ոչ հոգւոյն ո՟ք , և նոյն ինքն ք՟ս . որ զստուերսն հալածէ 'ի մտաց . ըստ այնմ , թէ 'Ի քէն է տ՟ր , աղբիւր կենաց . և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս : Որով և նոքիմք լուսաւորին միտք , և սիրտք , որ 'ի մէջ ստեանցն է . յորոց և կաթնն 'ի ձեռն հոգևորական կենդանութ՟են ժողովեալ մածանի՝ տալ և այլոց զկերակուր : Արդ՝ համառօտ զայս և առաքեալ մեկնէ , թէ անձն՝ բովանդակ եկեղեցի . և որ 'ի նմա բաժանեալ շնորհքն զգայարանքն ո՟պ անդամ 'ի մարմնի . զոր սա մի մի թուեաց . ակն , և շուրթն , և ատամն , և այտ , և պարանոց , և որովայն կոչելով : Ակն՝ զմարգարէսն է խմա-

նալ. որ կանխատեսք եղեն այսմ շնորհաց. ո՟պ և սոյն ինքն սողոմոն, և որ ըստ նմայն ։ Պարանոց, յորոյ վերայ գլուխն կայանայ կառուցեալ, և ամենայն կենդանին ՚ի վեր և ՚ի վայր, յարեցեալ համդերձ ա՟մ զգայութ՟բ, որ դաւթի աշտարակի նմանեցաւ, որ շինեալ ՚ի թալպիովթ. յաղագս դատաւորութեան պատերազմողաց. որ է պօղոս մեծն, և որք իբրև զնայն. յորոյ վերայ ք՟ս կայ, ուստի ա՟մ կենդանութի բաշխի յեկեղեցի ։ Նուրոմայն, ո՟պ ս՟բ լուսաւորիչն մեր. և յոհան, և որք իբրև զնոսայն ։ Որոց վկայէ տ՟րն, թէ գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութե. ա՟յ հոգւոյն շնորհքն ։ Նոյնպէս և ատամն շրթամբքն կարմրացելովք, և յորովայնէն ՚ի վեր բերեալ, որոճալից մանրէ զբանս գրոց՝ զանյայտն յայտ ածելով, և ՚ի գիտութի տալով մարդկան, և լուսաւորելով զայլ ևս նուաստ անդամսն ՚ի մարմնի յեկեղեցւոջ, որով բովանդակին մարդն, և հարսն քո լինի ։

Պնու

Գնացից առանձինն ՚ի լեառն զմռսոյ, և ՚ի բլուրն կնդրկի :

Զայս երանելին յոհան յիշատակէ, թէ նմանն է այս բան այնմ, որ մարգարէն ասէ, թէ Ընծայն հարէ դայն, և ՚ի հեթանոսաց ոսկի էր ընդրէս, այնմ բանի, թէ Գնացից առանձինն ՚ի լեառն զմռսոյ, և ՚ի բլուրն կնդրկի : Որդ՝ լեառն զմռսոյ՝ ըզմահն, որ վասն մեր՝ միայն պատերազմաւ մենամարտիկ՝ կրեաց : Եւ բլուրն կնդրկի, զի ած միացելով կոխեաց զհնձանն ՚ի խաչին :

7. Ամենևին գեղեցիկ ես մերձաւոր իմ, և արատ ինչ ոչ գոյ ՚ի քեզ :

Այսինքն, իմ խաչելութեամբն և մահուամբն եղեր այնպիսի անարատ և գեղեցիկ. և արեամբ դառնին, որ և բարձի զմեղս աշխարհի : Նա և որ մերձենան ՚ի նա, և նորա մեռելութեան կցորդին, առնուն և զանուշահոտութիւն՝ կնդրկին օրինակաւ :

8. Եկ հարսն ՚ի Լիբանանէ. եկ ՚ի Լիբանանէ, եկեսցես, և անցցես ՚ի սկզբանէ հաւատոց, ՚ի գլխոյ Սանիրայ, և Հերմո-

նէ, 'ի մորեաց առէւծոց, եւ 'ի լերանց ընձուց ։

Րյոլինքն յանտառացեալ մեղօք լեռանէ եկեալ 'ի հաւատալն յխկղ-բանցն ծնեալ 'ի յորդանանէ աւազանին․ զի յորդանան 'ի մէջ երկուց այսց լերանց եղեալ եւ բղխեալ, որով լուացաւ խակ հարսն, եւ գեղեցկացաւ, նա՝ որ գազանաբնակն էր ընդ առիւծս, եւ ընձինձս, որ զօրացեալ եւ բռնացեալ էին, եւ ոչ զառիւծ խայտաբղետ կռապաշտութեամբ․ որպէս ինձ թուի ։

9․ Սրտացուցեր զմեզ քոյր մեր հարսն, սրտացուցեր զմեզ միով ակամբ քով, եւ միով շաւամանեկաւ պարանոցի քո ։

Ո՜վ այս բարեկամք փեսային ասեն, որք հրեշտակք, ցեկեղեցի, որ է հարսն ։ Սրտացուցեր, թէ ոգի ետուր մեզ՝ եւ սիրտ տեսանել զոր ոչն գիտէաք․ զի զնախախնամական սէրն, զոր եցոյց առ մարդիկ, զծնունդ աւազանին, զորդեգրութիւն, եւ զարքայութիւն եւս, զոր մահու խաչին արար ։ Որոյ միաբանութեան հաղորդակից եղեր զմասն, եւ

և անուշահոտուն կնդրկին փառակից ես լինելոյ ։ Արդ՝ ՚ի ձեռն քոյ ծանեայ զնա , և զզօրութի նորա՝ և զսէր նո՛ր որ առ մարդիկ ։ Սրով և ասեն հրեշտակք ցքոյին որ է եկեղեցի , թէ պակաս ակամբդ որ առի մի , անցուցեր զմեզ քո միակնութեամբդ , որ առաւելեալ եմք քան զքեզ բազմակնութ՟ք , և պարանոցին ։ Արդ՝ մեք երկոքումբք բնութ՟բք , ՚ի տեսանողութ՟բք և պարանոցիւք հզօրք ։ սակայն ՚ի ձեռն քոյ տեսանեմք , և լսեմք ՚ի քէն , ուսեալք զպայպախի անճառ խորհուրդ , և փրկութիւն ։ Այս է ։ յաղագս որոյ ասէ առաքեալն , թէ Յայտնեցաւ արդ իշխանութեանց և պետութեանց որ յերկինս են , ՚ի ձեռն եկեղեցւոյ բազմապատիկ իմաստութիւն այ ։ Լսելով եկեղեցւոյ քոյր կոչելով զանախտ ազգակցութիւնն նշանակելով մեր բնութեան՝ հրեշտակաց ։ Նու քառամանեակ պարանոցի՝ որ ընդ լծովն քոյ ախորժակ կամօք մտեալ եղաք ։ Արդ՝ ասաց , թէ կոչելով փեսային եկիր ՚ի լիբանանէ , և զպայպախի զգեցար

շնորհս. բայց մի՛ զայդ գաւդ միայն
բաւական համարեսցիս, բայց այլ
և այլ ևս եկ. և հանապազ ևս խել
'ի գնացս կայցես. մզ 'ի վերս ա-
ռաքինուե. ըստ մարգարէին, որ
ասէ, Թէ Գնասցեն նա 'ի զօրութենէ 'ի
զօրութիւն : Սրում և գրիգոր մծա-
բան վկայէ, Թէ մշտաշարժ պար-
տէ լինել յառաքինուԹի՝ և գիւ-
րաշարժ. յաղագս այնորիկ յա-
ռաջ ասացեալ՝ եկ 'ի Լիբանանէ, յե-
տոյ դարձեալ կրկնէ :

10. Զի գեղեցկացան ստինք քո քոյր իմ հարսն, զի գեղեցկացան ստինք քո 'ի գինւոյ, և հոտ հանդերձից քոց քան զամենայն խունկս :

Ստինք սովոր են կերակուր տալ՝
որք յերկիր ծննդեամբ գան մար-
դիկ : Զնոյն օրինակ ստեամբքն
զորա՛ից մաքրուե զորբոցն՝ որ յե-
կեղեցւոջ բուսան, դաւշակէ. զի
սիրան առ սաեանցն է : Բայց զի
կանխագոյն զկաԹնն ասաց տալ
սաեանց. արդ՝ զնոյնդ այժմ՝ի գի-
նի փոխեաց, և ասաց, Թէ գե-
ղեցկացան 'ի գինւոյ : Արդ՝ այս-
պէս իմանալի է զՊօղոսի առաքե-
լոյ

էր լուան, թէ որ չափնչերն է, ստէպ է բանին արդարութեան։ Նոյն կամ թէ զմիւսն է ասել, թէ էբրև տղայոց 'ի ձռ չափն չափեցի չէր, և ոչ համարատուն չերաչառ։ Այսու նշանակէ զեկեղեցւոյ տղայութիւն յխկղեան՝ կաթամբն որ 'ի ստեանցն դիեցեալ. և արդ զկատարելութիւն գինով. զի կատարելոցն է հաստատուն կերակուր և ըմպելի։ Նոյն ոռ դինին ուրախալից առնէ զմայլեալսն կերակրով. նոյնպէս բանք սրյ հոգւոյն 'ի սրտից սրբոց բղխեալք, ի 'ի ստեանցն, զուարճացուցանեն զլսօղսն, և զանձառն սան կենդանուի, և ուրախուի։ Իսա նմին օրինակի և զհաստ հանդերձիցն է իմանալ, որ իբրև զխունկս բուրէ։ Ոի որք զանուշահոտ առաքինութեց՝ և զբարի վաստակոց բուռն հարկանեն, ոչ միայն ինքեանց լինին փրկուէ պատճառք, այլ և զմերձեցեալսն առ նոսա՝ և զօտսօղսն օգտեցուցանեն. ոչ միայն 'ի կենդանուէ, այլ առաւել ևս յետ մահուանն, թէ և բազում ժամանակք ընդ մէջ անցանեն։

11 · Մ՚եղր կաթեցուցանեն շրթունք քո՛ քո՛յր իմ հարսն, մեղր և կաթն ՚ի ներքոյ լեզուի քում · և հոտ հանդերձից քոց իբրև զհոտ կնդրկի :

Ն՚այս արդ չունի բազում պէտք մեկնութե՛ : Մ՚եղը՝ զքաղցր և զա_խորժական վարդապետութիւն կոչէ · որ ՚ի մերձաւորաց՝ և ՚ի հարմանացելոց քմի ջամբեին ՚ի մարդիկ, և քաղց_րութեան ՚ի սիրտ լսողաց · Ը՟ դաւ_թի, թէ՝ Ո՚րչափ քաղցր են ՚ի քիմս իմ բանք քո քան զմեղր : Զ՚ողղութեամ ասել որ մար_գարէին քաղցրացաւ յուտելն՝ որ յառաջ քան զուտելն դառն է ՚ի բերանն, և քաղցր ՚ի կլանելն : Ա՚յան զի դառն է ՚ի սկսմանն ա_ռաքինութեն · և յետոյ քաղցր :

Մ՚եղր, և կաթն ՚ի ներքոյ լեզուի քո :
Տ՚ղայոցն՝ կաթն · և կատարելոյն՝ մեղր : Յ՚առաջ քան զնմ լեզուս՝ այս անուշ կերակրոց տուող՝ է խմա_նալ զերանելին յոհան վարդա_պետն տիեզերաց · նոյնպէս և ըղ_ծծաբան, և որք իբրև զնոսայն անուշակ կերակրողք : Պ՚արձեալ կրկնել՝ ասելով, և հոտ հանդերձից քոց իբրև զհոտ կնդրկի : Ն՚այս է պատա_րագ

բաղ անուշահոտ , յոր հոտոտի ՚ի մէջ
՚ի հոտ անուշից , որք զկամս , և ըզ-
խորհուրդս , և զմարմինս ինքեանց՝
մատուցանեն այ ողջակէզս :

12. Պարտէզ փակեալ քոյր իմ հարսն , պարտէզ փակեալ , և աղբեւր կնքեալ :

Տես , թէպէտ և պարտէզ է , այլ փակելոյ պէտս ունի . և թէպէտ և աղբիւր է , այլ կնքելոյ , ոչ լինել կերակուր և ըմպելի օտար խաշանց . և ոչ արկանել զմարգարիտ առաջի խոզաց , և ոչ տալ օտար լսելեաց :

13. Առաքումն քո դրախտ նռնենեաց , հանդերձ պտղով ծառոց . ծաղիկ հանդերձ նարդոսիւ : 14. Նարդոս և քրքում , եղէգնխունկ , և կինամոն հանդերձ ամ փայտիւք լիբանանու , զմուռս , և հալուէ հանդերձ առաջին ամենայն իւղովք :

Եթէ բան առ բան զսա մեկնեմ , լսողք ձանձրանայք . բայց զի զդուռն իմաստիցն բացեալ եմ , զոր այլ վարդապետք մանր կտրեն , ես համառօտեմ . և ՚ի բան առաքելոյն աւարտեցից , որ ասէ , թէ Պտուղ հոգւոյն այս է . սէր , խնդուէ ,

խաղաղութեան ։ Նաեւ յայլում տեղւոջ , թէ Օ գութ , ողորմութեան · հաւատոյ , յոյս , սէր · հեզութեան , խոնարհութեան , քաղցրութեան , եղբայրսիրութեան , անոխակալութեան , անընչասիրութեան , պարզմտութեան , և անչափ սրբութեան , և որ սոյն նման ։ Կէսք դառնանք 'ի գործելեացն , որպէս զմուռսն · կէսքն անուշահոտ , իբրև զխունկն · կէսքն ցանկատեսակք՝ որպէս ծաղիկք ։ Այսոքիւք որպէս պարտէզ լինի հարսն ։ Իւղ անուշահոտ բազմափեայ , որ 'ի խորանին յայն մովսեսանն ծխէր , որ էր իսկ օրինակ բիւրապատիկ առաքինութեանց որ 'ի մեզ , յորս առաւել ցանկութեամբ հաստատի ած , քան որ յայնժամ 'ի խունկն , և 'ի պատարագս երեկորին , և առաւօտին ։ Նաեւ զի նռնենին յառաջ մինչ չև նռամբն հասեալ , չվայելեցուցանել զկերօղսն , փշովք պատեալ է · նոյնպէս և որ որպէս պարտէզ և դրախտ լինի յայսմ 'ի կեանքս , յառաջ նեղութեամբ պարտի կեալ · քաղցիւ , և ծարաւով , և տքնութեամբ , և աշխատութեամբ · և որ այլ կիրք առաքինութեան · որով և ինքն զինքն նե_

ներքէ. և որ գայ 'ի վերայ փորձու-
թիք ականց՝ թէ յընկերաց, և
թէ 'ի սատանայէ, զայս ամ վասն
այ սիրոյն կամաւոր արարէ՝ համ-
բերէ. ապա լինի պտուղ ախորժե-
լի այ ում զնուան՝ որ 'ի մէջ փշոց
էր մինչև էր հասեալ: Նոյն այն-
պէս արժան է որ քոի հարսնանայ,
և նորա պարտէզ լինի, 'ի մէջ փը-
շոց յառաջացոյն կեալ. այ 'ի մէջ
տառապանաց. և ապա լինի կերա-
կուր փեսային քոի: Նա և ծաղիկ
ես լինի, ո՛չ նարդոսն, և քրքում.
որ մինն ջերմ է, և միւսն անուշա-
հոտ. այնպէս պարտ է ջերմինն սի-
րոյն քոի վառել, և բուրբոքել ըն-
հոտ տառապանաւն, և ամ բարեգոր-
ծուէն: Նաև զքրքումն, թէ միջա-
սահման է, ոչ կարի հով, և ոչ կա-
րի ջերմ, այլ 'ի չափու ունի զիւր
զօրութին. Այսու օրինակաւ ու-
սուցանէ, թէ և տառապանքի ալ-
տոյ է պտղաբերել պարտիզին այ,
այլ յանչափին փախչել պարտ է,
և ընդ մէջն գնալ, զի մի անչա-
փութեն գլեսցի: Այնպէս և 'ի հա-
ւատոն՝ զչարեալն ընդունել հա-
սա

տաստուն հաւատով, և առաւել
քան զգրեալսն ոչ խմանալ, և ոչ
զանքննելիսն քննել. այլ զա̄մ զան-
կարելի իրս, և զանլինելի, և
զանհաւատալի՝ ա̄յ զօրութեն հաւա-
տալ, որ կարօղն է յա̄մի: Նոյն-
պէս և եթէ ոք 'ի սուրբ լինի մե-
ղաց գործելեաց, ոչ առաւել քան
զչափն սրտալ, զի մի 'ի յուսահա-
տութի անկցի, և ասիցէ, թէ ոչ
գոյ փրկութի, և յաղագս այնր կամ
ոչ դառնայցէ 'ի մեղաց, և կամ
դյուրագայլն կրեսցէ կիրս, որ խեղ-
դեցաւն՝ թէ ոչ գոյ ապաշխարու-
թի. որ էր անչափ սրտալ: Նա զի
մի մի թուեսմ, ա̄մ դնացից և վա-
րուց իրաց՝ 'ի չափու պարտ է կալ.
ո̄ն ուսուցանէ խորհուրդ քրքմոյն.
և ոչ խոտորել, ոչ յաջ, և ոչ յա-
հեակ: Եղեգն, և կինամոմոն 'ի
նռնենեաց դրախտին 'ի հարսնէն
պտղաբերեալ: Եղեգն քան զա-
մենայն խունկս անուշահոտ գի-
տեմք, որ և 'ի խունկս որ 'ի խորա-
նին՝ հրամայեցաւ խառնել առ 'ի
ծխելոյ ա̄յ: Նա զկինամոմոնէ ա-
սեն, թէ 'ի սասոնիկ եւանդն կաթ-

տայի մատչի, չիջուցանէ զջերմութն
եռացման ջրոյն որ 'ի նմա: Նոյն-
պէս և եթէ 'ի յոյժ ջերմին բա-
ղանիս մտանէ, առժամայն իսկ
զովացուցանէ զտունն: Իսկ այլ
այնպիսի իրս, որ և անհաւատալի
թուի լսողաց. զի ասեն, թէ մարդ
որ 'ի քուն լինի, և կինամոմոն առ
նմա իցէ, և որ հարցանէ ոք բան
ընդ ննջեցելոյն, պատասխանի տա-
նէ. բայց միայն 'ի բերանոյն վ՟ր
դիցէ զկինամոմոնն. և 'ի քուն լի-
նի, և արթուն է. և պատասխա-
նիս բանիցն հարցողաց յօդաւորս
և պատշաճս տանէ: 'Ի քուն թը-
ուի, և արթուն է: Արդ՝ այսպէս
ուսուցանէ խունկս այս, թէ մարդ
որ ոյ տայ զինքն, մարդ թուի,
բայց չէ մարդ. զի թէ պոռնկութե
խորհուրդք նեղեն զնա, եթէ բար-
կութե, և եթէ ագահութե, և որ
ինչ ախտք մարմնաւոր, նա ոչ ըն-
դունի. այլ հրեշտակացն հաւա-
սարի վարուք, որ արթունք են,
և անքուն, և անախտք, և անկա-
րիք. և մարդ է, և չէ մարդ. զի
'ի քուն է մարդն առ հրեշտակաց

իմաստութիւքն. նմանեցոյց զպտուղ-
հարսինն, որ 'ի հոգևոր պարտէ-
զէն, և 'ի դրախտէն:

Նա զմուռս, և հալուէ հանդերձ ամե-
նայն [illegible] խնկովքն:

Զմուռս մեռելութեան քոյ նշանակ է, և թաղմանն. և հալուէն, և այլ առաջին պատուականն խունկքն՝ ածութեան միացելոյ ընդ մարմնոյն, որով զմահ կրեաց: Նորդ՝ եցոյց եթէ փայտ էր 'ի Լիբանանէ մարդ 'ի մեղաց անտառէն, և եկեալ 'ի Լիբանանէ, և քոյ չարչարակից և մահակից եղեալ. և մեռուցանելով զմեղս՝ եղև անուշահոտ հարսին քոյ՝ միացեալ ընդ նմա մաքրութեան վարուք. որպէս ասէ առաքեալ, եթէ Որք մկրտեցաք 'ի Քս յս, 'ի մահ նորա մկրտեցաք. Թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն 'ի մահ. զի որպէս յարեաւ 'ի մեռելոց Քս փառօք հօր, նոյնպէս և մեք 'ի նորոգութիւն կենաց շրջեսցուք: Զի որպէս տնկակից եղաք նմանութեան մահու նորա, այլև յարութեան նորա հաղորդ լինիցիմք. Նա և ածութեան անուշահոտէ. որպէս ասաց ածայինն սողոմ-
մոն:

15. Աղբիւր պարտիզաց, ջրհոր ջրոյ կենդանւոյ և հոսեցելոյ 'ի Լիբանանէ:

Նոյն առաւելու զհարսինն զգեղեցկութիւն քան զառաջինն: Որ յառաջ պարտէզ կոչեաց զհարսնն. և այս սակաւ մի յառաջ երթեալ՝ աղբիւր պարտիզաց, թէ ոչ դու միայն եղեր պարտէզ, այլ և զայս բազում առողեալ՝ պարտէզ և դրախտ մ՟յ առնես, պտղաբերել զարդարութ՟ պտուղն: Եւ ջրհոր ինքն մ՟ծ կոչեցաւ. որպ՟ ասաց մարգարէին. Զիս թողին զաղբիւրս ջրոյ կենդանւոյ: Եւ դարձեալ՝ ցսամարացին ասաց տ՟րն. Թէ գիտէիր զպարգևսն ա՟յ, և ով է որ ասէր ցքեզ, թէ տուր ինձ ըմպել, դու խնդրէիր 'ի նմանէ, և տայր քեզ զջուրն կենդանի: Եւ դարձեալ, թէ Որ հաւատայ յիս, գետք յորովայնէ ն՟ր բղխեսցեն ջրոց կենդանութ՟է: Արդ՝ որպ՟ ծնուէն անուշահոտութ՟ հաղորդին, որք նմա մերձակից լինին, և նմա հարսնանան, նոյնպէս և որպ՟ զնա ջրհոր ջրոյ կենդանւոյ լինին՝ որ նմա հարսնանան որպ՟ զինքն. Թէպէտ 'ի լիբանանէ լինին եկեալ, որ 'ի

մեղաց անտառէն. զի անտառ է լիբանան : Զսոյն և զկնի մեկնէ աւետարանիչն յովհաննէս, Զայս ասէր վասն հոգւոյն, որ ընդունելոց էին՝ որ հաւատայցէն ՚ի նա :

16. Զարթիր հիւսիսի, և եկ հարաւ : Այսինքն, գնա հիւսիսի, և եկ հարաւ : Հիւսիսի՝ սատանայ, և իւր գործքն կոչին. ոմն ասէ սոյն իսկ սողոմոն, Թէ Խիստ հողմ է հիւսիսի. զի հեռի է յարեգական ջերմութէ. և վն այնորիկ սառեալ է : Նոյնպէս և որք յարեգակնէն արդարութեան հեռաւորնակ են, սատանայական խորհրդովք են լցեալ. և սառեալ են մեղօք. ոչ լինուն ջերմութ̄ արեգականն, զի բանիւք գրոց սրբոց ոչ վարդապետին. որ զանզղջուն սառն հալէ. և զղջումն անկէ հոգւով հոգւոյն սրբոյ, որ է հարաւ : Արդ՝ հարաւոյն գալ հրամայէ ՚ի պարտէզն. զի շնորհաց հոգւոյն սբյ. և հալածել զսատանայական գործս. վն այնորիկ ասէ. զարթիր հիւսիսի, որ է գնա. և եկ հարաւ, որ է հոգին սբ, և նորին ջերմ հողմ, որ հալածէ

ըղ-

զձմեռն :

Շնչեա՛ 'ի պարտէզ իմ . և բուրեսցին խունկք իմ :

Այս՝ հողւոյն սիրոյ առատ հնչումն է 'ի պարտիզին քում , որ հարսն անուշանեցաւ , ուստի ծաղկեցան ազգի ազգի շնորհք 'ի մարդիկ : Որպ ասէ առաքեալ . Ոմանց 'ի հոգւոյն տուեալ է բան իմաստութեան . այլում բան գիտութեան ըստ նմին հոգւոյ . միւսում հաւատք . այլում աջողութիւնք զօրութեանց . այլում ընտրութիւնք հոգւոյ . այլում մարգարէութիւնք : Նա զի՞ մի մի թուեմ զբազում շնորհս որ յեկեղեցւոջ ասացեալ է . 'ի վերայ բերեալ ասէ . Այս ամ յաջողէ մի և նոյն հոգին սբ , և բաժանէ իւրաքանչիւր շնորհս՝ որպէս և կամի : Արդ՝ այս է որ ասէ , Շնչեա՛ 'ի պարտէզս իմ , և բուրեսցին՝ խունկք իմ : Առաջին խունկս՝ պօղոս , և զպետրոս , և զտասնեակս նոցին ընկերան , և մեր սբ լուսաւորիչն . և յոհան ոսկեբերան . և այլք անչափ իբրև զնոսայն :

# Գլ. Ե:

1. Հարսնն աղաչէ, զի իջցէ փեսայն իւր: Իջցէ եղբօրորդին իմ ՚ի պարտէզ իւր, և կերիցէ զպտուղս ծառոց իւրոց: Ջեռեալ հարսնին զիւր զայնքան առաքինութիւն ծաղկեալ որպէս ՚ի դրախտի՝ և ՚ի պարտիզի. զոր ուսաւ ՚ի փեսայէն, և ՚ի հրեշտակաց, աղաչէ իջանել՝ և ուտել. որ նշանակէ զհայցելն իմ ՚ի բարեգործսն: Նա և անկարօտ է իմ, այլ սակայն քաղցեալ և կարօտ է մերոյ փրկութե. որ և ասաց ինքն ցաշակերտսն իւր, յորժամ նեղէին զնա ուտել հաց. Թէ Իմ կերակուր այն է, զի արարից զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս: Որ և էր մեր դարձն առ նա, և զնորայն պահել զպատուիրան: Նա ինքն խսկ ասաց, Թէ Քաղցեայ՝ և ետուք ինձ ուտել. ծարաւեցի՝ և արբուցէք զիս: Ուսուցանէ բանս և զխոնարհութի ոչ առաքինական վարուքն ամբարտաւանել՝ և յանհոգս լինել, ՚ի բարի գործսն վստահանալով. և աղաչել բեկ

ալը

սրտիւ, և խոնարհ հոգւով, ընդունել զպտուղս արդարութե̃. Տր̃ ինքն իսկ հրամայեաց աղաչել և ասել, Եկեսցէ արքայութիւն քո ։ Յոր աղաչանս նայեցեալ փեսային, որ ասէ մարգարէիւն, թէ Մինչչև կարդացեալ իցէ քոյ, ես լուայց քեզ. Եւ մինչդեռ խօսեսցիս, ասասցէ՝ Ահաւասիկ հասեալ եմ ։ Նոյնպէս փեսայն լուեալ աղաչանաց հարսինն ասէ,

լուայ աղօթից քոց, և

Մտի ՚ի պարտէզս իմ քոյր իմ և հարսն. կթեցի զմուռս իմ հանդերձ խնկովք. կերայ զհաց իմ մեղու իմով ։

Քոյր կոչէ, և ապա հարսն. զի որ զկամս իմ առնէ, ապա և հարսնանայ իսկ նմա ։ Ասա կթեցի զմուռս իմ հանդերձ խնկովք ։ Այսինքն զի զմեռելութեանն պտուղ, որ վ̃ս ձեր մեռայ, կթեցի յիմ պարտիզէդ և ՚ի հարսնէդ՝ առաքինութե̃ խնկովք բուրեալ. մեռեալ ըստ զմահուն օրինակի, և անուշահոտ ըստ ա̃ծութե̃ն սիրոյ ընդ մարմնոյս միացելոյ ։ Կերայ զհաց իմ մեղու իմով ։ Ոչ միայն կերակուր եղեր ինձ՝ կերակրելով առաքինութե̃

հա

հացիւ՛, այլ և քաղցրացար ինձ ոչ
զխորխս մեղու : Որպէս երանելի
վարդապետքն՝ ա̃ծաբան, և յո-
հան. որք ոչ 'ի բերանոյ ն̃յ խօ-
սին, և ասեն. կերակրեա՛ զիս ա-
ռաքինութ̃բ : Ո՛ր և պետրոսի նոյն
կերակրով հրամայեաց կերակրել՝
ցուցակի կտաւոյն, յորում էր ա̃մ
չորքոտանի կենդանի. ո̃ր անխտիր զհե-
թանոսս կերակուր տալ ն̃յ որպէս
զհրէայս. և մի՛ խառնակ համա-
րել: Արբի զգինի իմ կաթամբ իմով :
Ո՛ այս ինքն իսկ ասաց ցորդիսն զե-
բեդեայ. Կարէք ըմպել զբաժակն, զոր
ես ըմպելոց եմ. ո̃ր զմահն զոր արբ.
և արեամբն զգինին. և կաթն ար-
բուցաւ, այսինքն զմարդկան տը-
ղայութ̃ի, որ այնմ արբմամբն՝ որ
զբաժակ մահու արբին, տղայա-
կան անմեղութ̃բ ոչ զկաթնկեր :
Ո՛ր և ինքն տ̃րն ասաց. Եթէ ոչ
դարձջիք և լինիջիք իբրև զմանկունս, ո՛չ
կարէք մտանել յարքայութիւնն ն̃յ : Ո՛ւ-
զում ասել, զոր տ̃րն մեր արբ, և
ետ առաքելոցն, և ասէ, Այս է իմ
արիւն. առէ՛ք, և արբէ՛ք : Նաև որ զկնի
սորին բանն : Նայդ իսկ է,

Այերա՛յք Մերձաւորք են. որբե՛ք, և որբե-ցարուք եղբարք են:

Օ որ միւս աւետարանիչն ասէ , Եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ , և արբջիջիք զարիւն նորա , ո՛չ ունիցիք կեանս յանձինս : Արդ՝ արբեամբքն որ ինքն արբ , և ապա առաքելոցն ետ , եցոյց թէ եկեղեցւոյ և հար-սին զայս բաժակս ետ ըմպել, և խոր մահակից լինել . զի խորհուրդն որ կատարեմք , մահու նորա յիշատակ է . և զահաւոր պատարագն դնե-լով ՚ի վերայ սեղանոյ առաջի հօր , զնորա մահն որ վասն մեր եղև , ա-ռաջի հօր ունիմք , և այնու փրկու-թին հայցեմք մեզ : Արդ՝ թէպէտ և երանելին յոհան ասէ , թէ ինքն վասն այնր արբ յիւրմէ արենէ , զի զնոսա յորդորեսցէ ըմպել . զի մի ասիցեն , թէ արիւն զիա՞րդ կարի-ցեմք ըմպել : Բայց բուն պատ-ճառն այս է , թէ զիմ արբումս զմահ և զանմեղուն , որ է գինի և կաթն , և ձեզ պիտոյ է ըմպել . և ո՞չ ես զձեզ կերակրեցի իմով ա-րեամբս , և ձեզ պարտ է զիս կե-րակրել տղայուք և մեռելուք , որ

ըստ

ըստ այսմ կենացս : Սոյն առաքեալ
ասէ, Թուէ ոչ կամի Աստուածն լինել յաշ-
խարհէս յայսմիկ, չեմք լեալ · այլ եղիցի
Աստուածն յայնժամ աշխարհին : Եւ ըղ-
քո կերակրիցէ իւր զհոգիս և կա-
թամբն, զհոգւոյն ստանալ վարս :
Սոյն ասէ դարձեալ առաքեալ, թէ
Մանկո՛ւնք եղերուք ինչ, որպէս և ես
քոյ : Եւ այլուր, թէ քո 'ի ձեզ է,
բայց եթէ անպիտանք իցէք : Եւ թէ որ
մկրտեցայք 'ի Քս, զՔս զգեցեալ էք : Եւ
Գրիգոր Ածաբանն ասէ թէ, «Պետ-
րոսս՝ վէմն շինեցեալն ըստ քոյ : Ըղ-
ասելով, թէ արբէք, և արբեցա-
րուք, 'ի մի բերէ, թէ
2 . Ես ննջեմ, և սիրտ իմ արթուն կայ :
Այսինքն թէ չէ արբեցութիւն այս
արբումն՝ թէ քուն թմբրութեան բե-
րէ, ոչ գինին որ յորթոյ · այլ ոգ
ածութեն 'ի դերբեզմանին արթուն
կի, և մարմնոյն մեռելութիւն 'ի
քուն, նոյնպէս և որ զայս ար-
բումն ըմպեն, արթնանան 'ի ան-
մահութե ընդ իս : Այս է, որ ասէ,
թէ կեցցէ յաւիտեան : Եւ թէ և մե-
ռանի, կեցցէ : Թէ և զմարդկային
ունելով բնութիւն, ննջեն · այլ ար-
թուն

թուն են՝ զշնորհս հոգւոյն յինքեանս բերելով։ Ուրդ՝ եթէ ոչ էր այսպէս, զիարդ կարէին այս տկար մարմնովս զայնպիսի կիրս չարչարանաց կրել առաքեալքն, և մարտիրոսքն այնչափ նեղութիւնս․ նոյնպէս և ճգնազգեաց հարքն։ Մանաւանդ մեր լուսաւորիչն, որ տասն այլ զեւթն օր 'ի գլխի վայր կախաղանին՝ 'ի բրածեծ առնելն՝ զնորա սրտին արթնութիւն ոչ կարացին թմրեցուցանել՝ այնպիսի դառն տանջանօքն․ այլ զմիտսն արթնութիւն առ Աստուած ամբարձեալ, անհատ աղօթիւքն ընդ Աստուծոյ խօսէր յայնմ աւուրսն․ և զութ աղերսանաց առաջի Աստուծոյ արկանէր վասն աշխարհիս մերոյ փրկութեան։ Մի դաւաղանի զարկումն բաւական է քուն թմբրութեան մնաց մերոց հասուցանել․ իսկ երանելւոյն այնչափ անչափ չարչարանսն անխոտորնակ ըզմիտսն, և անդրդուելի զհեզութիւն 'ի խնդրուածս առ Աստուած ունելով զիարդ ոչ նմանէր արթուն սրտին քում, և ննջմամբ մարմնոյն․ զո՞ր օրինակ սա ընութեան կրից ննջման

մա-

մահակից եղեալ քի արթուն մը-
տօք : Այս է, որ ասէ, Թէ. Ար-
ԲԷՔ և ԱՐԲԵՑԱՐՈՒՔ՝ ԵՂԲԱՐՔ ԻՄ զի
արբեալ զաշխարհս, ես ննջեցի
ըստ մարմնոյ. և սիրտ իմ արթուն
էկաց ըստ ոգւոյն : Այն օրինակ
ինձ էք նմանելոց՝ արբմամբս այ-
սու խմոյ գինւոյ :

ՀԱՐԿԱՆ ԶԳԱՅ ԶՔԵՌԱՅԻՆ ԲԱԽԵԼ ԶԴՐՈՒՆՆ :
ՁԱՅՆ ԵՂԲՕՐՈՐԴՒՈՅՆ ԻՄՈՅ ԲԱԽԷ ԶԴՐՈՒՆՆ :
Մ՛ղէ տես զայս, թէ որք զբաժակն՝
և զգինին զայն ըմպէին յայս քնալից
կեանս, որպէս արթուն միտս ըն-
տանեան, ՚ի խրատու աւետարանա-
կան բանին, եթէ ԵՂԻՑԻՆ ԳՕՏԻՔ ՁԵՐ
ՊՆԴԵԱԼ ԸՆԴ ՄԷՋՍ, և ՃՐԱԳՈՒՆՔ ԼՈՒՑԵԱԼՔ.
և ԴՈՒՔ ՆՄԱՆՈՂՔ ՄԱՐԴԿԱՆ՝ ՈՐ ԱԿՆՈՒՆԻՑԻՆ
ՏՆ ԻՒՐԵԱՆՑ, ԹԷ ԵՐԲ ԴԱՌՆԱՅՑԷ ՚Ի ՀԱՐ-
ՍԱՆԵԱՑ. ԶԻ ՅՈՐԺԱՄ ԳԱՅՑԷ և ԲԱԽԻՑԷ,
ՎԱՂՎԱՂԱԿԻ ԲԱՆԱՅՑԵՆ ՆՄԱ : ԵՐԱՆԻ՛ Է
ԾԱՌԱՅԻՆ ԱՅՆՄԻԿ, ԶՈՐ ԵԿԵԱԼ ՏՐՆ ԳՏԱՆԷ-
ՑԷ ԱՐԹՈՒՆ : Այսմ նմանեալ սիրք՝ որ
հարսնացան փեսային քի, ՚ի պա-
հու կալով և լսելով զձայն եղբօր-
որդւոյն քի, որ բախէ զդուռն՝
կոչելով ՚ի մուտս արքայութեան երկ-
նից : Փեսայն՝ որ է քս, ասէ ՚ի

բաղխել զդուռնն ։

Բա՛ց ինձ քոյր իմ, մերձաւոր իմ, աղաւնի իմ, կատարեալ իմ. զի գլուխ իմ լցաւ ցօղով, եւ վարսք իմ ծանր անձրեւօք գիշերոյ ։

Արդ՝ համառօտ այս է սորա մեկնութի. Բա՛ց ինձ քոյր իմ մերձաւոր իմ, աղաւնի իմ, կատարեալ իմ։ Այսու բանիւք զմխիթարութե լուսաւորութեն դուշակէ զհարսինն, թէ ՚ի ձեռն հոգւոյն ծննդեանն, եւ արբմամբ խորհրդական արեանն՝ քոյր եւ մերձաւոր իմ եղեր, եւ արդարացար հոգւովն, զաղաւնոյն առեալ բնութի, եւ կատարեալ եղեր. զի ո՞չ որդի եղեր. եւ որ որդի ո՞չ արժանանայ լինել, ո՞մն կատարեալ է. զի այլ զի՞նչ բարձրագոյն փառք դոյ քան զայս յերկրի, կամ ՚ի յերկինս ։ Բայց թէ ոչ պահեմք, եւ գործեմք զշնորհսն, եւ զփառսն տուեալս, նախահօրն նմանեմք, որ առեալ զլուսաւորութի, եւ զանկարօտ եւ զանցաւ եւ զանմահ կեանս, եւ զդրախտն, ոչ պահելովն եւ ոչ գործելովն՝ կորոյս դարձեալ։ Նոյն եւ մեզ ուսուցանէ մի յանհոգս լինել

կատարելութեան շնորհին, այլ որպէս թէ ոչ առեալ, այնպէս զգուշանալ: Զի տալ զկատարելութիւն 'ի նմանէ է. և պահելն 'ի մեզ ըննի. զոր աստ երանելի վարդապետըն. Յաղագս այնորիկ ասէ, թէ բաց զդուռն ճանապարհին, որ տանի 'ի կեանսն. և մի կատարելութդ՝ համդաստեան զքեզ և քնոյ՝ և գլուր կենաց զներ: Ապ ասէ առաքեալ. Թէ ոք համարի գիտել ինչ, չեւ ևս գիտաց որպէս արժան է գիտել: Եւ դարձեալ ասէ, թէ Ոչ համարիմ զանձն իմ, թէ հասեալ իցեմ. բայց մի ինչ է, զի զառ 'ի յետոյսն մոռացեալ, և յառաջադէմսն նկրտեալ եմ. առ երեալ ընթանամ զհետ կոչմանն այ 'ի քն յի: Արդ՝ բաց ինձ զքո մուտդ. զի գլխոյն են լցան ցօղով, և վարսք են ծանր անձրեւովք գիշերոյ: Այս այնմ նըման է, որ 'ի միւսանգամ գալստեան՝ զմեղսն զոր եառ վասն մեր, ցուցանէ. Բայց անդ վասն կշտամբելոյ զմեզ ցուցանէ, որ առ երախտաւորն ապերախտ գտանիմք. բայց աստ առ 'ի յորդորելոյ զմեզ՝ զլուր քիրտն որ վասն մա-

հուն

հուն ահի կրեաց 'ի գիշերին , յի-
շեցուցանէ հարսինն՝ որ յաւետա-
րանին ասէ , Թէ Քրիստոնէին ողորմն
ողորմն հասէին 'ի նմանէ ։ Ո՛ այս ասէ ,
Թէ իմ քրտամբս՝ ես զայդ անմե-
ղուն աղաւնոյ և զկատարելութն
զգեցեալ , և քոյր իմ և հարսն
լեալ . որ քրտամբ իմով որ յայնմ
գիշերի՝ զքիրտն անխծիցն բարձի ,
և ես ընդ քոյ վշտացեալ համբե-
րէի աշխատեալ քրտամբքն . արդ՝
պահեա՛ զոր առերդ , զի զմիամտու-
թին աղաւնոյ , և զկատարելութիւ ,
և մի կորուսաներ դարձեալ . զի
երկրորդ անգամ խաչ ես ոչ է , և
ոչ մահ վասն քոյ ։

3 . Հարցանէն զայս ինչ ասէ ։ Ո՛ երեկայոյ
զպատմուածան էմ , զի մարդ զգեղայց զնա-
րոմայի զայս էմ , զի մարդ աղանեղայացեց
զա ։

Այսինքն , քոյ այնչափ երախ-
տիւքդ և քրտամբքդ , որ վասն իմ ,
զգեստ պատուհասին որ վն իմոյ
յանցանացն , մերկացեալ , զխորդ-
դարձեալ զգեցայց . քան լիցի ։ Իսկ
որ լուծացեր մկրտութբ զգարշապարս
և զոտս ում զերանելի առաքելոցն ,

և ամրացուցէր ՚ի թունից խածա-նող օձին, զիարդ աղտեղացուցից զսա մեղաց ընթացիւք ՚ի պոռն-կութն, կամ ՚ի սպանութն, կամ ՚ի զրկութն, և որ սոցին նման. և որ լուսով զգեցայս, և իշխանութիւն ունիմ յերկինս ուղևորել, և ընդ հրեշտակս պարել:

4. Եղբօրորդին իմ չքեղոյ պչեան էար ընդ ծաղկն. և որոնջայն իմ խառնջեցա ՚ի նա:

Տես զայս, թէպէտ և ոչ զպօղոս, կամ զպետրոս՝ որք լուսաւորի հոգ-ւով, և քնի խորհրդոյն ջանայ տե-սող լինել, այնպէս ոչ փոխանակ ամ անձին զձեռսն միայն տեսա-նել. և այն ընդ նեղ և սուղ նր-ուաղ ինչ տեղի՝ ոչ ընդ ծակ: Յա-ղագս որոյ ասէ առաքեալ. Այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յանդիման. այժմ խե-լամուտ եմ փոքր ՚ի շատէ. այլ յայնժամ գիտացից որպէս և նոյն ծանեաւ զիս: Ասայ, թէ զոր ես ինձ փեսայն զշնորհսն, և զոր խոստացեալ է տալ, և զինչ վասն իմ կրեաց, և թէ որչափ եղև մեղ նորա մահ-

ուա

ուժամբն չնորհ , և որ այլ այսպիսի
ներբան և անպատմելի պարգևք ,
որ առատ եցոյց զորբոցն , առ այնու
զոր անդ 'ի հանդերձեալ կեանսն
է ցուցանելոց և 'ի գիտունն տալոց ,
այնպէս առ այնմ՝ ոչ թէ զձեռն
միայն ընդ ծակ ինչ տեսանիցէ . և
ոչ կաթ մի ջուր առ ծովուն ջրով ,
և ոչ ճրագ առ արեգակամբ . և
ոչ տղայ յորովայնի մօրն՝ առ ծեր
այր : Նու տես , զի և յայն սակաւ
և սուղ տեսութին խառնեցաւ ոստ
վայնն . ոչ և սուտ , թէ որոշայն էՏ
խառնեցաւ 'ի նա : Զի և պօղոսին
սակաւ տեսութին շնորհոյ՝ և կարա
ցոյց զնա յաչացն . ոչ յանհանձնու
առաքելոյն 'ի տեսլեանն . որպէս
եզեկիէլին . և այս 'ի հրեշտակաց
միայն 'ի տեսուն : Ոչ և զդանիէլ
սուտ , Տր , չէրևելը նոյ խառնեցաւ ո
րոշայն էՏ չէր . և որ զկնսին գայ : Զի
ոչ խօթ աչք՝ զարեգակն ոչ կարեն
տեսանել , այնպէս և մարդկային
բնութին զաստուծոյն ոչ կարեն
տեսանել , կամ իմանալ՝ որչափ
յայսմ 'ի կեանս է : Յաղագս այ
սորիկ զպօղոս առաքեալ մարմնոյն

ռուեալ՝ յերրորդ երկինս տարեալ՝
ընդ եցոյց զանձառելիսն . իսկ յոր-
ժամ դարձաւ յերկիր՝ ոչ կարաց
մարմնեղէն մտօք , և շրթամբք
պատմել զոր ետեսն՝ և զոր լուաւ
զանբաւսն . այլ ասէր եւս , թէ լը-
ւա՛յ բանս անճառս , զոր ոչ է պարտ մար-
դոյ խօսել , ապա թէ չկարէ բերել
մարմնեղէն լեզու զանմարմնեղէ-
նին զխորհուրդ : Ապա եթէ ոք ա-
ռիցէ զձեռն եղբօրորդւոյն որ ընդ-
ծակն ձգեալ՝ զորդի , զի աջ հօր
կոչի . և զմարմինն , զոր միացոյց
ընդ ա̃ծուէն , ծակ իմանայ , չէ և
այս հեռի 'ի խորհրդոյն . զի ո̃ղ
սակաւ ինչ ծակ առ տաճարաւ ,
նոյնպէս և մեր բնութիւն ընդ ա̃ծու-
թեամբն : Այլ ինձ առաջին պատ-
ճառն հաճելի է . նա և միաբան
գրոց , մանաւանդ մարգարէական-
նոյն՝ 'ի բազում դէմս բաժանի :
5 · Յարեայ բանալ եղբօրորդւոյն իմոյ :
Զեռք իմ կաթեցուցին զմուռս · 6 · Իս
մատունք իմ զմուռս լցեալ 'ի վերայ յե-
ռայ փականացն :

Որք առեալ զձեռն կարկառեալ
ընդ ծակն , այսինքն զա̃յ յայտ-
նեալ

նեալ խորհուրդս ընդ նեղ լուսան-
ցոյց, բացեալ աչք հոգւոյս, և տե-
սի որչափ կարելի է մարմնեղէն ա-
չաց տեսանել. և զարթեաւ հոգի
իմ 'ի թմրութենէ մեղաց. և յարեայ
հիացմանէ երկրաւոր կրից, 'ի բաց
դնելով զախտս. և մեռուցի զխա
մեղացն ընդ մեռելոյն մեռեալ,
որ վ՟ն իմ մեռեալ անմահն ։ Որ
և աստ առաքեալ, մեռեալք ընդ
նմին մկրտութեամբն 'ի մահ. որով և ընդ
նմին յարեաք հաւատովքն ա՟յ ազդեցու-
թեամբն. և որ զկնի գայ բանն ։
Արդ՝ յայտ է, թէ յառաջ մեռա-
նել պիտոյ է, և սպանանել զան-
դամս մարմնոյ. ո՟ք հաստատէ ըղ-
սոյն առաքեալ. և ապա լինի մուտ
ա՟յ, և ա՟ծայինն խորհրդոցն 'ի
մարդն ։ Այս է որ ասէ, թէ 'ի
բանալն եղբօրորդւոյն իմոյ՝ ձեռք
իմ կաթեցուցին զմուռս. նոյնպէս և
մատունք 'ի վերայ ձեռաց փականացն ։
Մուռսն մեռելութեան գուշակ
է. և զի ձեռքն են գործօնեայ
գործոց ։ Արդ՝ հասանէ ձեռն եղ-
բօրորդւոյն քոյ՝ 'ի ձեռն հարսինն,
ք՟ս է հաւատացելոց. և նորա ձե-
ռինն

ռինն հաւատարեացն, հարսին ձեռ-
քըն 'ի փեսային ձեռքն մերձենա-
լովն, մաքրութբ մեղաց, և մեռե-
լութբ ընդ նմա ։ Այս է որ ինքն
Տ̃րն համառօտեաց. Եթէ ոք գայ
առ իս, և ոչ ատեայ զամ̃ ընտանիս, նա և
զանձն իւր, ոչ կարէ իմ աշակերտ լի-
նել ։ Դարձեալ. Թէ նեղ է դուռնն,
և անձուկ ճանապարհն, որ տանի 'ի կեանս ։
Արդ՝ յայտ է, թէ նեղութբ, և մե-
ռելութբ հետևի այն ճանապարհն.
բայց առ որում սէր փեսային տե-
ղի գտանէ, նորա յուսովն գժուա-
րինն դիւրին թուի ։ Յաղագս որոյ
խրախացեալ մեծ առաքեալն պօ-
ղոս, խրախոյս տայ, ասելով, թէ
Ոչ արժէն չարչարանք ժամանակիս ընդհան-
դերձեալ փառացն, որ յայտնելոց են 'ի մեզ ։
Յոր և դու հայեաց այժմ. բաղում
թագաւորք, և թագուհիք աստ
ըստ իւրեանց կամացն գնացին. և
յետին օր մահուն իւրեանց երթա-
լով ապաշաւելով ելին յաշխարհէ.
և յառաջ քան զօր դատաստանին
'ի խղճէ չարեացն և յահէ դատաւո-
րին 'ի տանջանս են ։ Նոյնպէս և
բաղում թագաւորք, և մեծա-

մեծք

մեծք արհամարհեցին զՅս. և 'ի վերջին աւուր կոչմանն իւրեանց երթալով յուսոյն որ առաջի կայր ինքեանց, ուրախութբ հրաժարեցին յՅէ, անձամբ զուարթութբ բերկրեալ ընդ վաճառն զոր արարին. զի զերկինս ընդ երկրի առին. և յառաջ քան զհատուցմանն օրն որպէս առեալ աստատին զվարձսն, և յուրախութե ևս են. և զԱծ անդադար օրհնեն, որ նոցա ճանաչել շնորհեաց զմնոտի կենացս ունայնութի, և յաւիտենական կենացն 'ի խնդիր ելանել: Որդ՝ փեսայ և եղբօրորդի, որպէս բազում անգամ ասացի, Քս կոչի: Փեսայ ասի, զի սիրեաց զմարդիկ որպէս փեսայ զհարսն. զոր և հաստատէ առաքեալ, թէ Խօսեցայ զձեզ առն միում կոյս սուրբ զկոյս յանդիման կացուցանել Քի: Իսկ եղբօրորդի անուանի նոյն ինքն Քս, զի հրեայք, և հեթանոսք՝ յադամայ են. վն այնորիկ եղբարք կոչին. և Քս զի 'ի հրէից է, և եկեղեցի՝ որ են հեթանոսք նոր հաւատացեալ ժողովուրդք Քի, եղբօրորդի զՔս կոչեն: Իսկ հարսն, և

քոյր,

քայլ , և պարտեզ՝ հեթանոսք յա-
ղագս այնորիկ կոչին , զի որպէս
հարսն զորբունի և զսէր՝ փեսային
խօսեցելումն առն իւրում միայն
պարտի պահել . և եթէ ոչ պահէ ,
և զայլ ոք սիրէ , պղծեաց զանկո-
ղին փեսային , և օտարացաւ 'ի նը-
մանէ . Նոյնպէս և հաւատացեալք ,
որ 'ի քս̃ միացան մկրտութ̃ , և հա-
ղորդք եղեն նորա մարմնոյ՝ և ա-
րեանն , և ապա յետ այնորիկ 'ի սէր
ձխս որոշեն զինքեանս , և միանան
'ի պէսպէս ցանկասիրութ̃ ցնորս , 'ի
պոռնկութ̃ , 'ի սպանութ̃ , յամբար-
տաւանութ̃ , յագահութ̃ , 'ի փառա-
սիրութ̃ , 'ի հեռ , 'ի նախանձ , և
որ սոցին նման չարիք , լուծին զը-
փեսային քսի̃ սէրն , և զուխտն՝ որ
ընդ իւրեանս . և ուսուցին չարեաց
սատանայի հարսնացան . և յիրա-
ւի ընդունին զանվրէպ տանջանսն :
Սակայն թէ դառնան առ նա , և
յայնժամ ևս մարդասէր է տ̃րն . զի
ողորմած է , և ոչ կամի զմահ մե-
ղաւորին . վասն որոյ և մարմին իսկ
առ , և զմահ անարգանաց մեռաւ :
Նոյնպէս և քեռն դուլթ ը̃ այնմ
պալ-

պարտի լինել . և պարտիզին առ-
գործօղն պտղաբերել . և ոչ օտա-
րաց կերակուր լինել ։ Այլ մեք
զկարգէ բանին բուռն հարցուք ։
Բացի եղբօրորդւոյն իմոյ . եղբօրորդին
իմ անց . և հոգի իմ ելընդ բանի նորա ։
Տե՛ս , զի ընդ բանալն և էանց .
այսինքն , եթէ յորժամ ես 'ի մի-
տըս գրոց համբարձի զխմց մտաց
աչս , տեսանել զնորա զանքննելի
խորս գիտութե՛ն շնորհացն , բացի
զսիրտս ժողովել 'ի ներքս զուգ-
տեսեալն , և քննել՝ և տեղեկանալ՝
և հասու լինել խորոց գիտութե՛ն նո-
րա , մնացեալն յիմ տկար մտացս
համանէ՝ այնպէս զարհուրեցոյց
զիս , ո՛րպ զի ցանկութ՛ե այնմ մտա-
նալ զայն՝ զոր ընկալայ զգիտութի՛ն
'ի բանալն . յաղագս այնորիկ ա-
սէ , թէ էանց եղբօրորդին . որպ թէ
է՛ տեսանելն զնա՝ և փութապէս
գնաց որպ փայլակն զխուրնթաց ։
Եւ հոգի իմ գնաց ընդ բանի նր ։ Այս-
ինքն թէ սակաւ ճաճանչ ընկա-
լեալ զբանից նորա , հոգի իմ ե-
թող զիս , և գնաց 'ի բանս նորա ։
Ո՛րպ թէ ծանեայ զնա , և 'ի սէր նր
միա-

միացայ, և 'ի պատուիրանս նր̄ ե-
ղացայ. և 'ի համարելն թէ հա-
սի, ես առաւել գիտացի զիս հե-
ռի 'ի հասողութենէն. զի 'ի տեսա-
նելն զարեգակն Ճշմարիտ, 'ի ձեռն
լուսոյն ծանեայ, թէ որչափ հեռի
եմ 'ի գիտութենէն. և զմտաւ ա-
ծի զորինն խակ զա̄ծեանն զողո-
մոնի զասելն յայլում տեղւոջ, թէ
որ յաւելու 'ի գիտութիւն, յաւելու ցաւս:
Զայս ասելով ոչ եթէ հրաժարե-
ցուցանէ յուսանելոյ զգիտութի̄ սր̄
գրոց՝ զի մի՛ յաւելցին ցաւք, այլ
յորդորէ առաւել ես յաճախել 'ի
գիտութի, և այնչափ գիտութեն ի-
մանալ զանհաս գիտութիւն այլ ես
մնացելոց գիտութեն: Զի ո՞չ ար-
բեալ՝ որչափ ըմպէ, ես առաւել
ծարաւէ, նոյնպէս և որ յաւի
յա̄ծաշունչ գրոց միտս, որչափ ու-
սանի, ես առաւել ցանկայ այլ ես
ուսանել. զի գիտէ, թէ ոչ գտա-
նէ զլրումն գիտութե գրոց սր̄ց. և
այն ցանկութի մտացն ջեռեալ՝ ոչ
ցաւք լինի յոգւոյն. զի 'ի ձեռն
սակաւ հասողութեն Ճանաչէ զան-
բաւ մնացուածսն, և ցանկութիւ

թ այնմ

այնմ գիտունն՝ ոչ ցաւօք վարակի. այլ ցաւքն այն և հոգքն հորդեն զառողջութեն գիւտս։

Խնդրեցի զնա, և ոչ գտի. կոչեցի զնա, և ոչ ետ ինձ ձայն։

Այս վկայէ բանիցս ասացելոց, թէ զոր գտին, և որում բացի, առ մնացելովքն այնպէս թուեցաւ, թէ ոչ տեսեալ եմ, և ոչ լուեալ իսկ զձայնն։

7. Գտին զիս պահապանքն որ շրջէին 'ի քաղաքին. հարին վիրաւորեցին զիս. հանին յինէն զշորջս իմ պահապանք պարսպացն։

Որդ՝ պահապանս պարսպացն՝ զսպասաւոր հոգին՝ զհրեշտակս իմանալի է։ Որ յայտնէ առաքեալն պօղոս. Ոչ ամենեքեան հոգիք են հարկաւորք՝ որ առաքին 'ի սպասաւորութիւն վասն այնոցիկ, որ ժառանգելոց են փրկութիւն։ Նաև սաղմոսանուագն ասէ. Կացոյց սահմանս հեթանոսաց ըստ թուոց հրեշտակաց այ։ Ոչ հրեշտակք ըստ գաւառաց և քաղաքաց պահապանք են մարդկան անհաւատից. իսկ հաւատացելոցն՝ ամ անձին մի մի հրեշտակ. և սրբոցն

ևս առաւել . ըստ ասելոյ մարգարէին, թէ Բանակք հրեշտակաց Տն̃ շուրջ են զերկիւղածովք իւրովք . և պահեն զնոսա : Արդ՝ եթէ պահապանք են հրեշտակք, հարկանել, և վիրաւորել՝ և կողոպտել չէ՛ նոցա, այլ գողոց դիւաց : Արդ՝ յայտ է, թէ հարկանել՝ և վիրաւորել՝ և զձորձս հանել զայն ասէ, թէ և ես անհաստ եղայ, և ոչ կարացի հետաղօտել խորհրդոյն ա̃յ . սակայն յոյս ունէի 'ի խնդրելն իմ, թէ գոնէ 'ի պահապանաց պարսպացն տեսայց, 'ի սրբոց, կամ 'ի հրեշտակաց . նոքա և զինքեանց նոյն վիրս կրել ասացին . և ապա յուսահատեալ իմ, իբրև լուայ 'ի նոցանէն զնոյն անկարութիւն իմացութեան նոցա, և այնպէս եղև ինձ վտանգ, ոչ զայն որ վիրաւորեն, և զձորձս հանեն . զի մերկացաւ յինէն պատմուճանն ակնկալութեան իմոյ : Այլ սակայն թէպէտ և ըսպառ սպուռ բարձին զյոյս այսմ ցանկալի խնդրոյս, սակայն և ես առ յոյժ փափաքմամբն՝ և տենչմանց՝ և ծարաւման ոգւոյս՝ կապակցեալ

սէր

սիրովն որ առ եղբօրորդին , դարձեալ յաւելեալ ՚ի խնդիրսն , և ոչ հաւանեալ նոցա առաջի ունելոյն , ընդ երդմամբ արկեալ զնոսա , ասացի :

8. Երդմնեցուցին զՅեղ դատէրք եթէ՝ ՚ի զօրութեան , և յաջողութեան անդաստանի , եթէ գտանիցէ զեղբօրորդին իմ , պահեսցէ զնա , թէ խանդաղակաթ եմ ՚ի սէր ես :

Տես , թէ որպիսի անմեկնելի և անհամեմատելի սէր է եկեղեցւոյ սրբոյ ընդ ա̃յ . և վկայ այսմ բանից՝ վկայից հանդէսք . որք զայնպիսի տանջանս վասն ք̃ի յանձն առին . որ արտաքոյ է տեւողութեան մարմնոյ . այլ ք̃ս ՚ի նոցանէ յայն քան սիրոյն ջերմն եռանդնութե տեսեալ , ըստ փափագմանց նոցա՝ ետ նոցա անմահանալ ՚ի ցաւս տանջանացն . ո̃պ և մեղաւորացն ՚ի յաւիտենական տանջանսն , երբեք սպառնաւոք : Որ զի սիրեցին ս̃քն՝ եթէ հնար գոյր ո՛չ մի անգամ մեռանել վասն սիրոյ ն̃ր , այլ բիւր անգամ , նա և հանապազօր . ո̃պ և ասելինն խիկ բանիւք : Ո̃պ և ս̃քն

դրիգոր ասէր ցորդսն , թէ Խնդ-
րեցէք 'ի նմանէ չերկարել : Նոյն և յիւր
աղօթսն խնդրէր յոյժ զերկարութի :
Արդ՝ զի ցանկութի արդարոց ըն-
դունելի է նմա , տակ շնորհէ նո-
ցա : Եւ երկրորդ՝ զի և հեթանո-
սաց գիտուն արասցէ զսիրոյն գո-
րով՝ որ առ նա . և նախանձ արկցէ
նոցա այնպիսի սիրով ջեռնուլ . որ
և տայր երգումն ադրիանոս՝ սըր-
բոցն . տեսեալ զնոսա յայնպիսի
դառն նեղութիւն՝ ասէ . Աղաչէք
ինչ համարէաք , թէ զի՛նչ հատուցման
ա՛յն ունիք՝ որ այդպէս չարչարանաց համ-
բերէք , թուէր թէ առաւել մեծ էր : Մ̄
որոյ և հաւատոց 'ի քն̄ , և նոյունց
նահատակակից եղև : Իսկ եր-
րորդն , զի և սրբոցն ծնալով կեն-
դանի 'ի վտանգսն յայնպիսի , ի-
մասցին՝ թէ յոյժ է կենդանութիւն .
և կենաց՝ և մահու նա է տր̄ :

Մերձեցուցէք զինեղ դարձէ՛րք երաստաղէ՛մ
'ի յօրութեա , և յածփնութեա անդա-
տանի :

Ոչ այս միանգամ ցուցեալ եմ , թէ
անդաստան զաշխարհս անուանէ .
և ուստի ծի զօրութի և ուժգնութի

ո-

որով հաստատեալ է, և որով պա-
հի յանսասանութէ, 'ի նա տայ եր-
գումն. որ է ք̄ն: Եթէ գտանիցեն
զեղբօրորդին, պատմել, թէ խոցեալ
է 'ի սէր ն̄ր հարսն: Արդ՝ երանելի է
հարցման սիրոյն այնմ անձին, առ-
որում գտանիցի. ո՛ր և պարծի խոկ
պօղոս, եթէ Ո՛չ հրեշտակք, և ո՛չ իշ-
խանութիւնք, և որ զկնի գայ, ո՛չ կարէ
մեկնել զմեզ 'ի սիրոյն ք̄սի: Նա այս է
սէր, որ գոլով ունի յերկինս՝ և
յերկրի՝ այժմ, և յաւուրն քնի. և
ո՛չ այլանդակ սէրս կամ ընչից, կամ
իշխանութեց, կամ գեղոյ, և այլ
սոյնպիսեաց. որ սոտ պարսաւանս
բերէ. և անդ՝ անմահ տանջանս:

9. Գտերք էին, և պահապանք պարս-
պացն հարցանէին ցհարսնն:

Յորդումն առեալք նոքա, հարցա-
նէն ցհարսնն զկերպարանացն՝ որ
'ի մէնջն էառ. զի անտեսք են. և
'ի մէնջ ուսան. որ և գեռևս ու-
սանին. ո՛ր և գրեալ եմ յառաջ
քան զայս:

Ո՞չ ինչ է եղբօրորդին ք̄ո յեղբօրորդեաց
գեղեցիկդ 'ի կանայս. զի՞նչ է եղբօրոր-
դին ք̄ո. զի այդպէս երդմնեցուցեր զմեզ:

10 · Հարսնին նշան տայ զեղբօրորդւոյն ։
Եղբօրորդին իմ սպիտակ է և կարմիր ,
ընտրեալ 'ի բիւրուց ։

Նայսու զմարմին և զարիւն մարդ-
կութեան զոր առ 'ի մէջ կուսէն , ասէ ·
սպիտակ , և կարմիր · վն զի մարմ-
նով և արեամբ գոյացեալ է 'ի կու-
սէն · բայց թէպէտ և այսպէս ,
այլ ոչ 'ի սերմանէ առն յղութի ու-
նելով ամուսնին , և ոչ ապականու-
թբ ծնունդ , այլ 'ի հոգւոյն սրբոյ
յղութի · և 'ի կուսէն ծնունդ , կոյս
և յետ ծննդեանն մնալով նոյն կու-
սին , դրամբք փակելով ելեալ ,
անհամեմատ յայլոց ծննդեանց ·
վն այնորիկ ասէ , թէ ընտրեալ 'ի
բիւրուց · զի ոչ երկունք 'ի ծնըն-
դեանն , և ոչ ցաւք , և ոչ տրտմու-
թիւնք · այլ որպ հրեշտակին զուրա-
խութի և զաւետիսն աւետարանեաց
կուսին , նոյնպէս և եղև ուրախու-
թբ լի ծնունդն ։

11 · Գլուխ նր յոսկւոյն կեփաղեայ ։
Որպ ոսկին այն առաւել մաքուր է ,
և պատուական քան զայլ ոսկի ,
նոյնպէս և գլուխն մեր քս քան զա-
մենայն մաքուրս առաւել է , որ
յեր-

յերկինս , և որ յերկրի են ։ Ո՛ր
որպէս ասէ մարգարէն , թէ Մ՛եղս
ոչ գործեաց նա , և ոչ գտաւ նենգութիւն
'ի բերան նորա ։ Որ և ինքն տ՛րն
ասէր . թէ Ո՞ ի ձէնջ յանդիմանեսցէ
զիս վասն մեղաց ։ Որ և ա՛մ մեղաց
մաքրիչ լոկ եղև ։ Որ և փորձեալ է
ա՛մ ըստ նմանութեան առանց մեղաց . որ-
պէս ասաց առաքեալ ։

Վարսք նորա հոծացեալք , սեաւք իբրև
զագռաւ ։

Իսկ գերդ՝ ոչ 'ի գովութիւն կարգի
են , այլ 'ի նախատանաց . բայց սա
զվայելչականութիւն ասէ՝ ըստ մե-
րումն զիջանելով . զի վարսք քաղա-
թուխք՝ կարի յոյժ գեղեցիկ են
երիտասարդաց ։ Նա և գեղեցիկ էր
'ի տեսանել քան զա՛մ որդիս մարդկան . զոր
յառաջագոյն եղեալ և հայր սորին
սաղմոսին , ասէ ։ Տ՛րդ՝ եթէ ա-
կամ և ակամբք , և որ ինչ է՛ երկ-
րիս վայելչս կերպաձևեալ զգեղ-
եղբօրորդւոյն՝ պատմէ հարսնն ,
դու մի զարմանար . զի ասէ առա-
քեալ , թէ Աներևոյթք նորա 'ի սկզբ-
բանէ աշխարհի՝ արարածովք իմացեալ
տեսանին ։

12 . Աչք նորա իբրև աղաւնիք 'ի վե_ րայ լիութեց ջուրց , լուացեալ կաթամբք նստեալ 'ի վերայ լիութեց ջուրց :

Այսինքն , միամիտ է . որպ գոլեաց ծորն զաղաւնին . այնպէս են աչք նր . ոչ այլ և այլ խարդախ և թիւր հայեացս ունի որպ զմարդիկ , այլ ուղիղ ճշմարիտ և սրահայեաց . և զայնս տեսանէ , զոր կրի 'ի մարդն . և ոչ մոլար խաբեալ յաչացն . որպ աւետարանիչն յոհաննէս : Այլ և յառաջատես քան զստեղծուլն . որպ առ մարգարէն երեմիա ասէր , թէ Մինչչև ստեղծեալ էիր , գիտեմ զքեզ :

Լուացեալ կաթամբք : Ո ի կաթինն հայեացք ոչ ըստ ջրոյն կամ ըստ այլ իրաց բնութեն զայն ցուցանեն յինքեանս՝ զոր չեն . այլ միայն զիւրն ցուցանէ բնութի . և ոչ այլ ինչ յինքեան կարէ ցուցանել որպ այլ խմնաւք : Այլ զինչ է 'ի վերայ լիութէ ջրոյ նստեալ : Ո ի որպ ջուր՝ տեսակ և հայելի լինի արեգա_ կան , նոյնպէս և որք զտեն և մա_ քրեն զիւրեանցն յաղտոյ մեղաց , 'ի նոսա երևի , և որպ 'ի նոսա խակ

նրա_

նստեալ կարծի 'ի հայեցողսն. և
լինի նա ծառ անկեալ 'ի գնացս
ջուրց, բերեալ պտուղ անթար-
շամ, և յարապտուղ անծախ:

13. Ոհոգւոյ նորա Եփրեմ պատաշար խնկոց
բուրէն պանծոյշահոտութիւն եղափործայ:
Այս ցուցանէ զմանրապատում ո-
րոճալից վարդապետութեան բանս
վարդապետաց, առաջնորդաց ե-
կեղեցւոյ, որ յարաժամ անաշխատ
շարժմամբ ծնօտից անոյշ խղուկ
եփեցելոց անուշացուցանեն զմիտս
և զխորհուրդս մարդկան. զժո-
ղովեալսն 'ի սիրտս նոցա իբրև 'ի
տաշտս, սփռեն առաջի մարդկան.
ոչ կարի խորութեամբ զանիմանալիսն
ծածկել, և ոչ կարի յայտնութեամբ
դիւրալուր զխորհուրդսն ա̃յ առնե-
լով. այլ միջակ ուսմամբ տալ ըն-
դունելի զբոյց, զի մի դիւրընկա-
լութիւն արհամարհեսցի իբրև ըն-
դիւրագիւտ իրս, և մի անիմացու-
թիւն անյուսասցի գիւտ 'ի յուսա-
նել կամեցողացն, այլ սակաւ ջա-
նիւ 'ի յիշատակարան սրտից ժողո-
վել զբանս գրոց: Պարձեալ. ո̃ւ
'ի վեր բերելով զկերակուրս՝ ա-

նաս-

նասնոց որ արածին , որոմնն , սոյն-պէս և վարդապետք զ'ի սիրտ ժողովեալսն 'ի մտացն 'ի վեր բերեն զհոգւոյն ս՟րբ բանս . և դարձեալ 'ի վեր բերեալ՝ և մանր ծամելով շարժմամբք անաշխատ ծնօտից , տան 'ի բերանոյ 'ի միտս մարդկան զլուսաւորութիւն գրոց սրբոց , նմանեալ խնկոց եփեցականաց :

Շրթունք նորա շուշան , բղխեն զմուռս լիութեան :

Արդ՝ տես կրկին զգուշութիւն . զի ո՟չ ծնօտքն տաշտք լեալ՝ մատռուակէն զանուշահամ և զանապակ բաժակն յոգնս լողալ բանին , նոյնում և շրթունքն շուշանացեալք՝ բղխեն զմուռս լիութե . զի խրատեն մեռանել ըստ մարմնոյ , և մեռուցանել զանդամս մարմնոյ՝ ոչ սակաւամեռութբ , այլ լիութբ . ըստ՝ կատարեալ մեռելութբ : Զխորհուրդս մտացն մեռուցանելով , ոչ խորհել զերկրաւորս , այլ զերկնայինսն : Զորովայնն մեռուցանել սակաւապէտութբ կերակրոց : Զաչսն մեռուցանել՝ ոչ հայելով յախորժակս պոռնկական տեսութե . այլ 'ի

՚ի գեղն ցանկալի , և յերեւան փա-
փաքելի փեսայլին քոի , որում Հարս-
նացեալ իսկ եղաք ։ Ըստ այսմ և
զնմ անդամմն իմացյիս , և զնմ
զգայութիս , որոց մեռելութ զճշմա-
րիտ կենդանութի ստացուք , խրա-
տեալք ՚ի շուշանացեալ շրթանց
սրբոց ։

14 . Չեւս նոքա ոսկեւ ճախարակեայ ,
լցեալ աչամբ Թարսն ։

Տես , զխորդ զմի մի անդամ ՚ի թիւ
արկեալ բացայայտէ գոլութեքն ։
Զի ոսկի ճախարակեալ անօթք ա-
մենեքին զատեալ՝ և մաքրեալ են ՚ի
պաղրուծ և ՚ի ադեղուծ , սոյնպէս
և եղբօրորդւոյն ձեռնն մաքուր ՚ի
մեղաց իբրև զոսկի ։ Ոչ զխորն մի-
այն ունելով գործք , որպէս ձեռք
մարդոյ , այլ ակամբք Թարսի լը-
ցեալ ․ ըստ այնմ որ յեղեկնելն ա-
սէ , Թէ Ձ է են աչօք լի նոքա ։ Արդ
եթէ սպասաւորայն նոյ Հրեշտա-
կացն՝ նմ անդամք ակն են , և լի
տեսանողութ , որքան առաւել աս-
տուծոյն մարմնացելոյ բանին քոի ,
որ թէպէտ և զմեր աս բնութ ՚ի
կուսէն , այլ ածայլին բնութն միա-
ցեալ ,

ցեալ, զամ անդամ այն է, և տե-
սանող ։ Այլ ասէ լուսաւորիչն մեր
գրիգոր, եթէ [illegible] ամ էրօք լուր է,
ամ էրօք ջեռ է. ամ[illegible] բան է. ոչ որպէս
մեք՝ որ առանձինն ունի խորաքան-
չիւր անդամ զխորաքանչիւր գործ.
ոչ այն լսել կարէ, և ոչ ունին տե-
սանել. ոչ բերան գնալ, և ոչ ոտն
խօսել. և որ այլ անդամոցն գործ ։
Այլ թէպէտ և մերոյս միացու-
մարմնոյ, սակայն բովանդակ ընդ-
հուր ունի զմածութեան զամենակա-
րողութի, և զամենատեսութի ։

Որոշայն նորա տանտանոն ֆոլոնէրեայ ոչանա-
կաւ՝ յաշանոց շամբարայ ։

Զուցանէ զմածային որովայնն ոչ
ոմն զմերս կերակրոց միայն ընդու-
նող՝ և ըմպելեաց, այլ թէպէտ և
մերոյս կերակրեալ, այլ տախտակ
փղոսկրեայ յականակապ շափիղայէ ։
այսինքն, առման մածային գալրու-
թեց, և գրչութեց ։ Օ ի թէ որ հա-
ւատայ՝ ի նա, մածային ստանայ ո-
րովայն. և գետք յորովայնէ նորա
բղխեսցեն ջրոց կենդանութե. ապա
որքան մածայինն այն որովայն ըն-
դունակ կրից մարմնականաց, և

 ժո-

ժողովարան իբր տախտակ իւրոց աստուածային իմաստիցն է. որ և անապական է. որպէս փղոսկրն անփուտ ասեն լինել:

15. Սրունք նորա սիւնք կճեայք հաստատեալք ՚ի վերայ ոսկեայ խարսխաց:

Սեան, որպէս ճշգրտի զամենօրէնութիւն քո՛ի աստուածայինն սողովմն՝ բանին հարսինն նշան տայ զերկրորդ-ւոյն զկատարեալ մարդկութեն լիախառն աստուածութեամբն: Միացեալ պիղծն Նեստորիոս, որ եղծիչ է եկեղեցեաց, և հաղորդ հրէից, և մահմետականաց հաւասար խորհրդակից: Ոչ կամեցեալ ճշգրտել զաստուածային ամենօրէնութեն՝ անորիշ և միացեալ անդամ անդամ, և ընդ զգայարան զգայարան՝ զաստուածութիւն խառն գուշակէ: ՚Ի գլխոյն առեալ սկիզբն, և ընդ ամ անդամն անցեալ. որով կարկէ բերան պղծոյն: Նրդ՝ կճեայ, և ոսկի խարիսխ սեանցն ով է, թէ ոչ աստուածութիւն միացեալ ընդ մարմին՝ անապական մաքուր և անախտ զօրութիւնն:

Տեսիլ նորա իբրև Լիբանանու, ընտրեալ

ժա    Լ    ԻԷ

ընտիր զմայրս:

Օ՞ինչ գուշակէ այս. ասելով մի-անձն զա̅ծայինն մարմնոյն, զխարդ-մարթի նմանիլ մայրիցն լիբանա-նու բազմութեն, որ յառաւել բերէ զն բազմութե մայրիցն, թէ Ար-դար որպէս զարմաւենիս ծաղկեսցէ. որ-պէս զմայրսն Լիբանանու բազմասցէ: Եթէ ոչ յայտնապէս աղաղակէ մտաւորաց եւ անզգայից, թէ եւ 'ի մարմնի փակեցաւ յաղագս խառն-մանն, այլ զօրութի, եւ հասակն բարձր քան զմայրսն լիբանանու, եւ բազում: Ոչ եթէ միայն այս-չափ զօրութին եւ բարձրութին է, այլ զի զմեզս առեալ, 'ի մերոցս պարտի օրինակ բերել: Որ եւ մար-գարէն ասէ, թէ [illegible] տառնէ-նոցա. եւ զարդարութեն նորա յանձնեսցէ: Նոյնպէս եւ զաբրիէլ ասէր ցկոյսն, թէ Տացէ նմա տ̅ր ա̅ծ զաթոռն դաւթի հօր նորա. եւ թագաւորեսցէ 'ի վերայ տանն յակոբայ յաւիտեանս: Որ ա̅ծ երկրի էր թագաւոր, յակոբայ միայն ասէր՝ վ̅ն մեզ զիջանելոյ:

16. Կոկորդ նորա լի քաղցրութեամբ:

«Քաղցրութե, զայն ասէ զլի քաղ-

ցրու-

ցութ̃ի բարբառն մ̃ծայնին կոկոր-
դին . ընդ որ աղաղակ բարձեալ
ասէր : Եկայք առ իս ամ̃ աշխատեալք ,
և բեռնաւորք . և ես հանգուցից զձեզ :
Եւ դարձեալ , թէ Ո՛չ եկի կոչել զար-
դարս , այլ զմեղաւորս : Եւ որ այլ
սոյնպիսիք քաղցրութեան նորա կոչ-
մունք առ մեղաւորս , և ամբա-
րիշտս : Ոպ̃ ասէր ցպոռնիկ կինն ,
թէ Թողեալ լիցին քեզ մեղք քո : Եւ
ցմիւս պոռնիկն , թէ Եւ ո՛չ ես դա-
տապարտեմ զքեզ . երթ յայսմ հետէ մի մե-
ղանչեր :

Եւ ամենևին ցանկալի :

Տե՛ս , ամենևին ցանկալի՝ ասէ . զի թէ
ամ̃ ցանկութ̃ց գեր 'ի վերոյ է . յո-
րում ամ̃ ցանկութ̃ի դադարէ . զի
ոչ գտանի առաւել քան զցանկու-
թ̃ի ցանկալի : Ըստ որում տ̃րն ա-
սէր , թէ Բազում մարգարէք , և թա-
գաւորք ցանկացան տեսանել զոր տեսա-
նէքդ , և ո՛չ տեսին . և լսել զոր լսէքդ ,
և ոչ լուան : Ըստ որում և այլուր
ասէ տ̃րն ցաշակերտսն . Եկեսցեն
աւուրք ցանկանալոյ ձեզ , զի յաւուրցն
որդւոյ մարդոյ տեսանել , և ոչ կարասջիք
տեսանել : Որոյ տեսութ̃ե ցանկացեալ

մաքսապետն զաքէոս , և հոգևորապ̃ տեսեալ զԱծ̃ մարմնով ծածկեալ ,՚ի բաց մերկացուց յիւրմէ ըզփառս և զինչս , գիտացեալ ցանկալի միայն զինքն զՏ̃րն : Ո՛ր և առաքեալքն տեսեալ զամենևին ցանկալին , որպ̃ տեսանել արժան էր , թողին զա̃մ ինչ , զկին և զորդիս , զհայր և զմայր և զինչս , և որ ըստ այսմ ևս . և գնացին զհետ նորա : Ո՛ւ ստուգապէս ծանեան , թէ նա միայն է ՚ի տեսողութիւնս ցանկալիս՝ ճշմարիտ : Որում և հերովդէս ՚ի բազում ժամանակաց ցանկացեալ էր տեսանել զՏ̃րն : Այլ զի կուրացեալ հոգւոյ աչքն՝ մարմնոյ աչաց տեսութենն՝ որ մեղօք խաւարեալ էր , անարգել ըզցանկալին ուսուցին : Որ և այժմ ևս հանդիպին յանարժանս նորա գործոյն հրաշից տեսութե , ոչ տեսանել որպ̃ արժան է . զի կուրացեալ է առաջնորդական միտսն :

Այն է եղբօրորդին իմ , և այն է մերձաւոր իմ , դստերք Երէմ :

Որչափ կարէր , զառաւելեալն քան զբանս և զօրինակս , եցոյց դստերաց

քաց եմք, զգեղեցկութիւն տեսանելով քան զամ որդիս մարդկան ։

17. Հարցանէին դարձեալ եթէ՝ ո՛ւր գնաց եղբօրորդի նորա ։ Ո՛ւր գնաց եղբօրորդին քո, գեղեցի՛կդ ՚ի կանայս. ո՛ւր գնաց եղբօրորդին քո. և խնդրեսցուք ընդ քեզ ։ Աստանօր դստերս եմք՝ զհրեշտակս ասէ՝ զկերպինն եղեմք զբնակիչսն ։ Աղէ տես դու, զի զանտեսանելին իւրեանց, որ մեզ տեսաւ ՚ի մարմնի՝ եղեալ ընդ մեզ, ցանկան տեսանել մարմնով. զոր և ՚ի մէնջ իսկ ուսան, և դեռ ևս ուսանին զնոր խոնարհումն յերկնից և զմարդեղութիւնն ։ Որպէս սուրբն առաքեալ ։ Զի յայտնեսցի արդ իշխանութեանց, որ յերկինս են, ՚ի ձեռն եկեղեցւոյ. զնոր փրկութիւնաբեր տնօրէնութիւն ՚ի մէնջ լուեալ՝ գիտունք լինին. և սքանչացեալք անբաւ զարմացմամբ ընդ անչափ սէրն որ առ մեզ, և ընդ անխմանալի խոնարհումն, ընդ մեզ միաձայնեալ օրհնեն, և տօնակից ընդ մեզ լինին. որպէս և բացայայտեն վարդապետք ։ Այլ որ՝ գեղեցիկդ ՚ի կա-

նոյա զհարսնն կոչեն , յաղագս գե-
ղեցիկ վարուց՝ զոր ստացաւ եկե-
ղեցի քի գալստեամբն . և զի ըզ-
հարսին ունիմք զօրինակ : Նոյնն
և կանայս ասէ , զի հարսնութիւն
կանանց է :

---

## ԳԼ . Օ :

1 . ԵՂԲՕՐՈՐԴԻՆ ԻՄ ԷՋ 'Ի ՊԱՐՏԷԶՆ ԻՒՐ :
Պարտէզ՝ զհաւատացեալս ասէ , որ
հարսնացան քի : Որպէս և 'ի միւ-
սում տեղւոջ այգի անուանէ՝ հայր
սորուն սաղմոսնի . Նոյնպէս և Ե-
սայի : Նա և ինքն իսկ եղբօրորդիս
քո՝ ասէ յաւետարանին , թէ ԵՍ
ԵՄ ՈՐԹ . ԵՒ ԴՈՒՔ ՈՒՌՔ :

ԵՂԲՕՐՈՐԴԻՆ ԻՄ ԷՋ 'Ի ՊԱՐՏԷԶՆ ԻՒՐ . 'Ի
ԴԱՇՏՍ ԽՆԿՈՑ , ՀՈՎՈՒԵԼ 'Ի ԲՈՒՐԱՍՏԱՆՍ ,
ԵՒ ԺՈՂՈՎԵԼ 'Ի ՇՈՒՇԱՆՍ :

Որ պարտէզն է , նոյն և բուրաս-
տան կոչի . որ եղբօրորդին՝ նոյն և
հովիւ յինքենէ անուանի , ասելով .
ԵՍ ԵՄ ՀՈՎԻՒՆ ՔԱՋ : Նկն հովուել
և արածել զոչխարսն՝ ոչ ևս այլով
հովուօք հովուել . որպէս և ասէ Եզե-
կիէլին մարգարէին . Որ զարօտն
ար-

արմոջ նախ ինքեանք ուտէին. և զյստակ ջուրս նախ ինքեանք ըմպէին. և զմնացեալն յինքեանց զընդգետինս հարեալ զդարմանան, և զկոխեալս 'ի կճղակացն զպղտորեալ ջուրսն թողուին հօտին. և զգէրսն 'ի նոցանէ զենուին. և ըղ- վատեալսն ոչ յանձանձէին. և որ այլ այնպիսիք բանք, զոր մարգարէիւքն բողոքէ զանօրէնութ հովուացն: Այլ զինքն լինել հովիւ ասէ սուրբն մարգարէիւ, որ ճարտարութ արածէ և յանձանձէ, և ոչ տայ դողոյ ապականել, այլ առաքինութիւն, և արդարութիւն ջամբեալ մեզ՝ ժողովէ 'ի մէնջ շահանս. զի, զծաղիկս հաւատոյ բանին, և զբարութիւն. որովք զըուարձանայ փեսայն քն:

2. Ես եղբօրորդւոյն իմոյ, և եղբօրորդին իմ ինձ. որ հովուէ 'ի մէջ շուշանաց:

Այսու բանիւք յայտ առնէ հարսըն զջերմն սէրն զոր ունի առ եղբօրորդին. և ոչ կամի քակել 'ի հովուութէ նորա, և զհետ արօտի յօտար արօտս երթալ. այլ և ասացն ինքն եղբօրորդին քն. Աշխարհ իմ

ձայնէ

ձայնի իմոյ լսեն, և զինի իմ գան . զօ-րավարի զհետ ո՛չ երթիցեն, այլ փախիցեն ՚ի նմանէ : Ոչ ի այս տեսանօղս ստացեալ հօտին, շուշանաբոյծ հովուէին հետևեալք, որ ճաշակին նախ և առաջին զհուր մարմին և զարիւնն սոյ, և ապա զանպատմելի բարութիւնս : Նա՛ զհամեղութիւն գրոց իմաստից, որ քաղցր են ՚ի քիմս սրբոց քան զմեղր բերանոյ . և անդ՝ զայն որ արտաքոյ է իմաստից, որ է ըստ ծածաքանի ասելոյն, նորա ուսուցանելն, և մեր ուսանելն . զոր և ինքն ասաց նոր ըմպել ընդ ձեզ յարքայութեան հօր :

3 · Թեւոյն ցհարսնն ասէ : Գեղեցիկ ես մերձաւոր իմ իբրև զհաճոյութիւն, գեղեցիկ ես իբրև զԵմ, իբրև զհետացուած զարգեալ : Դարձո՛ զաչս քո յինէն . Վասն զի դոքա ընդոստուցին զիս :

Տես աստանօր զանբաւ գովութի հարսինն որ ՚ի փեսայէն : Ոչ ի տեսեալ զհարսնն ծանուցեալ զփեսայն, զոր և թուեաց գովութե զմի ամի զգայարան մարմնացելոյ բանին անձառապէս սքանչելի, և որչափ հնար էր՝ մերովքս երևեցելովքս

լոյծս և ապականացուծոյս ձևա-
ցուցեալ զփափաքելին, զարտաքոյ
մերոյս բնութե և երևելեացս և ա-
պականացուէս ծանուցեալ զգե-
ղեցկութի, որքան ուսանելն փափա-
քելին, և զտարփումն անյագ սի-
րոյն որ առ նա, երանէ և փեսայն
քս ածայլին բերանովն զհաւատս
հարսին, և զգեղեցկութիւն՝ յոր
փոխեցաւ աւազանաւն ըստ իւրա-
քանչիւր անդամոց և զգայութեց.
զի եղև ստուգապէս, որպէս ասաց
ածաբան, առ ած հայելովն ածա-
նալ. ցուցանէ, թէ զաստուածոյն
առնուն զգեղեցկութիւն՝ որք 'ի նա
հայելին, և 'ի նա մօտենան. որպէս
պատրոյգն 'ի ճրագն մերձենալով՝
'ի նոյն լոյս փոփոխի: Նոյդ՝ զոր
հարսնէ եւս նշան զգեղեցկութե
փեսային և եղբօրորդւոյն, նոյն
լեալ և ձևացեալ զհարսնն՝ փեսայն
գուշակէ, ասելով. Գեղեցիկ ես մեր-
յաւուրէն էքրն զանուշահոտութե. տես,
մերձաւոր լինելովն փեսային քսի՝
հարսնն, յաղագս սրբութեն եղև գե-
ղեցիկ իբրև զանուշահոտուե: Ոչ
ինչ որ յանուշահոտ մերձենայ, ա-
նու-

նուաշահոտն , նոյնպէս և որ առ մեծ մերձենայ , մեծանայ :

Պնդեցէք եւ Էփրեմ զերուսաղէմ :

Ո՛ ի բնակարան եղև փեսային գե֊ ղեցկի՝ որպէս զերկինս և զվերինն երուսաղէմ :

Էփրեմ ընդդիմացումն կարգեալ :

Նայինքն թէ ՚ի հիացումն կարգե֊ ցար · զի տեսանելով զփոփոխումն քո ՚ի սևուէ մեղացն , զոր ունէիր յառաջ քան յիս մերձաւորիլն , յայնպիսի սքանչելատեսակ գեղ֊ ամբծութեն , ընդ որ հիանամ · և հրեշտակաց հիացումն լինի : Որպէս մին հիացաւ իսկ ընդ հաւատս հա֊ րիւրապետին , և ասէ , թէ Ա՛ն ո՛չ չէգի այսպիսի հաւատս գտի Իսրայէլ :

4 · Պարանո՛ց քո իբրեւ զաշտարակ · Աչքն քո իբ֊ րեւ ընդարձակացեալ լիճ :

Նայինքն , աչաց քոց յստակատե֊ սութիւն և սուրբատեսութիւն որ յիս , որ իմացար զիմ անօրինա֊ կան գեղեցկութիւնս , որ ՚ի տկար և ՚ի հողեղէն բնութէ եղայ , որ հրեշտակաց անիմանալի էր , և դու իմացար և տեսեր ՚ի վեր քան ըզ֊ բնութէ տեսութի զիս , ընդդստուցին զիս

զիս այդ աչք ։ Դարձո՛ զաչս քո յի֊
նէն 'ի խուզել զիմ զանհաս բնու֊
թեան զգեղեցկութի՛ն, զի մի՛ յաւա֊
ռել տեսանելն, և յամել 'ի քննելն՝
շլասցին և կուրասցին մնայց աչքդ ·
որ պօղոսին մարմնոյ աչքն 'ի հայ֊
ելն 'ի սաստիկ լուսն ։ Զի որ յա֊
րեգակն աշնունն՝ պակասութիւն ըն֊
ձեռն աչաց հայեցողին, նոյնպէս
և աւելի քան զչափն յառել 'ի խորս
գիտութեան ոյ, շլացումն մնայց աչացն
բերէ ։ Վն զի որչափ են ա̃ծ տեսու֊
թ̃ք և զօրութ̃ք, և սքանչելագոր֊
ծութ̃ք, զոր ոչ կարէ ոք հասանել ։
որ և հրեշտակաց անհասանելի է,
թո՛ղ թէ մարդկան ։ Արդ՝ դարձո՛
զաչս քո յինէն առ փեսայն քն ։ զի
դարս ընդդատուցին զիս երկիւղին,
և սքանչմամբ ։ Սքանչմամբ, յա֊
ղագս սրահայեցութեանց ։ և երկիւ֊
ղին, թէ դուցէ յառաւել հայելդ֊
կուրասցիս ։ Նա և մինչ 'ի սա֊
կաւ ինչ տեսանելն դարձոյց զե֊
րեսս իւր, և ոչ իշխէր հայել ։
Նոյնպէս և եղիա ծածկեաց մաշ֊
կեկաւն զերեսն 'ի տեսանելն ըղ֊
ջեռոյն միայն, որ թէ ձայնի ար֊

ձա֊

ձագանգ միայն :

5. Վարսք քո իբրեւ զերամակս կտրելոց. որք երեւեցան 'ի Գաղաադէ : Ատամունք քո իբրեւ զերամակս կտրելոց. որ ելանեն 'ի լուալեաց :

*Վարսքն հիւսելով 'ի վարսն փեսայլին՝ որ 'ի վ՟ր մեր սեւացաւ, եւ զմեղս յինքըն եառ, որ ոչ գիտէր զմեղս՝ վ՟ն մեր մեղս արար. զի մեք եղիցուք նովաւ արդարութիւն : Նաեւ արդարացեալք սպիտակացեալք մկրտութ՟բ եւ լուացմամբ աւազանին. 'ի գաղայադէ երամակացեալք բազմութ՟բ հաւատացելոց 'ի ք՟ս՝ եւ հարսնացելոց : Նոյնպէս եւ ատամունք մանրող բանին կենաց՝ իբրեւ զերամակս կտրելոց, որք ելանեն 'ի լուալեաց հոգեւոր ջրոյն, որ լուանայ, եւ մաքրէ առաւել քան զոչխարս մաքրեալս :*

Ամենեքեան երկուորիք են. եւ անորդի ո՛չ գոյ 'ի նոսա :

*Զայս լուալիս երամակաց հաւատացելոց՝ յառաջագոյն եւ Եսայիաս վկայէ.* Ուրա՛խ լեր ամուլ, որ ոչ ծնանէիր. գոչեա՛ եւ աղաղակեա՛, որ ոչ երկնէիր. զի բազում են որդիք անորդւոյ առաւել քան զարամբւոյն : *Նոյնու զբազ-*

մածնունդ լինել 'ի յուղղութեան վարս՝ զհեթանոսաց բազմունն հաւատացելոց գուշակէ ։ Որպէս և 'ի միում վայրի սոյն մարգարէ Եսայի 'ի բերանոյ տն վերաձայնեալ ըսքանչմամբ հարցանէ ․ Ո՞վ են սոքա, որ իբրեւ զամպս թռուցեալ են, և իբրեւ զաղաւնիս յափշտակեալ երամովքն գան առ իս ։

6․ Իբրեւ զթել կարմիր շրթունք քո ․ և խօսք քո գեղեցիկ ․ իբրեւ զկեղեւ նռան այտք քո , բաց 'ի լռութենէ քումմէ ։

Օ յառաջագոյն քան զայս ասացեալս դարձեալ երկրորդեաց զգովութիւն հարսինն , մերձենալով 'ի փեսայն ։ Աչացն՝ յաչսն ա͞ծայինն ․ վարսիցն՝ 'ի վարսն լուսաւորսն ։ գլխոյն՝ 'ի գլուխն ք͞ս ․ շրթանցն 'ի շրթունսն , որ բղխեաց զկենդանութիւն ․ զի կարմրացան շրթունքն արեամբն ք͞սի ․ և զնոյն խօսին զորինքն ուսոյց խօսել ․ աղօթս առնել թշնամեաց , և օրհնել զհալածիչսն ․ և որ նոցին նմանք ։ Իսկ ո՞ր նուռն կարմրութ͞բ կեղեւոյն զ'ի ներքս համբարեալ անուշակերակրութիւն՝ առ 'ի յառողջութիւն ախտացելոց և փափաքողաց հայեցուցա-

նէ լուսոյ , սոյնպէս և ընտրեալք այ սակաւ ինչ յերևելիսս տեսա-ղոյ երևեցուցեալ զբարի գործս , զ'ի ներքս 'ի սիրտն և 'ի միտսն զանչափ առաքինութե և ածասիրու-թեան համբաւս լուսոյ ծանուցա-նեն . զի և իմաստութե հետազօ-տեալ 'ի մարդ՝ և 'ի դիմացն երևի ։ Այս է որ ասէ , թէ ելայ 'ի լուսաւորէ-տեսմն ։ Ասէ որչափ ես գեղեցիկ զա-նազան զգայութեք լցեալ և զարդա-րեալ , լուեալ ես . և անպատմելի մինչև յօրն , որ ամ խորք 'ի վեր գան . և անտեսանելիք 'ի տես գան . և լուեալք՝ լսին . զոր ինքն փեսայն յահեղ ատենին հրեշտակաց և մարդկան ցուցանէ ։ Որդ՝ սակաւ ինչ թուէելով՝ զբազմութի սրբոցն ծանուցանէ , որ յայս վեց հազա-րեան դարուս զտեալ մաքրեցան 'ի մեղաց՝ նեղութիք և այնպէս փորձութք , զոր կրեցին 'ի սատա-նայէ , և 'ի սատանայացելոց 'ի մարդկանէ . և եղեն թագուհիք և հարճք և օրիորդք փեսային քսի ըստ իւրաքանչիւր ջանից՝ և քրը-տանց , անուանեալք՝ և լեալք թա-

գու-

գուհիք , և հարճք , և օրիորդք ,
զոր և ասէ լինել :

7. Վաթսուն են թագուհիք , և ութ-
սուն հարճք . և օրիորդք որոց ո՛չ գոյ
թիւ :

Այսու զբազմունս այնց բացայայ-
տէ , որք յութերորդին փառաւորին
ընդ քոի , և ուրախանան հանդըր-
ձեալք Է նմա . իբր թէ ընդ նմա
աշխատեցան 'ի վեցդարեան ժամա-
նակին իւրեանց . ո՛չ ասէ սԷ լու-
սաւորիչն մեր . և ընդ նմա են ու-
րախանալոց : Վաթսուն թիւքն
զերկուս միտս խմանի . և զի վաթ-
սունն 'ի վեց տասն , և 'ի հինգ
երկոտասան մասունս բաժանի :
Այս հինգ երկոտասան ցեղիցն իս-
րայելի՝ ասէ . յորոց 'ի վեցհազա-
րեան դարուս հինգ զգայարանօք
եղեն ընտրեալք 'ի նոցանէ . և յա-
ղագս անդրանկութեն կոչեցան թա-
գուհիք . զի յառաջ քան զհեթա-
նոսս հաճոյացան Այ : Ըստ և ասէ 'ի
յովհաննու աւետարանչի տեսլեանն՝
զճմ ցեղ ուրոյն ուրոյն թուելով
երկոտասան հազար 'ի մի մի ցեղէ :
Իսկ ութսուն հարճս , և օրիորդս

անթիւս զայնոսիկ ասէ, որ 'ի հե-
թանոսաց հաճոյացան այ։ Այսու
համարով ոչ եթէ ընդ համարով
փակէ զնոսա, այլ ոչ 'ի միականս,
նոյնպէս և 'ի տասնեակսն ցուցեալ
բացայայտէ, և անթիւ ցուցանէ
զարդարացեալսն 'ի հեթանոսաց՝
քան 'ի հրէից, քրիստոսի գալստեամբն։
Եւ երկրորդն, վաթսունիցն վեց հա-
զարեան դարուն ասէ. և որ 'ի նոսա
բազում քրտամբք և աշխատութեամբք
փորձեալ՝ ոչ արծաթ 'ի բովս, ոչ
յառաջին ասացի, առին զթագուհ-
ւոյութեան անուն՝ վասն առաւել սիրե-
լի այ լինելոյն։ Որ սաստ իսկ փա-
ռաւորեցան 'ի մարդկանէ, և անդ-
առաւել ևս փառաւորելոց են։ Որպ
Աստուածածինն, և Յովհաննէս մկրտիչն.
և նախավկայն. և առաքեալքն.
և մեր լուսաւորիչն գրիգոր. և վար-
դապետն տիեզերաց յոհան. և եր-
րորդութեան ծանուցիչն աստուածաբան։
Եւ ութսուն հարճք, որ կրտսե-
րագոյն քան զնոսա են վաստակօք,
բայց առաւելագոյնք քան զօրինորդ-
սըն, են՝ որ յութերորդին են պը-
սակելոց ութսուն հարճքն։ Եւ որ

զա-

զանազան վարուք, և ապաշխարու-
թե՛ զհաշտութին դառեալ են, և ար-
քայութեն հասանեն յութերորդին,
օրիորդք կոչին՝ որոց ո՛չ գոյ թիւ.
զի անչափ են ապաշխարութե՛ փըր-
կեալքն ։ Ոյ հարձն՝ զմարտիւ-
րոսս կոչէ. և օրիորդս՝ զձգնաւորս
և զապաշխարողս զաղքատացեալս
մարմնով. և որ 'ի ժամ ելանելոյն
յՇէս դատանեն արտասուօք և ա-
պաշաւանօք զթողութին մեղաց, և
զարքայութին՝ հաղորդութե՛ մարմնոյ
և արեանն քսի ։ Նա և մե՛ լուսա-
ւորիչն՝ կարգ մի զապաշխարողն
և զխոստովանողն համարի, և որ
'ի ժամ ելանելոյն դառնան. 'ի
թուէլ զմարտիւրոսս, և զձգնա-
ւորս, և զվարդապետս, և որ այլն
են. և թիւ մի զոսա դնէ ։ Որդ՝
յերկուցդ զմինն՝ որ հաձոյն թուին
քեզ, ընկալ. և կամ զերկոսինդ
են. զի միտք գրոց 'ի բազումն մեկ-
նին ։

8. Մի է աղաւնի իմ կատարեալ իմ. Մի
է մօր իւրոյ, ընտրեալ ծնողի իւրոյ ։

Տես, թէպէտ և այլ և այլ են ան-
ուանքն թագուհիքն՝ և հարձք,

և օրինորդք , և որ ըստ անուանց և փառքն , այլ ըստ աւազանին , և ըստ խոստովանութեան արտասուաց մի են , ապաւինք լեալք մօր եկեղեցւոյ , մի լեալ որդիք և ծնողի հոգւոյն սրբոյ : Վասն այսորիկ ասէ . Մի է աղաւնի իմ , կատարեալ իմ , մի է մօր իւրոյ , եկեղեցւոյ , ընտրեալ ծնողի իւրոյ , հոգւոյն սրբոյ ծնընդեամբ աւազանին : Զի ծնանի հոգւին որք մկրտութեամբ , և մնուցանէ եկեղեցի մարմնով և արեամբն քսի : Զսոյն և Բասիլիոս վկայէ ասելովն . Նոյնպէս և Աշխարհս մայրս ձեր Եկեղեցի հոգեւոր զգաստութեամբ հնազանդ և կամարար որդւոց , ընդունակացելոց առեմ ըմբռնողութեանց : Նաև յառաջ երթեալ , ասէ . Աղաւնի սիրուն հօր , և հաստատեալ մօր , սբ հյ , և Եկեղեցւոյ՝ հաստատեալ գոլով որդեաց , անդ անխախտելի սուրբ հայրն ձեր պահեցէք . և նայեցեալք ՚ի սրբոյն ծաղկանս , որ են գանձք ձերոյ մօր Եկեղեցւոյ , թերթերեալք յոտով , սուրբ խոստովանութեամբ ցնծացէք . որպէս զի ընտրեալն՝ որ զերկնային լուսաւորեցին , և զիջել արժանի արասցեն հասանել ՚ի նման կենսակի ժառանգութեանց սրբոցն ՚ի լոյս : Նաև յառաջ

ռաջ երթեալ՝ տայ. Ստեփաննոս սըր-
բոյ Մօր եկեղեցւոյ մէ որդի, եւ պարծանք
գանգամայն Լըոմէէ նէ: Տես զի զեկե-
ղեցի՝ զոր Հաւատոց մայր ասաց ,
զնոյն եւ ստեփաննոսի ասաց. եւ այ-
լոց սրբոց առաքելոց եւ մարգարէից
եւ մարտիրոսաց , եւ ամ Հաւատա-
ցելոց : Ոլի թէ փառօք ոչ են մի-
աբքն , այլ մի են ծնունդք նը եկե-
ղեցւոյ . եւ յայսմ եկեղեցւոյ 'ի մի
եկեղեցի փոխին 'ի վերինն եէմ :
Վասն այսորիկ պիտոյ է զեկեղեցի
առաւել սիրել քան զմարմնոյ ծը-
նօղս՝ վասն առաւել ծնողութենն :
Ոլի ոմ Հոգի առաւել է քան ըզ-
մարմին , սոյնպէս եւ Հոգւոց մայր՝
քան զմարմնոյ մայր : Արդ՝ ոմ որք
'ի մօրէ կաթանցն , եւ 'ի սննդենէ
նորա օտարանանն , եւ զմահ կրեն ,
նոյնպէս եւ որք 'ի յեկեղեցւոյ , եւ
'ի նորա սոեանցն , եւ 'ի Հոգեւոր
կերակրոյն 'ի գրոց , որ է սոկնք ե-
կեղեցւոյ , օտարանան , եւ ոչ փա-
փաքմամբ եւ բաղձանօք մտանեն 'ի
նա՝ եւ կերակրին 'ի նմա գրովք ,
ոչ կարեն կեալ . այլ մեռանին զան-
մահ մահն : Զայսոսիկ եւ մարգա-

րէն

րէն տեսանելով՝ աւաղէ ասելով. Օտար եղեն մեղաւորք ՚ի մօրէ, խաբե-ցան յարգանդէ, և խօսեցան սուտ։ Նոյ-նքն զդաւանութին, և զուխտն զոր ուխտեցին ՚ի ծննդեան աւազա-նին, սիրել զՀայրն ա̃ծ, և զմայրն եկեղեցի, ատեցին, և օտարացան։ Ոչ զոր արտաքոյ գտեալ սատա-նայի՝ ՚ի մօրէն որ է եկեղեցի, գե-րի առեալ տանի, ո̃պ զմարդավա-ճառ, որք գողանան զմանկունսն՝ զոր հեռագոյն ՚ի ծնողացն գտա-նեն։ Նաև զաղօթսն զոր յեկե-ղեցւոյն պարտէ առնել առաջի սե-ղանոյ նորա, ուր ն̃բ երրորդութին բնակեալ է, զայն ՚ի գռեհս, և ՚ի հրապարակս, և յանսուրբ տեղիս պաշտեն. և զեկեղեցւոյ պատին գռեհաց՝ և փողոցաց տան. որ դա-տապարտութի, և ոչ ողորմութի գտա-նեն վ̃ս այսոր յանցանաց, որ զեկե-ղեցի արհամարհեն, և արտաքոյ զպաշտօնն կատարեն. բազում բա-նից՝ և ողբալից աւաղմանց պէտք են, որ զայսոսիկ առնեն. և այլ ժամանակի պէտք են ասելոյ. զի չէ փոքր վնաս այն։ Բայց մեք դառ-

զա-

զառաջիկայ բանս մեկնեսցուք ։

*Տեսին զնա դստերք, և գովեցին. թագուհիք, և երանեցին զնա ։*

Դստերք, և թագուհիք և տեսին զհարսն, և երանեցին զնա ։ Դստ՝ դստերս, և թագուհիս՝ զժողովս հրեշտակաց կոչէ, զեկեղեցիս անդրանկաց գրելոցն 'ի յերկինս ։ Տես, որպիսի փառաց եհաս մարդս, որ հրեշտակք՝ որ անմահութբ, և լուսեղէն փառօք են պատուեալ, և գերագոյն բնութբ հոգխացեալք, և մերձ յա̅ծ են, մարդկան երանեն ։ Ոչ յիրաւի իսկ, զի ընդ մարդկան ա̅ծ. այլ և մեր բնութես ա̅ծ լեալ եւս, և ընդ ա̅յ միացեալ, և հրեշտակաց ա̅ծ ։ Ուր հրեշտակք ահիւ և դողութբ մեր ա̅ծացեալ բնութես փառաբանիչք և երկրպագուք, և դողութբ հայեցողք ։ Ոչ ի զա̅ծ ոչ ոք ետես երբէք. և որ յա̅ծն միաւորեցաւ մեր բնութիս, յաղագս միաւորութեն և նա անտեսանելի է 'ի հրեշտակաց ։ Ուր դարձեալ հրեշտակք՝ որ անմարմինք են, ծառայք ա̅յ կոչին. և մարդիկ որ հոգեղէնք են, հոգւոյն սրբոյ

ծնունդք և որդիք անդ ունին . և կերակրոդք մարմնոյ՝ և արեան նորա . և 'ի մեզ առնլով զայն՝ որ նոքա հուպ լինել չիշխեն , և ոչ հայել կարողանան . ապա յիրաւի կարօտին մեզ հրեշտակք . նաև նախանձին ըստ մեր անչափ ձիրն , որ տուաւ 'ի փեսայէն . որպէս ասէ տէրն առակաւոր բանիւն յաւետարանն՝ անդրանկի որդւոյն բանիւ , որ են հրեշտակք , Թէ Այս քանի՞ ամք են , զի ծառայեմ քեզ , և երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի . և ինձ երբէք ոչ ետուր ուլ , զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ . և դմա , որ եկեր զինչս քո ընդ պոռնիկս , զենեցեր պարարակ զուարակ : Յս զորդւոյն ով զենեալ մարմնովն՝ զոր 'ի մենջն էառ : Նա և սպասաւորք ևս մեզ եղեն վերադոյնք քան զմեզ . որպէս ասէ առաքեալ . Ոչ ամենեքեան հոգիք են հարկաւորք , որ առաքին 'ի սպասաւորութիւն այնոցիկ , որ ժառանգելոց են ըզփրկութիւն : Որդ՝ յերանեցին զհարսնն դստերքն և թագուհիքն՝ ասեն :

9 . Ո՞վ է սա՝ որ երևեալ է իբրև զառաւօտ գեղեցիկ , իբրև զլուսին ընտիր , իբրև զարեգակն , իբրև զհիացումն կարգեալ :

գեալ:

Այս արդարև հիացումն է 'ի հողեղէն բնութենէ այնպիսի լինել իբրև զառաւօտ, և իբրև զլուսին, և իբրև զարեգակն կարգեալ 'ի հիացումն հրեշտակաց: Այսմ և Տէրն վկայէ, ասելովն, Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրև զարեգակն յարքայութեան երկնից: Այլ և առաւել քան զարեգակն ծագեսցեն արդարքն. բայց զի յերկրի քան զայսոսիկ չիք պայծառագոյն, վասն այսորիկ սովին կերպիւ գովին արդարքն:

10. Փեսայն ցուցանէ ասէ: 'Ի պարտէզս ընկուզենեաց իջի հայել յարմտիս ռուղխից. տեսանել՝ եթէ ծաղկեալ իցէ նոճն, ծաղկեալ իցէ որթն, ծաղկեալ իցեն նռնենիք: Այս քննելի է յոյժ. զի պարտէզ ընկուզենեաց ասաց զհարսնն, և զայլ բերոց խնդրեաց զտեսութեն ծաղկաց, և ոչ պարտիզին. զորթոյ, զնոճի. և զնռնենեաց: Արդ՝ ինձ այսու իմանի՝ ընկուզենեաց պարտէզ՝ զերկիր ասել. և զմարդիկ բնակող սորա՝ ընկոյզ կոչէ. զի երկու բնութ է ընկուզն զանկեալ. մի փեճեկումն, ոչ ունի զփայտի բնութ.

և

և մի՝ որ 'ի ներքս պարարտութիւն ։
զի և հոգի որ պարարտ է զօրութ̃ ,
մարմնով փակեալ է . բայց թէ
միաբանին յարդարուն̃ , և ոչ լինին
հակառակ իրերաց . որպ̃ առաքեալ
ասէ , թէ Մարմին ցանկայ հակառակ
հոգւոյ . և հոգի հակառակ մարմնոյ . և
զի այսոքիկ միմեանց հակառակ են , մի զոր կա֊
միցիք՝ զայն առնիցէք ։ Արդ՝ եթէ 'ի
հակառակացն դարձեալ միաբան
գտանին իրերաց , ըմպելով զուխս
հոգւոյն , արմունք լինին ծաղկա֊
բերք , և վայելչական գեղեցկա֊
տեսութ̃ . բարձրանան իբրև զնոճ .
և անապականանայ մարմինն իբրև
զհոգին . և որթ լինի գինեբեր ,
զի 'ի բաժակ երկնաւոր փեսային
ճմլեսցի ողկոյզն . և կերակուր լի֊
նի երկնաւոր արքային . զորօրի֊
նակ նուռնն՝ թագաւորաց ։ Բայց
զիջումն որ ասաց , թէ 'ի պարտէզ
ընկուզեաց իջի , զմարմնաւորութ̃
զիջումն բանին որպ̃ ասէ . որ 'ի դէպ
ժամանակի էջ յերկիր , յարօրեա֊
ըն օրինօք , և մարգարէիւք , կա֊
տարելապէս տալ ցուցանել զտե֊
սակ պտղոց փրկութեան 'ի ծաղ֊

կեղոյն բերից արմտեաց. զի նոքա զգալուստ փոկչին քարոզեցին, որ էր ծաղիկ. և 'ի ժամանակ գալըս- տեան ցուցակի միածնին ա̃յ տնօ- րէնութե̃ ժողովել զպտուղ այգ- ւոյն. ոմ̃ առաքաւորի յաւետարա- նին :

11. Հարսնն ցփեսայն ասէ : Ահնդ դաշ ղտեղնա եմ ձեզ. ո՛չ գիտաց անձին եմ. եթէ զիս իբրև շուշան անձնադրեաց :

'Ի լսել Հարսին զիջումն փեսային, և զխնդիր ծաղկանցն, պատասխա- նէ, Թէ ո՛չ միայն ծաղկեցայ ազնը- ուական ծաղկօք, այլ և կերակրե- ցից զքեզ ըստ ախորժակաց ա̃ծու- Թեդ քո, զոր խնդրես 'ի մարդկա- նէ, կերակրել զքեզ անմոռացա- բար 'ի ստեանցս իմոց՝ մաքրութ̃ս 'ի ն̃ք սրտէս՝ որ առ ստեանցս յա- րամնայ : Ո՛չ գիտաց անձին եմ. ո̃ր ոմ̃ կաթնն 'ի ստեանցն յաներևութի- ցըն կերակուր լինի անբծութե̃ որ- ղայոց, նոյնպէս և խորհուրդք՝ ան- բիծ սիրոյն ջեռեալք՝ կերակուրք լինին անպիտու̃ մարդոյն՝ ա̃յ. որ ոչինչ խնդրէ 'ի մարդկանէ, բայց զսիրտ ն̃ք, որով զա̃ծ տեսանեն,

և յորս ինքն հանգչի. որպէս ասէ մարգարէն, Թէ Ես յո՞ հանգեայց, Թէ ոչ ՚ի հեզս և ՚ի խոնարհս սրտիւ, և որ դողան ՚ի բանից իմոց ։ Եւ որպէս զկառս հանգիստ լինելն փեսային

բարձրացեալ փառօք ։

12. Դստերքն, և Թագուհիքն չհարանն ասէն. Դարձիր դարձիր Սոմնացի, դարձիր դարձիր, և տեսցուք ՚ի քեզ ։

Տես զհրեշտակաց զքանչութիւն յաղագս մարդկան բնութեան փոփոխման ՚ի չարեաց ՚ի բարիս ։ Տեսցուք՝ զզարմանատեսութիւն հրեշտակաց ցուցանէ, որ այլ ազգ եաք ՚ի հրեշտակաց գնացից, և այժմ անցուցաք քան զհրեշտակս՝ հրեշտակատեսութեամբ. Ո ի նոքա անախտ ունելով բնութիւն՝ և անբիծ և անաշխատ, յաղթեցան ՚ի մէնջ. զի հողեղէն և ախտալից և տկար բնութեամբ անցուցաք զնոցայն զօրեղութիւն, յաղթեալ մեր ախտից և կրքից և բնութեանց կարեաց ։ Եւ յիրաւի զարմանան, և զտեսութիւն խնդրեն ։ Ո որս և առաւել զքանչմամբ հայեցուցանէ փեսայն ըզհրեշտակսն, զորս և զատերս և Թա-

Թագուհիս անուանէ, ցորս և ա-
սէ:

## Գլ. Ը.

1. Դարձիր, և ցնծացուցեալ սունամացի: Զի՞նչ տեսանէք ՚ի սունամացին որ է
եկեալ է իբրև պարք բանակաց:

Այսինքն թէ զի՞նչ կարէք դուք
զամենացոյն տեսանել զգեղեցկու-
թիւն, որ իբրև զգունդս բանակաց
բազմացեալ է արմտովք գործոց
բարեաց. բայց ես ծանուցանեմ
ձեզ: Այս ապա այս նշանս, պատ-
մելով: Այլ սերովբէիցն յաղագս ա-
ռաւել չարութեան կոչէ զհարսնն.
զի առաւել յաճախ էին ՚ի կռա-
պաշտութեան և յանմաքրութեան, նմա-
նեալ սիդոնացւոց:

Զի՞ գեղեցկացան գնացք քո կօշկօք՝ դստեր նադաբայ:

Տես, զոր յառաջ սիդոնացի կոչեաց
զհարսնն փեսայն, զոր և յառաջ
հրեշտակքն կոչէին սիդոնացի, աստ
դուստր նադաբայ անուանեաց.
ցուցանելով՝ թէ որպէս պղծոց նախ-
նեաց ծնունդք և դստերք՝ ծնունդ

և դուստր և հարսն եղեն քո, զի ոչ ևս ունին զարշապարս բոկս կասկածաւորս օձին խայթոցաց. այլ կօշկօք արդարութեան ամրացեալք՝ անկասկած են 'ի թիւնից խածանող օձին: Այլ և լուացեալք 'ի մեղաց՝ ոպ̃ զոտս առաքելոցն ջրով և հոգւով 'ի փրկչէն. որ և առին իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս, և զամ̃ զօրութիւն թշնամւոյն. վս̃ այսորիկ առաւելան գեղեցկութբ̃. զի ագուցան 'ի յոտս զպատրաստութիւն աւետարանին խաղաղութեան. որպէս առաքեալն ասէ:

Յարմարութիւն բարձից քոց նմանութիւն ուլանց յեռաձեւոց գործոց ձեռաց արուեստաւորի:

Արդ՝ ոպ̃ ոտքն ամրացան 'ի խածանողէն, և գեղեցկացան այնպ̃ կօշկօք. նոյնպէս և գլուխն բարձրացաւ 'ի կործանմանէն, որ յերկիր կցեցաւ անկեալ 'ի բարձրութեց դրախտէն: Բարձին, որ իբրև յուլանց յեռեալ. զի իմաստ ուղղին 'ի գլուխ մարդոյն է: Արդ՝ յայտ է թէ ոպ̃ բարձ՝ բարձօղ և հանգիստ գլխոյ է, նոյնպէս և գլոյց գիտութի,

թն , և իմաստք պատուէրանաց ո՟յ՝ գլխոյն և իմաստիցն որ յուղղոյն , բարձող և հանգիստ է , զի 'ի նմա գագարեն ա՟մ ծփեալ ալէկոծութ՟ք խելացն յոյզք՝ յենլով իբրև 'ի բարձ . և չտան ընդունայն յածել 'ի ծուփս ընդվայրաքննին խուզից : Յաղագս այնորիկ ասաց . Յարմարութ՟ք Բարձից քոց Նմանութ՟ք ուլանց յէռելոց գործոց ձեռաց արուեստաւորի : Ո ի ո՟մ ուրն յեռեալ ժողովէ յինքըն զպէսպէս զանազանութի գեղոց մարգարտաց . նոյնպէս և գրոց գիտութի յեռեն 'ի մարգարէականաց , յօրինաց , յառաքելոց , 'ի վարդապետաց , 'ի մարտիրոսաց հանգիսից , 'ի ճգնաւորաց մարտից , և 'ի նոյն աւետարանականաց հրամանացն , և աւետաւորութեանցն , իբրև զբարձ 'ի ներքոյ խելապատկայն եդեալ՝ ոչ տան կործանել յերկիր . զի ո՟չ անբարձ գլուխն 'ի փետին մըլար գիտութե հերձուածողացն . որ ոչ կարացեալ յիմաստս գրոց սրբոց յեռուլ , զանօրէնութին ք՟ի յերկուս բնութի՟ս հատին . և յայլ և յայլ զանազան միտս իմա-

ցան զգլոց բանս . ո՛չ արիս , և մակեդոն , և պիղծն նեստոր կործանիչ և եղծիչ աշխարհի . և որ այլ բիւր հերձուածողք : Նաև 'ի վարս , և 'ի կերակուրս , և յամ գոյացութս աշխարհի արարածոց , երկնի և երկրի , և հրեշտակաց և մարդկան , և համգերձեալ գալստեանն և ահագին ատենին , և յաւիտենական գեհենին՝ իմաստս մոլարս գտին , և այլոց ուսուցին : Նաև գոն և այժմ բազումք , որ ուսուցանեն զայնպիսի մոլար ուսմունս : Եւ այս լինի յերկուց պատճառաց . մի՝ զի ոչ քննեցին զգիրս , այլ բաւական համարեցան զիւրեանց իմաստութիւն առ 'ի յոյզ գիտութեն . ո՛չ առաջին իմաստունքն իմաստութիւն իւրեանց 'ի կռոցն պաշտմանէն ոչ կարացին քակել զանձինս , և ճանաչել իմաստութիւն զԱծ . ո՛չ բողոքէ առաքեալ . Թէ կամեցեալ էր քննել իմաստութիւ , յարարածոցս խել զարարիչն մարթացեալ էր գտանել : Իմանալով զարարածոց անկայունն և անզօր և փոփոխական բնութիւն , Թէ այլ արարող գոյ սորա յաղագս

որոյ

որոյ և ետ ինկ ած զառաւելութի՛ իմաստութե՛ն ։ Իսկ երկրորդ պատճառ, զի 'ի հոգւոյն Թևոց հեռի եղեալ 'ի ձեռն մեղաց մարդիկ, հակառակ ոգւոյն պիղծ մտեալ 'ի ներքս զխելս ուսուցանէ իմաստս, և յիւրն դադարեցուցանէ Թափուրս 'ի հոգւոյն ուղղոց ։ Նայլ ո՛չ ա՛յցն գլուխք յայնպիսեա՛ն դադարեն բարձ. այլ յայն որ 'ի ձեռաց արուեստաւորին ձարտարի հոգւոյն սրբոյ՝ են նիւԹեալ և յեռեալ ։

2. Պորտ քո Ընկոյզ ձախարակեալ, ո՛չ նուազեալ 'ի գինւոյ խառնելոյ ։

Պորտ՝ նոյն օրինակ և պորտքն ըղ-նոյն ունին միտս. զի ո՛պ Թակոյկքն ձախարակէն և յօրինեալ՝ ինքեամբ յինքեանց փափաքելի են, և փուԹացուցանեն զմիտս զինարբուՃացըն, մանաւանդ մատուՃակացն՝ յօրինել 'ի նոսա զհեղումն գինեաց խառնելոց. նոյնպէս և պորտն ձշմարտեալ և մաքրեալ 'ի մեղաց, ընդունարան լինի հոգւոյն շնորհաց, և զինւոյն անապակի, և ըմպելոյն անուշութե՛, խառնեալ յերեալս

բեւրս զարբումնն որ 'ի հնոց և 'ի նորոց գրոց . որ և յառաջ քան ըզլսելն՝ տեսութն գեղեցկութեն յորդորէ յարբումն . և լսելուն ժողովելոյն 'ի պորտն զըտեալ և մաքրեալ
'ի մեղաց ։

Որովայն քո որպէս շեղջ ցորենոյ ծածկեալ
շուշանաւ ։

Զորովայնից այնպիսեաց , և զայլ ամենայն զգայութեց գեղեցկացելոց՝ որք լուսաւորիչն մեր յատկապատումն գովութ մանրակրկիտ յաճախ թուէ ։ Վասն զի այնպիսիքն իսկ են գանձուցն հոգևորի ամանք հողեղէնք . որպէս ասէ առաքեալ , Թէ ունիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս ։ Եւ զի այս այսպէս , ընդերգնի յամանս խեցեղէնս այնպիսի պատուական գանձ , զայս ինքն պօղոս մեկնէ . զի առաւելութիւնն զօրութեանն իցէ յԱյ , եւ ոչ 'ի մէնջ ։ Վասն զի այնու առաւել երևի զօրութին Այ , տկար ամանոյ՝ զծանր և զանտանելին տանել ։ Եւ յարարածոց իսկ տեսանի . զի զերկինս և զերկիր 'ի վերայ տկարի եդեալ՝ և հաստատեալ է . և ունի անսասանելի
զնա ։

զմա՛ր ։ Նաև աստուածածնին տկար բը-նութ՞ն ամման և տարող եղև անտա-նելոյ բանին ա̃յ բնութե՛ն՝ խառնե-ցելոյ ՚ի մարմինն որ ՚ի նմանէ ։ Որպէս և տկար մարդիկ զհոգ-ւոյն ընկալեալ զշնորհս յորովայնս իւրեանց՝ յերկրաց վերայ դիզեալ իբրև զշեղջ ցորենոյ, աղացեալ ստամամբք վարդապետութեան հացլի-նին ՚ի կերակուր քաղցելոց՝ և կա-րօտելոց այնմ հոգևոր կերակրոց ։ Նա փակեալ շուշանօք . գունովք հրա-շից որպ̃ զշուշանս, հրաւիրեն ըզ-հրեշտակս ՚ի տեսութի . որպ̃ ասացաւ իսկ յառաջագոյն ՚ի դստերայն և ՚ի Թագուհեաց, Թէ Պարզեր, և փեսայութ ՚ի ժեղ ։

3 . Ստինք քո որպէս երկուս ուլս երկուորիս այծեմանն ։

Որդ՝ երկու տեսակ են ՚ի մար-դումն, որպ̃ ասէ ա̃ծաբան, հոգի, և միտք ։ Նաև երկոքին նոքա զյա-րակայութ՞ն առ սորին ունին, ուր ստինքն առկային . և վասն այնո-րիկ ստինս անուանէ զնոսա զմօ-տաբնակն ՚ի նա ։ Նա՝ որպ̃ ըս-տինք՝ կաթինն ամանն են, և կենդա-նա-

նատուր կերակուր տղայոց , նոյնպ
և միտքն և հոգիք՝ արթունք և լու-
սաւորք և սրահայեացք են իբրև
զայծեմանն , զնծայլին հեռաւորսն
իբրև զմօտաւորս տեսանելով ան-
ձանց անմոլար ցուցանեն ճանա-
պարհ , և այլոց՝ որք զհետ նոցա
գնան . և անորոգայթ յորսողաց
պահեն . և կերակրեն զտղայա-
ցեալսն 'ի մեղաց . որպէս ստինքն
զտղայսն ։

4 · Աչք քո որպէս ջրմղակքն եսեբոնի 'ի դրունս դստերաց բազմաց ։

Աշխարհն այն կարի յոյժ 'ի բա-
ցեայ է հեռաւորութ̄ե , զոր ոչ՛ք
տայ նշան զնմանէ ։ Այլ ես այս-
պէս իմանամ , թէ բարձրագոյն է
երկիրն այն , և 'ի ստորև ունի ըղ-
ծովակն մեծ հանդիպահայեաց ։
Այն օրինակ և աչքն հարսինն ե-
կեղեցւոյ՝ մեծացեալ մեծութ̄ե հոգ-
ւոյն՝ անդառնալի հային 'ի դրունս
երկնից , ուր դստերք բազմութ̄ե
հրեշտակաց բանակին , ոչ խոտորե-
լով յաջ կամ յահեակ . և սպասեն
թագաւորին երկնից անյագաբար
նայեցմամբ , զի արժանասցին մը-

տանել ընդ դրունս ընդ այն , ուր գատերք այնր քաղաքի՝ են ընակեալք :

Ռնգունք քո իբրեւ զաշտարակն լիբանանու . որ դիտէ 'ի դէմս դամասկոսի :

Ո իմ աշտարակն լիբանանու ըղձալելոյ հայեցուածովն ունի հանդէպ դամասկոսի , այնպէս ըռընգունք քո հոտոտել փափաքեն վայելուչ հայեցմամբ զանուշահոտութի հոտոյն մաքրութե խնկոյն , որ 'ի վերին դամասկոսէ , յի քաղաքին երկնից : Աղուամանել զայօղոյն՝ որ զառաջին պատուական զխոտութին երրորդութեն ընդ ընկալաւ 'ի մերձենալն 'ի դամասկոս . և 'ի դամասկացոյն անանիայէ զլուսումն աչացն բժշկել ձեռնադրութե նորա , և 'ի հոտն յայն սխրալի և քաղցրելի հոտոտեցաւ , և հոտոտեցոյց զիմ հեթանոսս . զորոյ հոտոյ ռընգունք հոտոտեալք՝ ոչ յագեցան , այլ ըղձալեցան իբրև զարբեալք 'ի գինւոյ պատուականէ , որ զխմանալի խնկապատակ ուղղոյն անուշացուցեալ քնով ցանկալեաւ , և հրեշտակայնով . և զաշխատեալն 'ի մե-

մեղաց հանգուցելին :

5 · Հիւսք գլխոյ քո իբրև ծիրանիս , իբրև զթագաւոր թագ ՚ի գլուխ յընթացս ապարանաց :

Օի որպէս ծիրանիք թագաւորաց վայելչականք սեպհականութ՟ , որ միայն նմա է իշխանութի զարդարել ծիրանեօք . նոյնպէս և գլուխք որ զհերս և զարդ , և զփեսային երկնաւորի զխաչս ունին , վայելչացեալք են մաքրութ՟ իբրև ծիրանեաց զգեստիւ . և իբրև թագ ՚ի գլուխս թագաւորաց ՚ի մէջ զօրաց յընթացս ապարանաց : Արդ՝ հարցցէ՞ ոք , թէ զի՞արդ պսակք են գլխաւորք՝ պարգևք մարտիրոսացն . զոր օրինակ բազմաց երևեցաւ սրբոց . ո՞չ քառասնիցն , և ղևոնդեանցն , և այլոց բազմաց : Եւ թագաւորաց դնի ՚ի գլուխս , վ՟զի պատուականն քան զ՟մ մասունս զգայութեց մարդոյն՝ գլուխն է . յոր ուղեղն է գանձեալ , ուստի իմաստն խելացն , և կենդանութե սկիզբն . յորում և լուսատես աչքն , և քիմք , և հոտոտելեաց դիրք , և ականջացն լսելութին . և բերանն ,

 որ

որ կերակրով, և ըմպելեօք պահէ զկենդանութիւն. և զխելացն, և ըզսրտին իմաստս խօսիւք ՚ի յայտ բերէ լսողաց ։ Արդ՝ վասն այնորիկ զնա պսակէ, զի ուղեղն վարդապետէ անձինն և խելացն՝ զգործս և զբանս և զառաքինութիւնս և զբարութիւնս, և զսէր, և զողորմութիւն, և որ սոյն նմանք ա̃ծահաճոյք խորհուրդք, և գործք ։ Արդ՝ թագաւն զգլուխն պարփակեալ պսակէ, որ պատճառն և խրատուն է ա̃մ բարեաց. և զգլխոյն պսակմամբն երևեցուցանէ և զա̃մանձն պարփակեալ պարգևօք ։ Աւագ ՚ի գլուխ եդեալ. ցուցանէ այնու զանճառ լուսաւորութիւն, և զզօրութիւն ա̃յ ագուցեալ ՚ի գլուխն, առթող այսքանեաց բարեաց խորհրդոց, և օգտակար ուսմանց. ո̃չ ասէ սոյն Սողոմոն, պսակ շնորհաց ընծայեսցէ ՚ի գլուխ քո ։ Նորա՝ զա̃ծայինն զօրութեան զգեցուցմունն ասէ ՚ի գլուխն, որ իբրև թագաւ զարդարեալ է. մարմնաւորօքն զաներևոյթն ձևացուցեալ զփառս. և երևելեօքս և մտօք ցանկալեօքս զաներևոյթ

Ճշմարիտ ցանկալեաց: Որդ՝ երանի որ անթառամ թագին արժանանան, և հարսնանան քեզ, զի նմին թագակից լինին յանհատ թագաւորութեան քում:

6. Որպէս գեղեցկացար, և հեշտալի եղեր. սէր ՚ի փափկութեան քում:

Հայեցեալ ճշմարտապէս ՚ի թուեալ գոլութս ամ զգայութեց հարսինն. և թէ որպէս մի մի թուեալ՝ և գովեալ, համառօտ դարձեալ ասելով. Որպէս գեղեցկացար, և հեշտալի եղեր: Այս է ստուգապէս գեղեցկութիւն մարդոյ, որ զամ զգայութիւն՝ այ ծառայեցուցանէ, և ածացուցանէ զնոսա՝ յած մերձենալով, ածային գործոյն հաղորդեալ: Որ և զայնպիսի բանս արժանանայ լսել ՚ի փեսայէն քեզ, թէ գեղեցկացար, և հեշտալի եղեր ինձ: Ով անբաւ երանութեան, որ այ բերանովն խոստովանի գեղեցիկ լեալ, և հեշտալի իւր: Որում ցանկացան սրբքն, առաքեալք, և մարգարէք. մարտիրոսք, և ճգնաւորք. և վարդապետք ամ քահանայականօք. որ դուստր և հարսն եղեալ այ, մա-

մոռացան զժողովուրդս, և զտունս հարց իւրեանց · օտարացեալք ծի, և որ ինչ յծիս, փափկացան առա֊ քինութե՛ վարուք, և սիրեցան 'ի փեսայէն, որ ասաց · Սէր 'ի ծաղկո֊ ցեալ ծառս · Թէ սիրեմ այնչափ սի֊ րով զայնպիսի փափկութիւն, որ֊ պէս մարմնաւոր փեսայք զմարմնով փափկացեալ հարսունսն ։

7 · Նմանեցաւ հասակդ քո արմաւենւոյ · և ստինք քո ողկուզաց ։

Որպէս ցանկալի եղեր ինձ 'ի տե֊ սութի ո՜վ զարմանալենւոյ մեծութի · և ստինք քո ո՜վ ողկուզոց՝ ախորժե֊ լի · զոր և 'ի վերայ բերեալ, ասէ ։

8 · Ասացի, ելից 'ի ծառ արմաւենւոյն, կալայց զբարձրութե՛ նորա ։

Ողջ հայեաց 'ի սէրն յանքաւ ո՜վ, որ առ մեզ, և առ արդարս · որ քան յաթոռն քերովբէական նստելն՝ առ սրբոցն հանգչելն բաղձալի է նմա ։ Եւ այս քեզ նշան · որ 'ի յա֊ կոբ նախահայրն իջեալ՝ և իբրև ընկեր ընդ ընկեր 'ի սէր պատեալ գիրկս արկեալ և հակառակէր ընդ նմա որպէս պրկող անցանելով · որ և բուռն հարեալ զամոլաջղէն ըն֊

գարմանացոյց ։ Որ մարգարէիցն է-ռայեալ առէր ։ Նա յո՞ հանգեայց, ե-թէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս, և յայնոսիկ որ դողան 'ի բանից իմոց ։ Ծլի գլգլի՝ և փափաքէ 'ի սէր՝ ոմ̃ յանբաւ ցան-կալի էր ։ Որ և տեսեալ զբաղձա-լի ցանկութիւն, և զմեծութիւն զհարսինն ոմ̃ զարմաւենւոյ՝ ասաց Նմա 'ի վերայ, ևալայց զբարձրութէ նո-ցա ։ Որ և խոնարհեցոյց զերկինս և էջ, և բուռն եհար զմնուէս մեր-մէ յաղագս անպատմելի սիրոյն իւ-րոյ որ առ մեզ ։

Նա եղիցին ստինք քո որպէս ողկոյզ որ-թոյ . և հոտ ռնգանց քոյ իբրև խնձոր ։

Նա կոկորդ քո իբրև զգինի անուշ ։

Որ ողկոյզն նախ զաչսն զուարթա-ցուցանէ տեսութ՟բ նախ քան զկե-րակրելն, նոյնպէս որ 'ի ստեանց արտոյ ըղխէն բանք շնորհաց, նախ զլսելեացն բերկրեն, ապա զսիրտ զախորժողաց բանիւն ։

Նա հոտ ռնգանց քոյ իբրև խնձոր ։

Այսինքն անուշահոտութիւն վա-րուց սրբութէ, որ տարածանի 'ի մեծամեծս, և 'ի փոքունս, իբրև զանուշահոտութիւն խնձորոց · յոր

հո-

հոտոտի փեսային երկնաւոր առա-
ւել քան 'ի զոհս՝ և 'ի նուէրս ըստ-
ուերին, որ ասի 'ի հոտ անուշից
նորա: Զի ոչ եթէ ձենձերաց հոտն՝
անուշահոտութիւն էր նմա, այլ մա-
տուցողացն մաքրութիւն հաճոյացու-
ցանէր, և հոտ անոյշ լինէր նմա,
ոգւոյ հաբելին:

9. Եւ կոկորդք քո իբրև գինի ազնիւ:
Զի ոչ գինի ուրախարար է սր-
բեցելոց, նոյնպէս և երգ սրբոց և
անարատից, և բանք կոկորդաց նց
ուրախացուցանեն զփեսային երկնա-
ւոր, որ առաւել քան զհրեշտա-
կացն սրբասացուն երգս: Զի նո-
քա կարողութ., և անախտութ. են
փառաբանիչք նորա. յաղագս ո-
րոյ ոչ է զարմանալի. այլ մարդոյ
հողեղէն զանդուճածոյ և ախտիւ,
և կարեօք պատելոյ զանախտիցն
և զանկարեացն բերել զնմանու-
թի, կարի սքանչելի է. կո-
կորդ զմերմլելիցն անձնյոյ, և ըղ-
նոցայն երգել: Նա զկնորդ ոչ ու-
րախացուցանէ զփեսայն. որպիսի
զարմանալ դստերացն, և թա-
գուհեացն ընդ գեղաղէշ սիրալի

տեսակ սունամացոյն՝ որ է հարսնն, և յաւելն ցնա՝ թէ դարձիր դարձիր սունամացիդ, և տեսցուք զնոր և զքնաղ տեսութիւնդ քո, յինքն առեալ փեսային զկոչն հրեշտակաց, և դստերացն, և թագուհեացն, պատասխանեաց, և ասէ․ Օ՜ինչ տեսանէք 'ի սունամացիդ․ զի որչափ է սխրալի, ոչ կարէք տեսանել, բայց թէ ինև․ որ հրապարակատես առնել կարող եմ զմարդկան ծածուկ առաքինութիւնս։ Որ և ապա մի ըստ միոջէ համարեալ զզգայարանացն հրաշս, և ծանոյց նոցա զհարսինն գեղեցկութիւն։ Նոյնպէս և հարսնն 'ի դէմս դստերացն, և թագուհեացն ասէ զայս։

Սրբեալ ընդ եղբօրորդւոյն իմոյ յաղ-ղութե․ բազմաչափն լեալ շրթամբք իմովք, և պաղամամբք։

Այսինքն թէ յաղագս այնորիկ եղէ ձեզ սքանչելի, զի հրաժարեալ յաշխարհական մեղսասէր օձապատիր խաբմանց նախնոյն իմոյ, գտնայի զհետ եղբօրորդւոյն իմոյ յուղիղ վարս․ որ զիմն զգեցաւ, և իմովս յաղթեաց, և եցոյց ինձ զուղ-

ղու-

զութիւն. նախ ինքն առնելով, և ապա ինձ ուսուցանելով. որպէս ասէ աւետարանիչն ղուկաս յերկրորդում ՚ի գիրս իւրում. Յորժամ ըսկսաւ յս առնել, և ապա ուսուցանել: Ո՞ ի մն այսօրինակ եղև մարդ, զի նախ ինքն արասցէ զամ՟ զոր բանիւ վարդապետեաց. և գործովք ուսուցանէ զհեզութիւն, զխոնարհութիւն. որպէս ասաց ինքն տէրն, Թէ ուսարո՛ւք յինէն. զի հեզ եմ, և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց: Նոյնպէս և զքաղցրութի. որում որ ապտակն ած ծառային երեսացն, քաղցրութբ ասաց, Թէ չար ինչ խօսեցայ, վկայեա՛ վասն չարին. իսկ եթէ բարի, ընդէ՞ր հարկանես զիս: Նաև ՚ի կոչելն զնա դիւահար՝ ոչ ընդդէմ դարձեալ Թշնամանէր, այլ քաղցրութբ ասէր, Ես դև ո՛չ ունիմ: Նոյնպէս և զանոխակալութիւն, որ աղօթէր վասն խաչահանուացն, Հայր՝ Թո՛ղ սոցա, զի ո՛չ գիտեն զինչ գործեն: Այն օրինակ եցոյց և զաշխատութիւն իւրով վճարել, և զանդոռոզաբար կեանն իւր՝ ՚ի վերայ իւրոյ նստելոցն: Նոյնպէս և ՚ի հարսա-

նիւն

Նման արար, զջուրն 'ի գինի փոխելովն խնդակից ելով խնդացելոյն, և ընծայաբեր։ Նա 'ի սուգ՝ զչափ տրտմութեն եցոյց արտասուելովն, և ուսոյց մեզ սգակից լինել եղբօր՝ իւր տրտմելովն։ Նա զչափ կերակրոյն գարեղէն նկանակաւն, և ձկամբն վճարելով, և 'ի վերայ խոտոյ բազմելովն՝ եցոյց զանապարան և զչափաւոր հարկն վճարել։ Նա այլ զա̃մ ինչ որ պէտք է ուսման, նախ ինքն յանձն կրեաց, և մեզ զնոյն եցոյց ճանապարհ։ Վ̃ս այսորիկ հարսնն ասէ, թէ Նե-

րեալ ընդ եղբօրորդւոյն իմոյ յաղջկութէ։

Այսինքն թէ զհետ նորա գնացի յա̃մ ուղղութիւն՝ զոր արար յերկրի. և նմանող եղէ նմա. ո̃պ պօղոս անօթն ընտրիր ասէ, թէ Նմա-

նօղք եղերուք ինձ, որպէս ես ք̃ի։

Նա ուսոյ տուաւ այնչափ զօրութիւն հարսինն՝ ք̃ի ուղեկցութեն յուղղութիւն։ 'Ի յահագին խորհրդոյն հաղորդութ̃է, 'ի մարմնոյ՝ և յարենէն ք̃ի, զոր ետ մեզ 'ի զօրութի, և բաւական արար շնորհամբք ըմպել, և ստամամբք մանրել զայն՝

որ

որ հրեշտակեդ դուք դատերք և
թագաւորեքդ հայել չէիք բաւա-
կան . որ 'ի խաչին ոչ մանրեցաւ
ոսկրն , ըստ յառաջագոյն գուշա-
կուէ մարգարէին , զայն բաւական
եղաք մանրել ատամամբք . և ան-
բովանդակելի և կիզելի հրոմն ոչ
այրիմք կիզանուտ մարմնովք . և
դուք անկնարկել ոչ կարէք , և ոչ
իշխէք . և ես բաւական եղէ ան-
բաւականելոյն , ոմ̅ զմ̅ծածինն ,
որ յորովայնի ընկալաւ , և ոչ կի-
զաւ , և ոմ̅ զմորենին նորին օրի-
նակն : Ո այս ոմ̅ թէ պանծացեալ
յանձառելի պարգև փեսային ,
պարծի ընդդէմ հրեշտակաց հար-
մնըն . և 'ի վերայ բերեալ՝ ասէ :

10. Ես եղբօրորդւոյն իմոյ . և առ իս
դարձ նորա :

Մ յոխնքն թէ յայամ կերակրոյ միա-
ցեալ 'ի նա , ես նմա , և նա ինձ .
ոմ̅ և ինքն տ̅րն ասաց յաւետարա-
նումն , թէ Որ ուտէ զմարմին իմ , և ըմ-
պէ զարիւն իմ , յիս բնակեսցէ , և ես 'ի
նա : Եւ դարձեալ . Որպէս դու հայր
յիս , և ես 'ի քեզ . զի և նոքա 'ի մեզ է-
ցեն : Եւ ես 'ի նոսա . և դու յիս :

Աշ

Առ իս դարձ նորա :

Ի վերայ այսր միաւորութեան՝ և զայն ասէ , որ գալոց է միւսանգամ առնուլ զմեզ առ ինքն · և յիւր փառսն դասել · և զօտի ածել , և պաշտել զմեզ · ոպ̃ և ասացն Լուկ :

11 · Եկ՛ եղբօրորդի իմ , ելցո՛ւք յանդաստան · հանգիցո՛ւք 'ի գեօղս : 12 · Առաւօտեսցո՛ւք յայգիս · տեսցո՛ւք՝ եթէ ծաղկեա՞լ իցէ որթ · ծաղկեալ իցէ նռան · ծաղկեալ իցեն նռնենիք :

Տես աստանօր զմիութիւն Հարսինն ընդ փեսայիւն : որ կանխագոյն ասաց փեսայն , թէ 'ի պարտէզս ընկուզեաց իջի դայն տեսանել , թէ ծաղկեալ իցէ · այսու բերօք զոր այժմ Հարսնն ասաց · որ էր գալուստն յերկիր քոյ՝ 'ի խնդիր սերմանցն , զոր մարդարէքն սերմանեցին՝ թէ ծաղկեալ իցէ · որ պտղաբերեցաւ իւր գալըստեամբն : Արդ՝ Հարսնն միացեալ ընդ փեսայիւն , սիրէ հաղորդակից լինել տեսութեան բերոց պտղոցն , և ծաղկացն · յաղագս այնորիկ անդ փեսայն իջի ասէ · զի իջի 'ի յերկնից · և աստ Հարսնն ելցուք ասէ · զի յերկրէ գոլով , Հարսնն սիրէ շրջել

ընդ

ընդ փեսային, որ 'ի յերկրի երեւեցաւ, և ընդ մարդկան շրջեցաւ: Ո՛պ և ասաց, թէ Այլ և ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ. և զայն ևս պարտ է ինձ ածել այսր. և ձայնի իմում լուիցեն, և եղիցին մի հօտ, և մի հովիւ: Որ շըրջեցաւ խոկ հարսամբն. ը̃ առաքելովքն, ոչ միայն ընդ հրեաստան, այլև ընդ հեթանոսս. ուր սամարացին. և փիւնիկ ասորին. և այլք բազումք: Նաև զկնի համբառնալոյն՝ ընդ առաքեալս, և ընդ նոցին աշակերտսն, և ընդ վարդապետսն, և ընդ մարտիրոսս շրջեցաւ քարոզել, և տեսանել զծաղիկ, և զպտուղ հաւատոյ բանին: Նա և վկայէ այսմ տ̃րունական խօստումն, թէ ընդ ձեզ եմ զա̃մ աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի: Ընդ՝ առաքեալքն ոչ հասին 'ի կատարած աշխարհի. ապա ուրեմն յայտ է, թէ մինչև ցայժմ ընդ մ̃ հաւատացելոց է 'ի տեսանել զծաղիկս, և զուարճանալ ընդ բերս պտղոցն: Նայց դու տես զգթածութի̃ն ո՛մ զփեսայի, և զհարսին՝ ընդ հաւատացեալս. զի ոչ միայ հրամանի՝

որ-

որպէս 'ի հնումն մարգարէքն . այլ զայն ստացեալ սէր զոր և փեսայն , առաջէ՛ շրջել 'ի խնդիր մոլորելոց , և 'ի գիւտ կորուսելոց : Որպ ետուն իսկ բազումք անձամբ զանձինս 'ի մշակութին յառաքելոց , և 'ի վարդապետաց : Որպ և մեր Լուսաւորիչն . որ զկին , և զորդիս թողեալ կամաւ եկն առ տրդատ . և զմծ աղաչէր վասն ամ մարդկան դարձի . որպ և կայ իսկ յիւր աղօթսն , այսպէս պաղատանօք հայցուածս . զոր ինչ ոչ է ժամանակ երկրորդել զմծ : Տէս , որբ , և նոճ , և նոճենի տաց . զի որ դարձան 'ի հաւատս , և հալածմանցն քնի , ոմանք ունին պտուղ . այլ ոչ գիտուն . որպ հալիւրապետն , և կուսանէլոս , նա և պօղոս իսկ , որ ըստ արդարուն օրինացն եղեալ անարատ : Իսկ ոմանք անպտուղ իսկ . որպէս ոնէսիմոսն , որ և նոճ . և նորա ողկոյզ , և նուռն , այլ ոչ յմծգիտութեան կատարեալ :

13 . Մանրագորք ետուն զհոտ իւրեանց՝ առ դրունս մեր մրգաբերք , նոր առ հնով , զոր եւ ինձ մայր իմ , պահեալ քեզ եղ .

Եօրորդէ էմ ։

Ս՝ [illegible] ։ Ն.րդ ՚ի ձեռն ցուցակութեն, զոր իմացուցի, առաքինեայս չունի ինչ առաւել պէտս մեկնութե. բայց համառօտն այս է. գոհանամ զսրբոց հաւատացելոց, որք քարոզութբ առաքելոցն, և զկնի Նոցա վարդապետքն անհամարք՝ բիւրք բիւրոց զանազան առաքինութբք հաճոյացան այ ։ Ոմանք վկայական արեամբ. ոմանք ճգնաւորական համբերութբ. ոմանք կուսութբ. ոմանք առաջնորդական, և քահանայական վերակացութբ. ոմանք աղքատութբ, և հիւանդութբ. և ոմանք մեծութբ՝ հաստակաց առնելով զինչս ։ Եւ որ սոցին նման՝ միաբանեալք ամենեքին ՚ի սէրն այ, և ՚ի հաւատս, և ՚ի յոյս, և յողորմութի, և ՚ի խոնարհութի, և ՚ի սրբութի, և յեղբայրսիրութի, և ՚ի քաղցրութի, և յանոխակալութի, և յերկայնմտութիւն, և յանընչասիրութի, և յարհամարհել զերկրաւորս, և ցանկալ երկնաւորին, և զարհուրել ՚ի գեհենէն, և փափաքել արքային, և արքայուն.

Զայս տանի, որ ասաց, թէ մանդրա֊
գորք ետուն զհոտ իւրեանց, առ դրանս
մեր ամ մրգաբերք, նոր առ հնոյն զոր ես
ինչ մայր իմ, պահեցի քեզ եղբօրորդի իմ։
Զայս առաքելոց, և առաջնորդաց
վարդապետական բանք են՝ հաւատա֊
ցելոց քի, որ ընծայեն նմա այժմ
և յաւուրն մեծի՝ ժողովուրդ կաղ֊
մեալ, և ամեն զմարգարէին, Եղ֊
հասարակ ես, և մանկունք իմ զոր ես ինչ
ամ։ Նման է այսմ, զոր ասաց,
թէ պահեցի քեզ եղբօրորդի իմ. որ ա֊
ւանց ամօթոյ տան համարս դժո֊
ղովրդեան, և ընծայեն նմ։ Նոր
առ հնոյն։ Ի նորոց, և ի հնոց։
Իսկ որ ասէ, թէ զոր ես ինչ մայր
իմ։ Այս՝ հասարակաց եկեղեցի
է, և հոգինոր, որ ծնաւ աւազա֊
նաւն, և մնոյց արեամբն՝ քի։

---

## ԳԼ. Ը.

1. Ո՞ տայր քեզ եղբօրորդի իմ, դիեալ
զստինս իմ։

Ըստ անյագ փափաքման սրբոյն
ոմն անհաւատալի լինելն համանմ
քաւաւայն իմ, և ի միտ առնելոյ ըղ֊
ձաս

վաստակս, և զջանս նոցա, և ըզ-
սրտին բաղձանս. և այս առ խո-
նարհութե հոգւոց սրբոցն, որ չու-
նին ՚ի համարի զիւրեանց ստեան-
ցըն սրտից բացումն առ նա. որպէս
պօղոս առաքեալ ասէր, թէ ես ո՛չ
համարիմ զանձն իմ, թէ հասեալ իցեմ։
Նոյնպէս և այլ սրբքն։ Ո ի գի-
տացեալ զնախահօրին կործանումն,
մինաւանուք թէ զաստուածային խնկ՝
՚ի բարձրութենէ՝ և ՚ի հպարտու-
թե լեալ, ջան՝ նոյ խոնարհութե
անձանց եդեալ, որում ամենե-
ցուն զանձինս համարել՝ և մոռա-
ցումն լինքեանց վաստակոյն առնել,
և չհամարել արժանի ՚ի ծառայու-
թի գալ այ, զի ուսեալ էին ՚ի յսնէ,
որ ասայն, թէ Յորժամ զամ հրաման-
եալըն առնիցէք, ասասջիք, թէ ծառայք
անպիտանք եմք. զոր պարտ էաքն առնել՝
արարաք։ Նոյնքն թէ ծառայ ան-
պիտան իցէ ոչ յաւելուլ ՚ի ծառայ-
ութի քան զհրամայեալսն։ Ո ի
այնպէս ուսուցանէին զանձինս ՚ի
խոնարհութե մնալ, և անարժանս
շնորհացն համարել. ոպ առաքեալ
ասէ, թէ Տրուպ եմ ես առաքելոց։

‘Նաև բովանդակ ամ̄ սրբոց՝ և հոգւով սէր լցելոց գործ՝ այս է․ զի զինչ և առնիցէ ուղղութեամբ, և կամ սրտից սէր ցուցանել առ իմ̄, առ խոնարհութեան մնայցն չհամարել՝ թէ 'ի գիտութեան է իմ̄, իբրև զանարժանից ։ Վ̄ այնորիկ ասէ, թէ

Ո՞ տայր քեզ դիեել զստէնս իմ․ Այսինքըն թէ ընդունել զիմ սրտիս սէրս առ քեզ․ վասն այսորիկ 'ի վերայ բերեալ՝ ասէ ։

Գտեալ զքեզ արտաքոյ համբուրեցից․ և ո՛չ անգոսնեսցեն զիս ։

Օ՛ինչ է․ այնպիսի սէր քո սէրդ՝ իմ̄՝ թէ անգտանելի․ այլ այս մլեկանուն սէր, պարծանաց և հրապարակաւորութեան արժանի է․ և որք յայն սիրոյն ճաշակեցին, արբեցան նորա սիրովն, և արհամարհեցին զկին, և զորդիս, և զինչս, և զստացուածս, և զիշխանութիւն, և զփառս, նա և զանձինս ևս․ և մահուամբ, և արեամբ, և աղքատութ̄ կատարեցաւք, համբուրեցին զքո̄, և համբուրեցան 'ի նմանէ ։ Այս է պարծանաց՝ և երանութ̄ սէր, և գովութ̄ 'ի հրեշտակաց, և 'ի

'ի մարդկանէ :

Զ. Առեալ ածից զքեզ 'ի տուն մօր իմոյ, եւ 'ի սենեակ յղացելոյն զիս :

Ասաց, թէ սրտաքոյ գտեալ համբուրեցից զքեզ. եւ ապա առեալ ածից 'ի տուն մօր իմոյ, եւ 'ի սենեակ յղացելոյն զիս: Օ այս առաքեալ մեկնէ, ասելով. Վերոյ տունն մեր եւ ենք. եւ որ զկնի. լեալ որ Հոգւոյն տուն, եւ մօրն մերոյ Հօր: Որդ՝ յայտ է, ո՞ր բանիւ ասէ, թէ Սորանօր հոգին է, ասէ հայր՝ եւ որդի ձանուցի բնակեցաւ. ո՞ր ասէ մարդարեիւն, թէ Բնակեցայց 'ի նոսա, եւ գնացից 'ի նոսա: Որդ՝ սենեակ եւ տուն՝ հարսնն եղեւ փեսային. եւ է ձանապարհ 'ի տունն յայն՝ խոնարհութի. եւ որ ոչն է խոնարհ, հոգւոյն սրբոյ հալածիչ է, եւ ոչ հանգուցիչ. ո՞ր ասէ բանիւ:

Արդ՝ 'ի սենեակն ածեալ, արբուսցես զքեզ 'ի գինւոյ խառնափրբծոյ. յօշարակէ նռնենեաց:

Այս է, որ ասաց, թէ ո՞ ծարաւի է, եկեսցէ առ իս: Արդ՝ սրտաքոյ գտեալ՝ եւ արժանացեալ համբուրի, ապա 'ի սենեակ եւ 'ի տուն անձինն

և ՚ի սրտին առեալ զփեսայն, և երրորդութեան բնակարան լեալ, խոստանայ արբուցանել նմա զուրախութիւն գինւոյ, և օշարակ ՚ի նռնենեաց, որ են սրտին գիտակցութիւնք՝ որ առ ած̅ բարեաց խորհրդոց՝ անխմմնալեաց մեղաւորաց, ոմանք կերակրի, և ոմանք ըմպելիք բուծանի ած̅ ․ զի այս է կերակուր իմ ։ Ի վերայ բերէ, թէ ոչ միայն բնակարան եղէ իմ, կամ փեսայլին, այլ և նովիմբ հովանացայ, և պահպանեցայ ․ զոր և ասէ ։

3 ․ Ձախ ձեռն նորա ընդ գլխով իմով ․ և աջ նր̅ պատեսցէ զինև ։

Ձախու զամենեկենելի պահպանութիւն, և զվերակացութիւն որ առ հարսանոյն, որ է եկեղեցի, բացայայտէ ։

4 ․ Երդմնեցուցի զձեզ դստերք Եղմի̅՝ ՚ի զօրութիւնս, և յաւժարութիւնս անդաստանի, եթէ յարուցանիցէք՝ զարթուցանիցէք զսէրն՝ մինչև կամեսցի ։

Զայս երկրորդ անգամ մեկնեալ եմ ։ Բայց առելով զաստուածախնամ շնորհսն որ առ մեզ, և զանխմմնալեօք պարգեւսն, երդմամբ յորդորէ զհրեշտակս փառաբանակիցս իւր,

և

և գոհաբանակից լինել այ սիրոյն որ առ մեզ, և զարթուցիչ: Ո՛վ չհամարի միայն զինքն բաւական օրհնութե երախտեացն այ. որով և առաւել ևս զարթչի սէրն՝ ի գոհանալն՝ և ՝ի փառաւորելն մեր զնա: Ո՛վ մի ՝ի տասանցն բորոտացն դարձեալ առ տր, և գոհացեալ ՝ի ձայն մեծ փառաբանութեն ՝ի վերայ մարմնոյ բժշկութեյն, որ և զհոգւոյն ևս ստացաւ զլուսաւորութի՛ն, և զյաւիտենական կեանսն: Իսկ իննունքն ապերախտք գտեալք առ երախտաւորն՝ զրկեցան ՝ի միոյն ևս կատարեալ պարգևացն, և յածային բերանոյ գովութենյն: Որք՝ հարսնըն ոչ ապերախտ եղեալ առ անխնայի երախտիսն այ, և առ այնչափ պարգևսն. և յիւրմէ շնորհակալեալ, և գոհաբանակից մեր կոչեցեալ զհրեշտակս՝ զարթուցանել զսէր փեսային յայն պարգևս՝ զոր կամեցաւ տալ մեզ, և ոչ արժանացաւ առնուլ նախահայրն: Այս է, որ ասէ զարթնասջի՛ր* զսէրն մինչև կամեսցի. զոր խնդրեաց զգոհութի՛ն յիննունցն, և ոչ եգիտ ՝ի նոսա

զիւր

զիւր կամացն խնդիր ։

Ե . Պտուղերքն , և Բաղադրեալքն այլն ։

Ո՞վ է դա , որ ելանէ սպիտակացեալ՝ յեցեալ յեղբօրորդին իւր ։

Զարմանան հրեշտակք ընդ մաքրութիւն , և լուսաւորութիւն անարգ և աղտեղեալ մեր բնութես , որ այնպիսի անքննելի շնորհաց հանդիպեցաւ . և ընդ եղբօրորդւոյ իւրոյ Քսի միացեալ՝ և ՚ի նա յեցեալ՝ ելանէ ուր հրեշտակացն բանակք բնակեալ են , ուղղեկից լեալ Քսի , որ զձեռամբն առեալ տարաւ զմեզ ՚ի տեղի անկելոց հրեշտակացըն . զի զոր ՚ի դրախտին ոչ հանդուրժեաց տեսանել , տեսցէ ՚ի փառսն իւր ։

Փեսայն ցհարսնն ասէ ։ ՚Ի ներքոյ խնձորւոյ զարթուցի զքեզ . անդ երկնեաց զքեզ մայր քո . անդ երկնեաց՝ որ ծնաւն զքեզ ։

Նախ՝ արժան է զբնութիւն խնձորոյ տեսանել , և ապա զարթուցումնն որ ՚ի ներքոյ նորա՝ իմանալ ։ Խնձորն՝ առողջ կերակուր է , և հիւանդացելոյ ախորժելի . և թագաւորաց կարի խիստ վայելուչ . և պէս-

պէսպէս զանազան հատոլք անու-
շայուցանէ զբխմն հատատելեալ ։
Ո՜ որ և ո՛րն գրիգոր լուսաւորիչն
մե՛ր ասէ . արդ՝ խնդրոյ նմանե-
ցուցանէ զլամս օրինաց , և մար-
գարէից , որ հոգւովն սրբով առ՛աւ-
մեզ . նախ՝ ՚ի սինեական լերինն ՚ի
ձեռն մովսէսի . և ապա ընդ ժա-
մանակս ժամանակս ածեալ մար-
գարէիւքն ։ Նա ոչ հաւք ՚ի ձո՛ւոց
վերայ նստեալ յերկրաձիգ ժա-
մանակաւ ՚ի ձեռն ջեռմանն ընձե-
ռեն զկենդանաստեղծութիւն հր-
ամանաւ արարչին , նոյնպէս և մեր
բնութիւնս ՚ի ներքոյ օրինացն և
մարգարէական պատգամացն ե-
դեալ յերկրաձիգ ժամանակաւ՝
երկնեցաւ յոյ ՚ի հօրէ , և յորդւոյ ,
որ մեր փեսայն և եղբօրորդին ան-
ո՛ւանեցաւ . և ծնաւ ՚ի հասարա-
կաց մօրէն , որ նորա է բնութ ծը-
նող , և մեր չնորհիւ ։ Նա մն զի
Երգոյն ասայ . և երկուեք՝ մօր է .
վասն այնորիկ մայր կոչեաց զհայրն
քո , և մեր ։ Նայլ երկնեաց հայր ,
ոչ ասացի , օրինական՝ և մարգա-
րէական պատգամօք . և ծնաւ ՚ի

ջրոյ ,

ջրոյ, և 'ի հոգւոյ՝ որդիս լուր, և եղբարս քո. զի մի է մայր մեր ծնողն՝ հայրն ամենակալն ած։ Նաև լոր մկրտութե, և աւազանաւն ծնաւ քո, և հոգւոյն սրբոյ գալստեամբն զփակեալն յադամայ զերկինս՝ եբաց. և ինքն զնոյն ծնունդ և մեզ պարգևեաց 'ի հոգւոյն սրբոյ. և կոչեցաւ որդի մարդոյ, և զմեզ արար որդիս այ։ Ապա և արժանի բանիւք ասէ երանելի վարդապետն յովհան, թէ Որդի մ՛ յերկնաւորն թէ ոչ լինէր որդի այ. զի անկարելի էր որդւոյն այ՝ լինել որդի մարդոյ՝ քան թէ մարդոյ որդի այ լինել։ Արդ՝ յերդմնեցուցանել հարսինն զարթուցանել զսէր փեսային, պատասխանի տանէ զվաղնջուց հետէ զարթուցեալ սէրն՝ զոր կասեցոյց ադամ յանցմամբն։ Սակայն նա ըստ անոխակալ գթութե, և ըստ արարչական սիրոյն լուրոյ ոչ եթող 'ի ձեռանէ, այլ դարձեալ գթացեալ օրինօք և մարգարէիւք՝ որպ դաստիարակաւ յանձանձեաց, և երկնեաց՝ և ծնաւ զմեզ վերստին, Այն յապաշխարութեան սերմանէ, որպ ա-

ռաւ-

ռաքեալն Պետրոս ասէ, այլ յանա-
պականացուէն, կենդանւոյն և մշտնջենաւորին
բանէն Այ: Յաղագս այնորիկ ասէ,
թէ 'Ի ներքոյ խնծորոյ զարթուցի զքե-
զեզ. անդ երկնեաց զքեզ մայր քո. անդ
երկնեաց, որ ծնաւ զքեզ: Այսինքն
թէ զարթեալ էր նոր սէրն 'ի մեզ,
և միայն նպաստաւորութի 'ի մէնջ
պիտոյանայր կամելն և եթ: Արդ՝
որովհետև հոգւոյն ազդմամբ, և
նոր ծննդեամբդ 'ի հօրէ իմմէ՝ ի-
մացար զայնքան սէրն որ առ քեզ.
Որ զիւր որդին ոչ խնայեաց, այլ վասն
մեր ամենեցուն մատնեաց զնա. զորօրի-
նակ ասաց առաքեալ: Արդ

6. Դիր զիս իբրև զկնիք 'ի վերայ սրտի
քո. և իբրև զմատանի 'ի վերայ բազկի
քո:

Այսինքն թէ պահպանեա, և կըն-
քեա' լինել զսիրտ քո, և զբազուկ
քո. զի մի 'ի վայր անկցիս յամբառ-
նալդ. և մի մոռասցես առներ գոր-
ծելեաց իմոց ընդ քեզ երախտեաց՝
խնամօրէնութեանս, որ իմոյ ծնողին
որդի զքեզ արարի: Արդ՝ մի տար
զսիրտ քո դարձեղ սատանայի խոր-
հրդոց. և մի զձեռն քո, և զբա-
զուկ

զուկ ձգեր 'ի նա :

Մանզի հզօր է իբրև զմահ սէր . և խիստ իբրև զդժոխս նախանձ :

Յայտնեմք թէ, որպէս մահ խլատէ՝ յորս ժամանէ, և հզօր՝ նախանձ որպէս դժոխք . այսպէս և որք յինէն այս- պիսաւոր սիրով սիրեցան, և փոխա- նակ ընդ այնպիսւոյ սիրոյ՝ զկամս սէրն մերկեն, և զհակառակորդն սիրեն, իբրև զմեղս և զանօրէնութիւն և զսէր աշխարհիս, նախանձ սրտմտու- թեան բարկութեան տեառն՝ իբրև ըզ- մահ յարձակի 'ի վերայ նորա . և ստանայ անբժշկական սատանայ ցաւս :

Եւ թէ կամիցիք յարանց սիրե- ցեալք, և նոքա փոխանակ արանց սիրոյն 'ի սէրն ձգտեցուցանեն զսէրն, ոչ միայն խամրեն զսէր ա- րանց յինքեանց, այլ և աւելի ա- տելութիւն քան զիմ ատելութիւն ընձեռեն ինքեանց, և օտարանան յարանցն . նաև մահ բարկութեան կրեն յարանց՝ բազումք . որպէս և ա- սէ սոյն սողոմոն, թէ Լի է նախան- ձաւ սրտմտութիւն առն նորա . և ոչ խնա- յեսցէ յաւուր բարկութեան : Այսպէս որչափ են առաւել փեսայքն և ոյք

և փրկողին զմեզ հզօրանայ բար-
կութիւնն 'ի վերայ հարմնացելոցս
մեր՝ իբրև զմահ և զգժոխս , որ
այնչափ յաճախ սիրոյ՝ ատելութիւն
առ նա ցուցանեմք , և սատանայի՝
որ սեղեխաբար գողանայ զմեր 'ըր
ամենամնուլին ընդ քմի , և խուլացու-
ցանէ . ախորժելով տարածանեմք
զանձինս՝ 'ի ներքոյ անկեալ ամե-
նայն պղծալից խորհրդոց և գոր-
ծոց նր̄ : Վ̄ն որոյ յիրաւի գտանեմք
փոխարէն զանմահ մահն , և զդը-
ժոխսն անշիջանելի : Որդ՝ որ բերանս
կարէ երանել զայն , որ զայսպիսի
սէր ծանուցեալ , և զնոյ գոհանալ
գիտէ , և պահել զսէրն , և ոչ եղ-
ծանել մեզ : Իսկ դարձեալ , որ
բերան բաւէ աւաղել զտարաց-
եալսն մեզ յայնքան սիրոյ , և բը-
նակիչս եղեալ անմահ դժոխոցն :
Վ̄ն որոյ 'ի վերայ բերեալ՝ ասէ .
7 . Թեւք նորա թեւք բոցոյ հրոյ . և
Ջուրք բազումք ոչ կարասցեն շիջուցանել
զսէր . և գետք ոչ արգելցեն զնա :
Այս և 'ի մարմնական սիրոյ յայտ
գայ . զի ուր 'ըր սէր բնակէ՝ ծը-
նողական կամ ամուսնական , և որ

ի͞ն այամ, ոչ պէտք կարեն խափանել. և ոչ սուր, և ոչ հուր, և ոչ մահ: Որպէս 'ի վերայ որդւոց 'ի հուր և 'ի ջուր և 'ի սուր մատնեցան՝ և 'ի սով. նոյնպէս և 'ի վերայ առաքելոց: Որդ՝ որչափ առ ած՟ սէրն է, ևս անմեկնելի է 'ի մարդկանէ, և յաղթող հրոյ և ջրոյ և կապանաց և քերանաց և բանտից, և կնոջ և որդւոց. որով յաղթեցին իսկ սէրքն ա͞յ, առաքեալք և մարգարէք և մարտիրոսք և ճգնաւորք, քանի սիրովն արբեալք:

Եթէ տացէ այր զա՟մ կեանս իւր 'ի սէր իւր, արհամարհանօք անարգանեսցեն զնա:

Ոչ այս այսպէս իմանալի է, թէ ոչ է ա͞յ սէրն ըստ զմարդկան. մանաւանդ զմեղաց. որ՝ որչափ յաճախէ սէրն, նոյնչափ արհամարհէ և անգոսնի 'ի մարդկանէ: Այլ այն սէրն որ առ ած՟, այնչափ գովութե, և մեծարանաց արժանի է, որով և դաւիթ պարծի. Սիրեցից զքեզ տր՟՝ զօրութիւն իմ: Իսկ թէ նուաղեալ սիրտ իմ, և հարցին իմ. ած՟ սրտի իմոյ՝ բաժին իմ ած՟ յաւիտեան: Այլ ինքն՝ թէ դու ես իմ բաժին. և յոր-

ժամ

ժամ զքեզ յիշեմ, նուաղէ սիրտ իմ։ Նա եւ թէ՝ սէրդ իմ ընծայեսցէ առ ա՟ծ կենդանի ։ Նա այլ բազում բանս այսպիսի աղուականս զմայլական սիրոյն ա՟յ ջեռեալ զօրայս գտանեմ. զոր ո՛չ բաւեմ թուել։ Նոյնպէս և զպօղոսին անբաւս ևս. նոյնպէս և զայլ առաքելոցն։ Ըստ այսմ և զայնչափ վարդապետացն, և ըղձաւորացն ա՟յ. որով սիրով ջեռեալ՝ յաղթեցին աշ՟խի, և ա՟մ կարեաց և փորձութ՟եց ։

8. Քոյր մեր փոքր է, եւ ստինս ո՛չ ունի. զի՞նչ արասցուք քեռ մերում, յաւուր յորում պատմեսցի նմա ։ Եթէ պարիսպ իցէ, շինեսցուք 'ի վ՟ր ն՟ր մահարձանս արծաթեղէնս ։ Եւ եթէ դուռն իցէ, յօրինեսցուք նմա տախտակս մայրս ։

Այս բանս այսպէս իմանի, թէ 'ի հրեշտակայնոցն ասի զօրութեանց՝ վասն հարսինն, որ է նոր եկեղեցի՝ որ 'ի հեթանոսաց ։ Եւ քոյր ասի, յաղագս 'ի միոյ արարչէ լինելուն՝ և ստեղծողութ՟ն ։ Եւ փոքրիկ, վ՟ն անարգ բնութենս ասէ. զի հողեղէն եմք, թէ և միւսն հրեղէն, ո՟ր հոգին՝ որ ընդ մարմնոյս լծակցեալ.

բայց քան զհրեշտակս փոքր է . ո-
րում և մարգարէն վկայէ . Փոքր
ինչ խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս
քո . բայց առաւելագոյն փառօք , և
պատուով պսակեցեր զնա . և որ զկնի
բանն է : Նաև այնպէս փառաւո-
րեալ զմարդն պատուով , որ սա-
տանայ նախանձ բերեալ է նմա ,
յափշտակել կամեցաւ . յաղագս
որոյ անկաւ խակ յերկնից , և յիւր-
մէ փառացն : Արդ՝ տարակուսին
հրեշտակք մ̅ո տկար բնութեն , որ
անտանելի և ա̅ծային խորհրդոյն
և փառացն և տեսութե և գիտու-
թե հասու եղև : Նա աւելին որպէս
բաղում անգամ գրեալ եմ , զշտե-
մարանս սրտին , և մտացն կոչէ :
Նաև տարակուսին հրեշտակք ան-
տանելի զայս բնութիս գիտելով
այնմ անտարր տարրութենն . յա-
ղագս այնորիկ ասէ , թէ զի՞նչ ա-
րասցուք քեր մերում յաւուր յորում պատ-
մեսցի նմա : Այսինքն , երբ պատմի
փոքր և անստոլին անհամաձայն բնու-
թեն մարդոյն՝ ա̅յ զհողեղէնն առ-
նուլ բնութիւն . և յորովայնի և
յարգանդի , և ընդ կուսական ար-
գանդն

դանդղն ծնանել ոյ զմեզ լինքեանս՝ և կուսին կոյս մնալ. և կաթամբ սնանիլ ։ Նաև զի երկայն է զամ թուել զոյ կիրս, զամենայն ըզ- մարդկայինս կրել, զոր յանձն առ․ բաց 'ի մեղաց. և թուքյանձն առ- նուլ, և ապտակ, և գան մտ- կի, և ապերանս զգեստու. և փը- շեաւ պսակել, և ծեծելոյ զածայինն գլուխն եղեգամբ. և մերկ 'ի խա- չին բևեռել ընդ չարագործս, և լեղեաւ և քացախով կերակրել, և մեռանել ոյ, և խոցիլ 'ի կըն- ուորէն տիգաւ, և սպասիլ՝ և թա- ղիլ. և որ սոյնպիսիք ։ Ո՞յնպիսի պատմութեն զխորդ լուեալ հաւա- տացէ, կամ ընկալցի փոքրն այն ստեղծուած և անատին ։ Այս և առ ածածինն ևս իմանալի է՝ լսել 'ի հրեշտակէն, թէ յղանալոց ես, և ընդունել, և կրել յորովայնի. և որ այլն ևս ։ Նա է իսկ արդարև տարակուսելի, և հրէից գայթագ- ղութի, և հեթանոսաց յիմարու- թի. յաղագս որոյ աստ մեծ առա- քեալն. բայց միայն տեղի տալի է ոյ հոգւոյն. Որ առնէ զմեծամեծս՝ և

զանոնընենենս, և զհրաշալիսերգս. որոց ոչ գոյ թիւ : Նաև յաղագս այնորիկ ոչ կարացին հաւատալ տմ մարդիկ, զի ոչ գտաւ հոգւոյն սրբոյ տեղի 'ի նոսա. որ զանկարելին կարելի ցուցանէր նոցա : Վասն որոյ 'ի վերայ բերեալ՝ ասէն հրեշտակք, որ տարակուսին վասն մեր փոքր և անստին

բնութենս :

9. Եւ եթէ պարիսպ իցէ, շինեսցուք 'ի վերայ նորա մահարձանս արծաթեղէնս : Եւ եթէ դուռն իցէ, յօրինեսցուք 'ի նմա

տախտակս մայրս :

Բրդ՝ յառաջաբանի գրոցս ասացի, թէ ոչ գոյ յարմարանք մարգարէականք, զի 'ի բազմաց լեզուաց է առեալ փոփոխումն, յեբրայեցւոյն 'ի հելլենացի, և 'ի հելլենացւոյն 'ի յոյն, և յասորի. և ապա 'ի հայ : Բայց միտք այս է. եթէ մարդ չէր և կենդանի ստեղծուած՝ 'ի հաստարակաց արարչէն, և պարիսպ էր, այլ յաւելէաք, և արծաթով իսկ զյաւելուածսն առնէաք՝ մարտկոց շինելով : Եւ դուռն էր, յօրինէաք 'ի նա տախտակս մայրս. և յաւելլով 'ի փոքրկութեն. որ տանելի լի-

նէր

ներ մեծութեան պարիսպն , կամ մտանել 'ի դուռնն : Արդ՝ զայս լըսելով Հարմնն , Համարձակի՝ և պատասխանի առնէ Հրեշտակացն տարակուսելոյն . որպէս և գրեալ իսկ է :

10 . Հարմնն համարձակէ . Ասէ պարծող , և [illegible] պաշտօնեայ :

Այսինքն , թէ մի կարի յածիք 'ի Հոգս յաղագս իմ տկար բնութեանս . զի զօրութիւն ամենակարողին՝ փոքրս մեծագոյն քան զպարիսպ եմ և ամուր . և ստինքն՝ իբրև զաշտարակն իմ ստինս : Զի որ զերկինս և զերկիր , և զմեր բնութիւնս՝ և զձերդ յոչնչէ արար , նա զիս մեծացոյց , և զստինս իմ առաւելացոյց քան զձերդ . զի զոր դուք ոչ կարէք լսել և տանել և կրել , իմ տկար բնութիւնս կարողացեալ քան զձերդ՝ լսեաց և տարաւ , և Հաւատաց : Ա՛յ որոյ 'ի վերայ բերեալ՝ առէ :

Ասէ էի յաղագս նորա [illegible] փոխեալ խաղաղութեան :

Որ կորուսեալս էի որպէս զդրամն և զոչխարն՝ որ յաւետարանին 'ի փեսայէն իմմէ առակի , և պատե-

րազմ

բազմ և խառովուն ունէի ընդ երկ-
նայինսն և ընդ երկրայինս վասն
մեր ապստամբելոյն, այժմ խաչին
փեսայիւն եղէ յաչս նորա ճշմարտա-
պէս խաղաղութին, և գտեալ 'ի մի-
ըրութէ ։ Վարձեալ յաւելեալ
յառակս իւր ա̄ծայինն սողովմոն,
և ասէ ։

11. Այգի եղև սողոմոնի 'ի բեեղամոն ։
Բեեղմաւոն պարարտ երկիր է 'ի
հրէաստանի ։ Որով առակէ զեր-
կիր, և զմարդն որ 'ի նմա ։ Եւ
սողովմոն զք̄ս, որ եղև խաղաղու-
թին մեր․ զի խաղաղութին թարգ-
մանի սողովմոնն անուն ։ Եւ այգի
հաւատացեալք ։ Ո՛ր և դաւիթ
մարգարէ և եսայի, և ինքն տէրն
այգի կոչէ յաւետարանին․ որ և,
Ետ զայգին իւր պահապանացն ։
Բերցէ ասէ այր իւրաքանչիւր 'ի պտղոյ
իւրմէ հազարս արծաթոյ ։
Այս ոչ ունի բաղում բանս մեկ-
նութեն ։ Բայց երանի որ տան զ-
պտուղ 'ի ժամու խնդրոյն երկնա-
ւոր սողովմոնին․ եթէ զանձանց,
և եթէ որոց ժողովուրդ հաւատա-
ցեալ են ։ Եւ եթէ շատ և եթէ սա-
կաւ

կամ ունին շնորհս , կամ ժողո-
վուրդս , կամ ինչս , համարս պար-
տին տալ երկնից Թագաւորին սո-
ղովմնի հոգևոր առաջնորդք , և
մարմնաւորք ․ եպիսկոպոսունք , և
քահանայք ․ Թագաւորք , և իշ-
խանք ․ և այլ պաշտօնեայք , եթէ
մարմնաւորք , և եթէ հոգևորք ․
Նաև աշխարհականն , և զինուորն,
ընդ կնոջ , և ընդ որդւոց , և ընդ
ծառայից պարտի տալ համարս ։
Ոչ եթէ միայն զիւր պիտոյսն խնդ-
րէ , զծառայութիւն և զգութ և
զհպատակութիւն և զհարկս և ըն-
հասս , և որ այլ այնպիսիք են , և
զհոգւոյ և զմարմնոյ զպէտս նոցա
ոչ մեծաջան և սրտացաւաբար հոգ-
տանի , պատժելոց է 'ի քօէ ։ Նա-
թէ արդար ինչ մեղաց տեսանիցէ-
յոք , սիրով և արտասուօք բժշկել
պարտի , և սպեղանիս դնել վշտակ-
ցութե̃՝ ոմ̃ անձին ․ և ոչ դառնաղա-
բար ամբարձեալ միօք , փքացեալ
իշխանութե̃ն՝ զոր ունի ․ եթէ հո-
գևոր , և եթէ մարմնաւոր ․ եթէ
տան իւրում , և եթէ ծառայից ։
Որ զասրն առնու , և զկաթն կը-
թէ ,

թէ, և զզերման զէնու. և ՚ի պա-
րարտ տեղիս արօտից ոչ տանի.
որպէս մեղադրէ երկնաւոր սողո-
մոնն մարգարէիւքն: Եւ զընկե-
րին և զծառայիցն և զեղբօրն՝ ոչ
հոգ տանել ոմ̃ զանձին, զու-
սուցանելն զորբուն, և զողորմած-
բարս և զխոնարհուն, զանձուլու-
թիւն յաղօթս, զանհեղգութիւն
՚ի պահս, և յերթալ ՚ի տունն ա̃յ,
և յուսուցանել. երթալ ՚ի տես
հիւանդաց, և բանտարկելոց. և
հիւրոց ընդառաջ՝ և ընդունելու-
թիւն, և յղարկումն: Եւ զեկե-
ղեցիս պատուել ընծայիւք, և պա-
տարագօք, և սպասուք: Եւ ըզ-
տօնս տէ̃րունականս մեծարել ըզ-
գաստ փառաբանութ̃, լուցմամբ և
նուէրօք. նոյնպէս և զկիշատակս
սրբոց: Եւ զքահանայս պատուել
ա̃մ զպաշտօնեայս ա̃յ, և զառաջ-
նորդս ժողովրդեանն քնի̃: Եւ
թագաւորաց և տէրանց մի առ աչս
ծառայել, այլ սրտի մտօք: Եւ որ
այլ կարգ քրիստոնէութե̃ են, զոր
չե̃մք բաւական այժմ թուել, զոր
խնդրէ ա̃ծ, որ կոչեցաւ սողոմոն,
՚ի

'ի հոգևոր առաջնորդաց, և 'ի մարմնաւոր. Զի իւրաքանչիւր պատշաճի առնել, և ուսուցանել հեզաբար: Ոչ ի վասն այնորիկ տիրեն մեզ, զի ընդ մեր պատերազմ հարկինն հարկանել հոգևոր առաջնորդքն ընդ սատանայի. և մարմնաւորքն արիւն ևս պարտին հեղուլ 'ի վերայ մեր, և պատերազմ տալ ընդ թշնամեաց. և եթէ կարասեաւ, և եթէ մահուամբ, թափել 'ի թշնամեաց: Եւ դատ առնել իրաւամբք անակնառութ՟՝ անհանդխատ՝ ոպ̄ զայ̄ սպասաւորս. և զամ̄ մարդոյ տուն՝ ոպ̄ զիւր համարել: Որպէս գրեր տրդատ մեծ թագաւորն, մինչ դեռ 'ի կռապաշտութեն իսկ էր, առ իւր Ն̄ս, Որպէս տանուտէր՝ որ ընդ ձեռամբ տանն հոգայ, նոյնպէս և մեք հոգամք վասն հայոց աշխարհիս: Արդ՝ եթէ կռապաշտքն այնպէս հոգ տանէին շինութե Ն̄ի, և ոգւոց փրկութե մարդկան. որ ըղձեան վն այնր չարչարելին դառնալ 'ի քրիստոնէութե 'ի պաշտօն կռոցն, թէ՝ խնդրէին 'ի մէնջ ամէն՝ աստուածքն, և չէ մեզ ծառայի հարկք

և

և ծառայունք նոցա, եթէ այսմ փոյթ չառնեմք. ով արդարն՝ սըրբոյն գրիգորի ասէր, թէ ԱՃ — տէրն նորա շուտ՝ և պիտերէն ծառայութէն նէշէջէ: Նոյնպէս և պարսից թագաւորն՚ի վարդանանցն գրէր: Նոյ այլ բաղումք, որ և գեհենի, և տանջանաց, և դատաստանի ահի ոչ ունէին: Արդ՝ մեք որ ՚ի գիտութեան եմք, և հաստատեալ եմք ՚ի քն, և ահի ունիմք դատաստանին նորա, և գիտեմք ստուգապէս, եթէ համարս պարտիմք տալ ըստ այսմ ամի. Նոյնպէս և ընդ անձանց ընդ խորհրդոյ բանից և ընդ գործոյ, քանի՞ պէտք են զգուշութեան, զի մի ամօթով կացցուք յահեղ ատեանն առաջի երկնաւոր արքային տողմանի՝ ՚ի պահանջելն յայգւոյ զպտուղն: Այն որոյ ըխր երանի են՝ որ տան զպտուղն լիապէս. և ըմբռոց ըխր աւաղմանց, որք ոչ կարեն հատուցանել զպտուղն: Արդ՝ արարեալ սկիզբն տողմանի ՚ի ձեռն առակս նոյն՝ զի գրախտին սաեղծուլն նախահօրն, և յանկանելն ՚ի փառացն. և դար-

ձեալ առնուլ զփառս՝ քոյ գալըս-
տեամբն. և համանմանալ նմին հե-
թանոսաց, և սպէսպէս՝ և զանա-
զան շնորհաց հանդիպել, զոր կար-
դեցաք և եդաք 'ի գիրս յայսմ, ած-
փակեաց յայգի 'ի հարմնէ անուա-
նէն, և յիւր միասանգամ գալըսւա-
տըն, և 'ի պահանջումն ստոյգ ար-
դարոցն, զոր յառաջ հարմնն կո-
չեաց. ցուցեալ զառաւել սէրն առ
մարդիկ, թէ ոչ միայն հարմնա-
ցեալ ենք՝ և միաւորեալ ընդ փե-
սային քոյ, այլ և կերակուր ենք
նորա՝ ոմն խաղող յայգւոջ վայել-
չական, և եղեալ 'ի սկուտեղս թա-
գաւորին քոյ։

Ետ զայգին իւր պահապանաց։

Պահապանքն՝ այսոքիկ են, զոր ա-
սացի։ Դարձեալ, և իմ անձն՝
իւր պահապան է։

Բերցէ այր իւրաքանչիւր 'ի պտղոյ իւրմէ
հազարս արծաթոյ։

Որդ՝ այգի ասաց, և պտուղ՝ ար-
ծաթ. ըստ այսմ զխորհրդ յարմարի,
թէ ոչ յայտ է, զի առակաբանիւս
վարի. ոմն է իսկ բովանդակ գիրս
երգոց երգոցս։ Որդ՝ հազարս՝ ըղ-

կատարեալ՝ և զւազմաւորական բերան առէ՝ զորդւոց : Եւ արծաթ . զի ո̄պ արծաթն ընտրի՝ և փորձի 'ի բովս , նոյնպէս և ս̄բքն ո̄պ զարծաթ փորձեալ են յերկրի , և սրբեալ՝ և պարզեալ եօթնպատիկ 'ի հողոյ :

12 . Այգին իմ առաջի իմ :

Մեք ո̄պ մինչ յերկրի էր մարդն , և ընդ երկնաւ ո̄պ վարդագուրաւ միջնորդեալ էր . այլ իմ է , և ինձ , և առաջի իմ հանապազ : Նոյնս և առաքեալ վկայէ , ասելով . Այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ , այլ յայնժամ դէմ յանդիման : Եւ որ այլք բազումք սոյնպիսիք 'ի սրբոց ասացեալք յաղագս այսր հաւատարմութեան :

Հազարք սողոմոնի , և երկերիւրք , որոց պահեն զպտուղ նորա :

Տես աստանօր զանչափ սէրն ա̄յ ի̄ մարդկան . յաղագս որոյ և ի̄մաբան ասէ , թէ և ոչ ընդ մի ինչ այնչափ զուարճացաւ ա̄ծ , որչափ ընդ մարդոյ ուղղութեան և գիտութեան : Նախնիքն , թէ ոչ ընդ մի իրս այնպէս զուարճանայ ա̄ծ , որչափ ընդ մարդ ար-

դար

դար և ՟նք · յաղագս որոյ զերկինն՝
և զերկիր արար, և որինչ յերկրի ·
վ՟ն որոյ մարդ խակ եղև · և որ այլն
ես : Արդ՝ հաղարք սողոմոնէ, իւր ա-
ռէ · Թէ ինձ է շատ պարգևսն և
խնդութիւքն ուղիղ գտանել մար-
դոյն՝ և պտղատու, քան իւր խակ
մարդոյն · այնպէս՝ որպէս ընդ հա-
զարն՝ և ընդ երկերիւրն ընդ մէջ
է · ինձ հազար, և նմա երկերիւր ·
որ զերկու բնութիւս ունիմ միաւո-
րեալ՝ ի մի, հոգի և մարմին : Ու
կատարեալքն ինձ, որ կատարեալս
եմ ա՟ծութեամբս՝ և մարդկութեամբս,
մարդ կատարեալ, նոյնպէս և ա՟ծ
կատարեալ · յաղագս զմեզ կատա-
րեալ փոխելոյ : Օ ի տասն, և հա-
րիւրն, և հազարն՝ կատարելութիւք
են : Օ ի մինն ՚ի տասն աւարտի,
և այլ ոչ յառաջ · բայց եթէ երկ-
րորդէ · նոյնպէս և մի տասն՝ տասն
տասն լեալ հարիւր՝ այլ ոչ յաւե-
լու · նոյնպէս և հազարն՝ տասն հա-
րիւրիւ : Ու զինի այսմ և պահա-
պանացն ասաց վարձս տալ, ոչ միայն
որ զինքեանս պահեն, այլ որ ա-
ռաջնորդութեամբ են պահապանք և

Ճշմարիտ մշակք այգւոյն , եթէ հոգևորք՝ և եթէ մարմնաւորք , վարձս առնուն ՚ի տ̃նէ յ̃սէ ք̃սէ :

13. Հարսնն ասէ : Որ նստեալդ ՚ի պարտէզս , այլք անսան քեզ . զձայն քո լսելի արա ինձ :

Արդ՝ զոր փեսայն այգի անուանեաց զհարսնն , և այլք յառաջագոյն պարտէզ , զայն հարսնս երկրորդեալ՝ պարտէզ զինքն փեսայն կոչէ , որ զպտուղ այգւոյն պահանջէ : Օ այս ասելով , թէ դու զօրութիւն իմ . և քո օգնութեամբդ՝ և զօրացուցանելովդ տամ զպտուղ . բայց միայն զձայնդ քո լսելի արա ինձ : Օ այն՝ զոր ասաց ինքն աւետարանաւն , թէ Եկայք առ իս ամ̃ վաստակեալք , և բեռնաւորք . և ես հանգուցից զձեզ : Արդ՝ աղաչէ հարսնն , թէ զձայնդ քո միայն լսելի արա ինձ . զի անմոլար հետևեսցի ըզհետ հովուին . որ ասացեր , թէ Ոչխարք իմ ձայնի իմում լսեն , և զհետ իմ գան . և զօտարի ոչ երթիցեն , այլ փախիցեն ՚ի նմանէ . զի ոչ ճանաչեն ըզձայն նոցա : Արդ՝ զայն աղաչէ , զի միայն ձայնին անկարօտ պահեսցէ-

ցան

ցանկալոյն և փափաքելոյն · որում անմոլար զհետ երթեալ՝ տայցէ ըղ-հազարս արծաթոյն , և զպտուղ այգւոյն , և զբերս պարտիզին ։

Այլ՝ անաան ջեղ ։ Ով թէ ամենե-քին քեզ սպասեն · և ամենեցուն ակնկալիք դու ես , երկնայնոց և երկրայնոց , և որ ՚ի նոսա արարածք ։

Այս է՝ այլ՝ անաան ջեղ ։ Ո՛ ձայնդ-քո՝ ես լսել՛ տուր ինձ , որպէս և հը-րեշտակաց՝ որ մտաւորք են քան զմեզ · և քո լուսովդ լուսաւորին · ո՛վ մեք զգալի և իմանալի արեգա-կամբս , և նոքա քև ։

14 · Փախիր եղբօրորդի իմ , և նմանեաց այծեման , կամ որթոյ եղանց ՚ի վերայ լե-րանց խնկաբերաց ։

Տես զյաւելուած պաղատանաց հարսինն նման մարգարէին սաղ-մոսերգողի փութացուցանել յօգ-նութի , ասելով , Փութա՛ յօգնել ինձ · և մի՛ յամենար ։ Այս դարձեալ · զի նը-ուաղեաց սիրտ իմ , վաղվաղակի լուր ինձ , Այս · փութա՛ յօգնել ինձ Տէր Փրկութեան իմոյ ։ Այս որ այլ այսպիսիք՝ զփա-խիրն ասելով գուշակեն , և զնմանեաց այծեման , և կամ որթոյ եղանց , ըստ

դաւթի հայցմանցն , զարդա-
համն լինել աղաւէ . ոչ զայծեանն ,
և զեղան որթ . որ սրահայեացք են ,
և երագահաք : Նաև զհանդեր-
ձեալ գալստենէն 'ի մէջ բերեալ
պահանջելով զպտուղս , զոր խնդ-
րէ յամենեցունց 'ի միանգամ՝
գալստեան փեսային , յորժամ 'ի
մէջ գիշերին բարբառ լինի . Ահա
փեսայ գայ , ելէք ընդ առաջ նր : Որ աւե-
տանէ զիւրաքանչիւր խորհուրդս՝
և զգործս նմանութ ընդ աղօս ա-
ռակին այծեմանն՝ և եղանն , որ 'ի
բարձունս լերանց բնակէ . ուստ 'ի
մարդիկ լեռնացեալք առաքինու-
թբ , և անուշահոտ վարուք ոչ լե-
րամբք խնկաբերօք , և անդ 'ի մբ
և 'ի վերին թռուցեալ ընդ փե-
սային 'ի լեառնն յերկինս . զոր և
ասէ մծարան . նա և 'ի ներքս մտցէ
արագընթաց , նմանեալ առակո-
զլին բանիս որ ասէ , Փախի՛ր եղբօրոր-
դի իմ : Ո՛ի արագընթացն , և փա-
խի՛ր զմի միտս ունին : Արդ՝ ասե-
լոցս , թէ նա 'ի ներքս մտանէ ա-
րագընթաց՝ 'ի վերայ բերէ , կէսքն
ընդ նմա 'ի ներքս մտանեն , որ են
հար-

հարսնացեալքն փեսային . և այլքն
առաքօղ արգելանին նման , զմտա-
նելոյ ժամանակն 'ի պատրաստել
ծախելով: Նու բազումք յետոյ լան՝
զկնի ունեալք զտուգանան պղեր-
գուեն , յորժամ ոչ ևս յառագաս-
տըն մտանել իցէ . և յոլովագոյնս
մաղթեն , զորս չարաչարն փակե-
ցին . այլում օրինակի նմանեալ
վերջացելոցն 'ի հարսանեացն . զորս
բարի հայրն ուրախ առնէ բարեաւ
փեսային . յաղագս կնոջ նորա հար-
սինն , կամ յաղագս ընծոյ եղանց ,
զորս չարաչար ստացաւ , վասն փոք-
րագունիցն զմեծամեծսն տուժել .
Արդ՝ զայս ասէ ա̃ծաբան . զոր և
սողոմոն յառաջագրէ , թէ 'ի փախ-
չել փեսային , կամ յերագելն յեր-
կինս , յորժամ գայ դատաւոր մե-
ղաւորաց , և կոչնական արդարոց ,
և զորս ընդ խուրն երթեալ արժա-
նաւորքն , առեալ զնոսա արագ 'ի
ներքս մտանէ ո̃ղ փախստական .
և փակի դուռնն՝ մեղաւորաց . Ո ի
մինչ պատրաստելն պարտ էր զճա-
նապարհն , զայն յանօգուտ իւր ծա-
խեցին , զհիս իւր հօգալով . զուծս
է

եղանց , և զկն և զորդս և զանդաստանս , և զայլ՝ զոր յերկրի ծուփք : Եւ յայնժամ զընդունայն լալիւնն լան՝ վերջոյ ուսեալք՝ և զմտաւ ածեալք զչնաւան իւրեանց՝ յորժամ ոչ ևս կարելի է : Յորոյ վերայ բերեալ՝ ասէ · քանզի ոչ ոք անդ մնասցէ յարհամարհողացն , և ծուլացելոցն , և յաղտեղեացն , այլ ոչ փեսայապէս զարդարեալ , թէ և աստուստ զինքն սպրդիցէ՝ սնոտի յուսովք խաբեալք : Ո այս ասէ , թէ և աստ խաբեմք զմեզ սնոտի յուսով · ոմն զայս իրս ասելով , և ոմն զայն · և թէ քրիստոնէից ոչ գոյ գեհեան · և ողորմած է Ած , որ վն մեր մարդ եղև , և չարչարեցաւ վն մեր , և մեռաւ · արդ՝ նա զիա՞րդ մոռանայ զգութն , և առաքէ զմեզ 'ի յաւիտենական հուրն , կամ հանէ յառագաստէն : Այս է սնոտի յուսալքն խաբեալ · զոր և 'ի վերայ բերէ , յորժամ 'ի ներքս լինիցիմք , յայնժամ գիտէ փեսայն զորս վարդապետէն · որք մերձ լինիցին ընդ նմա երթեալ հոգիքն՝ եղիցին ընդ նմա · ո՞չ թըուի

ունիլ ինձ, վարդապետելով զկատարելագոյնսն, և զմաքրագոյնսն։ Որդ՝ ծանիր յա͞ծաբանի ասելդս, թէ ա͞մ զոր ինչ խօսեցան, և զոր ինչ ուսուցին մեզ գիրք, օրէնք և մարգարէք, և աւետարանն. որ է ք͞ս, և առաքեալք, և վարդապետք յայտնապատումք, և առակախօսք, անկատարք են և թիւրք առ հանդերձեալ ուսումն, զոր վարդապետեալ փեսային ուսուցանէ զկատարելագոյնսն, և զմաքրագոյնսն՝ անդ՝ կատարելոցն կատարեալ փառօք, ո͞չ զհրեշտակսն. և մաքրելոցն, ո͞չ զսերովբէսն և ըզքերովբէսն կատարեալ մաքրու͞թ։ Նաև զոր տ͞րն ասաց՝ «Ոչ ըմպեմ ՚ի բերոյ որթոյ՝ մինչև արբից նոր ընդ ձեզ յարքայութ͞ե հօր իմոյ». զայս կատարեալ վարդապետութ͞ի՝ ասէ, սոյն գիրք զոր ա͞ծաբան յայլում տեղւոջ, թէ որ է նո͞ր ուսուցանելն, և մեր ուսանելն։ Որդ՝ թէպէտ և բարձրագոյն և մեծամեծ խորհուրդ առակաւորեաց սողոմոն երգոյ երգոցս, զբովանդակ զք͞սի գալուստն, և զմահն չարչարանօք հանդերձ, և

ըզ-

զյարութիւն, և զմիւսանգամ գալուստն, և զհեթանոսաց հարսնութիւն փեսային քի, և զեկեղեցւոյ լուսաւորութին, և զշնորհաց հոգւոյն առատութին, մարգարէութք և առաքելութք և վարդապետութք և մարտիրոսութք և կուսութք, և քահանայութք և Ազնուաւորական հանդիսիւ, և ապաշխարողական վարուք. և որ քի պատարագաւն, մեղուցելոց և մեռելոց յոյս ։ Այնու զոր ուսանելոց են սրքն ՚ի նորոգումն, և ՚ի կատարելութն խորհրդոց ՚ի սիրոյ փեսայէն, յոյժ անկար է այս, որ ՚ի սողոմոնէ ասացան, և այլքն ամենայն որ ՚ի հնոց և ՚ի նորոց պատմեցան՝ ՚ի վերայ այսր ամենայնի հրաշից ոյ որ եղեն, և որք լինելոց են, որչափ բաւական աբար տր յս ասել, և ուսուցանել ։ Աւարտեսցուք զբանս մեկնութեց երգոյ երգոցս, և տացուք, զոր ածաբան ասաց յիշէլն ։ Որոց և մեք հաղորդեսցուք, որ մեկնեցաքս զայսոսիկ, և որք ուսանիքդ ՚ի նոյն ինքն քս յս ՚ի տր մեր. որում փառք յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ։

Գար.

Պարծեալ. եւ յաւէտ փառք շնոր-հատուողին տն մերոյ յի քի հան-գերձ Հարբն, և սբ. Հոգւովն յա-ւիտեանս յաւիտենից. ամէն ։

ՆԻՕ. ՚ի Թուականութե և ՚ի Թա-գաւորութեն Հայոց՝ Հարկեցայ ես գրիչ-որ քահանայ՝ ՚ի Նարեկայ, որ-դի տն խոստովոյ անձաւացեալ ե-պիսկոպոսի, ՚ի գուրգենայ ամծա-սէր քաջապատկեալ արքայէ յորդւոյ աբուսահլի Համազասպ Թագաւո-րի, առ ՚ի մեկնութիւն աչաւոր բա-նիցն սողոմոնի, և բացայայտել զխորին ծածուկսն որ ՚ի նոսա. որ են քաղցր առ ՚ի լսել ։ Վասն զի զփեսայէ, և զհարսնէ ասէ. որ և զառեանց, և զկարմրացեալ չրթանց, և զայտից գեղեցկութե, և զաչաց ցանկալեաց, և զքեռ, և զեղբօ-րորդւոյ, և զորխորդաց. և զայն ամ այսպիսեաց բանից տափակա-նաց՝ և արտից խաղատանաց՝ սեռն սիրոյ շաղկապ միաւորութե. զոր լը-ուեալ մարդկան անխմանալեօք մը-տօք

տոք յայլ և յայլ իրս իմանային ։ Նա 'ի հոգս եղեալ թագաւորին այսպիսի իրի, յղէ առ իս մի ան֊ գամ, և երկիցս․ որում ոչ իշխե֊ ցի ընդդիմանալ․ զի ծանեայ՝ եթէ ա̄ծահաճոյ է հրամանն․ և մեկնե֊ ցի զերգս երգոցն նորին հրաման֊ նաւ ։ Զի թէպէտ և աւելի գործ քան զիս առի զանձամբ, առ եր֊ կիւղի անհնազանդութե, զի մի թա֊ գաւորական հրամանն անկատար մնասցէ ։ Սակայն յոյժ յանդըգ֊ նութի էր ինձ այս․ և բազում բամբասանաց արժանի յամենե֊ ցունց, նաև յա̄ծային կողմանէն պատժոց ակնկալէք ։ Բայց յերկո֊ ցունց կողմանէ, յա̄ծայնոցն, և 'ի մարդկայնոցն զթագաւորական հը֊ րամանն առաջի կալեալ՝ կարծեմ արդարանալ․ զի իւր իսկ քոյ հրա֊ մանք է՝ հնազանդ լինել թագաւո֊ րաց իբրև ա̄յ․ և որ հնազանդի, իւր համարի ա̄ծ․ և որ անհնազանդ֊ գտանի, և զայն նա իւր համարի ։ Զոր աղաչեմ զընթերցասէրսդ՝ մի մեղադրանս յաւելուլ ինձ յաղագս ձեռնարկութե 'ի գործ՝ որ առաւել

քան զարժանն իմ: Ո՛վ լոյս հաւ-կապահանջ խնդրողին ոչ կարւյսի վերջացեալ գտանիլ, այլ յուսա-լով 'ի մի հոգին 'որ, զմտաւ ածի՛ թէ ոչ անտես առնէ զաղաչանսն առ նա: Սկիզբն արարի աղօթիւք, և արտասուօք խնդրել: Որ և նայ-եցեալ յանարժանութիւն իմ, և 'ի սրտեռանդն կամսն հայցողին, ե-բաց զբերան իմ յասել, և 'ի հա-մառօտել զսա 'ի փառս քո:

Ամէն:

# ԲԱՆ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ:

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

այլաբանութեանց · իրքին ունելով զճշդութիւն՝ զհամառօտու-թե, և զհարազատութե : Եւ ասէ այսորիկ՝ անձաբան ազ-գաղղիացի 'ի ծովէն՝ անուն Գուլիէլմոս Վիլըֆրուա, տեղեակ հայկական բարբառոյ, և թագաւորական թարգ-ման եւս մատենից, և վարդապետ եբրայական լեզուին յար-քունի համալսարանին, ընթերցեալ զայն՝ գերազանց արժա-նագրեաց զան պարարեալ յայլոց վարդապետաց · Որոց զբանն է գտանել 'ի գաղղիարէն յեռագիր ցանկի հայկա-կան մատենից արքունական գրանոցին :

Արդ՝ այսպիսում արժանացեալ պարգևի 'ի արքայ հօրէն մերմէ, միանգամայն և խորհուրդ իւր գոլով իրոյն · (զի նոյն պարտեմա կարևորութեն կայ յամ ժամանակի, և վասն ամենեցուն ·) նմին իրի կամ եղև ըստ յանդգնել ժամանակի 'ի տիպ արտահայտութեան զայն : Ահա որով երկուս ինչ ծա-մեղ նշանակել համառօտ : Առաջին՝ և զգուշալի, զի յընթեռնուլ զգիրս՝ հարկ է երկուցէ մօտ 'ի ներքս 'ի բանն մտանել, ստիպերգաբար առանել ծածկեալով, քան թէ ճնշել աստղեալն լինել տառագաղնե · վասն զի մի ինչ նոր կամ զծագրին՝ մատոյ փոխոյ գայթակղել յառաջնոց գրեալն, մանաւանդ եթէ գրեալ ինչ առեն փետաքրքեն այլագի քան զանձրական խօսս կամ զմարդիս արդի ժա-մանակաց :

Երկրորդ, յայտ առանձին զհամեմատս ինչ գրոց մեկնու-թե, և առաջինոյ տպագրութեան : Զի բնագիրն՝ զոր 'ի մեկնութի առնու ոչ վարդապետս մեր, բազում անգամ ար-ուղ բանիւ վարի՝ ոչ միայն 'ի տպագրեալ օրինակին առաջ-նոյ, այլև 'ի յեռագիր օրինակաց՝ որ առ մեօք են : Այլ և համառօտ յաւելուածն՝ որ կայ յառաջ Է · գլ-խոյ, *Բարձրացի Թագաւոր մեր* · նոյն, 'ի մեկ-նութեան եղեալ կայ 'ի օրինակն անդր : Արդ՝ վասն այսո-րիկ առ ժամս զայս ինչ նետ առել անձինք, թէ առ այ-նա Հ. Մեծ այլ և օրինակ լեալ իցէ յաղթի մերոյ, որով և վարեցաւ նորէկոցին · զի յանդուգն մասաց է կարծել · թէ նա ինքն ըստ մտի այլաբանեալ իցէ · և մեր նոյնպէս հարկ 'ի վերայ կայր անյեղլի պահել զնոյն, որ և է-դեալ էին : Իսկ տպագրութե առաջնորդ՝ երկուս և եթ առնեալ օրինակս՝ ո՛չ այնչափ հնագիրս, զոր առ միմեանս

# ՀԱՒԱՔՈՒՄՆ

Երեւելի տարբերութեանց, հանդերձ աւելեաց ինչ համառօտ բացատրութեամբ:

Յառաջք: Կէտք:

| | |
|---|---|
| (’Ի խնդրոյ ծածանէր և քնարական սրբոյն Դաւթի · որ) | (Այս ու կայր [illegible] Բայց ըստ [illegible] [illegible]) |
| անսպառութեան ոյ: | [illegible] ոյ: |
| ընդ իրաւանց դատեաց: | [illegible] |
| [illegible] | [illegible] |
| պայծառապարդութեան: | [illegible] |
| զգենլով զփառսն: | [illegible] |
| յայլմէ անսպառութեան: | [illegible] |
| Գ. Լ. Ա. | Գ. Լ. Ա: |
| 2. Անուշահոտութիւն: | [illegible] |
| 4. Մաքուր առնել է: | Այլ այն է: |
| մի այլ [illegible]: | [illegible] |
| 12. Յանդայ [illegible]: | [illegible] |
| | . . . . . . . . |
| Գ. Լ. Բ: | Գ. Լ. Բ: |
| 1. Պատմեաց [illegible]: | [illegible] |
| | . . . . . . . |
| 5. Խանդաղակաթ եմ: | Խանդաղակաթ եմ: |
| ո՜ [illegible]: | որ [illegible]: |
| [illegible] յաւելին: | [illegible]: |
| 6. Թէ և [illegible] նեղութեանց: | Թէ [illegible]: |
| [illegible] որ յերկրես: | [illegible] որ [illegible]: |
| 8. Եկեղեցւոյ՝ որ ’ի հե" | Եկեղեցին՝ որ ’ի հեթանոսաց: |
| ոչ յանցաւորաց: | ոչ [illegible]: |
| զաղաչողին մաղթանս: | [illegible] |
| 9. Որթոյ եղանց: | Որթոյ եղանց: |
| [illegible] տեսանողութեան: | [illegible]: |

| | |
|---|---|
| 'ի մէջ ճչողաց : | 'ի մէջ ճչուելոց : |
| 10. Վն զգեցմանն : | Զգեստամանքն : |
| 12. Փոխանակ յառնելոյ : | Փոխանակ յապելոյ : |
| 'ի ժամ գարնայնոյն : | 'ի ժամ գարնանայնոյն : |
| տարածանելին ը՟ երկիր : | տարածին ընդ երկրի : |
| 13. Գունովք և պտուղովք և հոտովք : | Գունովք պտղոց և հոտոց : |
| | . . . . . . . . . |
| 14. Այսու ցուցանէ : | Այսու ուսուցանէ : |
| զփրկութն մոյ : | զփրկութէն մերոյ : |
| 16. Խնդամտութե՟ . . | Խնդութե . . . երկնագործին . |
| երկրագործին : | . . . . . . . . . |
| 17. Տե՛ն լուսաւորեացն | Տեառն ծագեցէ : |
| առ ոտն հար : | առ ոտն հարկանեն : |
| Գ. Լ. Գ. : | Գ. Լ. Գ. : |
| 1. Անհոգացաւ : | Անհոգացեալ : |
| արդարոյն է պատրաստեալ : | արդարոյն է խոստացեալ : |
| 5. Տգիտութե : | 'Ի տգիտութեն : |
| 6. Հարան լինել : | Հարան զուի մարթի լինել : |
| 7. 'Ի զօրաւորացն : | 'Ի զօրացն : |
| 8. Յարհաւրաց գիշերայնոց : | Յարհաւրաց գիշերայնոց : |
| | . . . . . . . . . |
| 9. Երկնայնոյն ը՟ երկրայինս : | Երկնայնոյն առ երկրայինս : |
| | . . . . . . . . . |
| 10. Ոմանք արծաթ , ոմանք ծիրանիք : | Ոմանք ոսկեղէնք , ոմանք արծաթեղէնք , ոմանք ծիրանի : |
| եկեղեցւոյ շինութե : | Եկեղեցւոյ շինութե : |
| Գ. Լ. Դ. : | Գ. Լ. Դ. : |
| 1. Միջնաւահման էր : | Միջնաահման էր : |
| որ ինչ ը՟ երկրիքս : | որ ինչ յերկրիքս : |
| քաւ լինել : | հաստ լինել : |
| տարածեալ յաշխարհն և մեռեալ : | տարածեալ յաշխարհն իբրև մեռեալ : |
| 2. Մանր խրատելով : | Մանր խրատով : |
| որոճողաբար : | որոճաբար : |
| 3. Բանիւն խօսին : | Բանիւն խօսանին : |
| 'ի կարմրեցեալ շրթանց : | 'ի կարմրացեալ շրթանս : |
| 'ի բարեաց բարշմանն : | 'ի բարիք քարշմանն : |

'ի

| | |
|---|---|
| 'ի վերոյ սքօղեալ է : | 'ի վերոյ ածօղեալ է : |
| հաւատոն որ առ ած : | հաւատքն՝ որ առ ած յէ 'ի բա- |
| . . . . . . . . | րեաց ժառանգածն : |
| քրտնալեր է : | քրտնալի է : |
| 5. Որք արածին : | Որք արածեն : |
| 6. Կենդանին 'ի վեր և | Կենդանին վեր և 'ի վայր : |
| 'ի վայր : | . . . . . . . . . |
| 'ի բլուրն կնդրկի : | 'ի բլուրն կնդրկոյ : |
| 8. Որ զօրացեալ : | Որ հզօրացեալ : |
| 9. Զնախանձիկ սէրն : | Զնախանձաւորն սէրն : |
| անուշահոտութե կնդ- | անուշահոտութե խնկոյն կնդրկի : |
| րկին : | . . . . . . . . . |
| 'ի ձեռն քո ծանեայ : | (այսինքն յերկաթին . բայց լինելոյ |
| . . . . . . . . | է) ծանեաք : |
| տեսանողութիք : | տեսութբ : |
| յառաքինութիւն , և | յառաքինութբ , և մաքրութբ : |
| գեղաշարժ : | . . . . . . . . . |
| 14. Բնաբուսակիկ : | Բազմապատիկ : |
| յորս առաւել : | յորոց առաւել : |
| առաւօտին : | առաւօտեան : |
| զայս ած մի : | զխնամայն : |
| 'ի չափու ունի : | չափաւ ունի : |
| զանկլինելի : | զանզինելի : |
| 'ի սուգ լինի մեղաց : | 'ի սուգ լինի մեղաց : |
| և այլ այնպիսի : | այլև այնպիսի : |
| գիւտ զկինամոմն : | Բա՞ղ տնէ զկինամոմն : |
| պատշաճս : | պատշաճաւորս : |
| 16. Խոր գործքն : | Խորա գործքն : |
| առէ այն խնկ : | առէ այնպէս : |
| հալածէ զձմեռն : | հալէ զձմեռն : |
| Հնչեսն 'ի պարտէզ : | Հնչեցէք 'ի պարտէզ : |
| տատա հնչումն : | տապար հնչմամն : |
| Հնչեան 'ի պարտէզս : | Հնչեցէք 'ի պարտէզս : |
| Գ. Լ. Ե : | Գ. Լ. Ե : |
| 1. Զայնքան ասաքեն'' : | Զայնքան անլսք ասաք'' |
| 'ի բարեգործան : | 'ի բարեգործեան : |
| 'ի բարի գործան վա- | 'ի բարի գործոյն զնանպուն |

| | |
|---|---|
| տանջանալով ։ | առնել ։ |
| յորդորեցէ յղփել ։ | յորդորէոչէ ըմպել ։ |
| արդ՝ առեալ․․ արբե | առել․․․ արբեցայ 'ի կէս չէր ։ |
| ցաւուք, 'ի մէջ բերել ։ | . . . . . . . . . |
| 2․ Ու էր այսպէս ։ | Ու էր այս այսպէս ։ |
| հաստուցանել ։ | հատուցանել ։ |
| Նոյն օրինակ ինձ ։ | Նոյնպէս օրինակ և տալ ինձ ։ |
| 3․ Երախտաւորք ։ | Երախտաւորք ։ |
| 4․ Տէր զայս, թէպէտ | Տէր զայն, որ թէպէտ և աղ |
| և ոչ զօղուս ։ | պօղոս ։ |
| ցուցանելոց և 'ի գի | ցուցանելոց, այն այնպէս է ։ |
| տուն տալոց, այնպէս | . . . . . . . . . |
| առ այնմ ։ | . . . . . . . . . |
| զարեգակն ։ | զարեգակնն ։ |
| այնմ և մարդկային ։ | Նոյնպէս և մարդկային ։ |
| այնպէս և մեր բնու | այնպէս և մեր բնութեան ընդ |
| թեն ը ա͞ծութեն ։ | ա͞ծութիւնն ։ |
| միաբան գրոց ։ | (Գլ․ Դ բան գրոց ։) |
| 5․ Հնացմնել երկրաւոր ։ | Յիմացման մարմնաւոր ։ |
| 6․ Հրաժարեցին յաշ | Հրաժարեցին յերկրէ ։ |
| խարհէ ։ | . . . . . . . . . |
| զուարթունք երկրին ։ | զուարճանք բնակելու ։ |
| զնոր զանքննելի խորս ։ | զնորափոյն անքննելի խորս ։ |
| Եռայից ։ | Մեռայ ։ |
| յուսանելոյ զգխուն ։ | յուսացանելոյ զգիտուն ։ |
| գրոց միտս, որշափ | գրոց միտս, խորհին և խոհալ, |
| ուսանի ։ | որչափ ուսանի ։ |
| հաստատութեն ։ | հաստատութիւնն ։ |
| 7․ Հրեշտակք ը դաս | (Ըստ աստուծոյ մանկունք, յար |
| ուց և ը քրիստ պաշտա | ծին է սա ... հարս և սա |
| պանք են մարդկան անհա | ա͞ծութեան ։) |
| ւատից․ իսկ հաւատա | . . . . . . . . . |
| ցելոցն՝ ա͞մ անձին մի մի | . . . . . . . . . |
| հրեշտակ ։ | . . . . . . . . . |
| իմանալի է ։ | իմանալ է ։ |
| անկարութեն ։ | փկարութեն ։ |
| կապակցեալ սիրով ։ | կապակցեալ սեր ։ |

8․ Խան

| | |
|---|---|
| 8. Խանդակաթ : | Խանդաղակաթ : |
| առնել շնորհէ : | փոխանին շնորհէ : |
| Երանի է հարցման մեռ- | Երանելի է հայցման մեռոյն այն |
| րոյն այնմ անձին : | անձին : |
| 11. Մաքրիչ խակ եղե : | Քաւիչ եղե խօչ : |
| 12. Ջաղացանիս ՚ի վէր : | Աղացանիս ՚ի մէջ : |
| մոլորս խաբեալ : | մոլորեալ խաբեալ : |
| ոչ աւետարանիչն : | ոչ ալ աւետարանիչն : |
| 13. Անյուսացի գիւտ | Անյուսացի գիտի ասանէն |
| ՚կյուանել կամեցողին : | կամեցողաց : |
| ՚ի միտս մարդկան : | ՚ի միտքը մարդկան : |
| զանազան բաժանին : | զանազանեան բաժանին : |
| սակաւապէտութ̃ : | սակաւապէտութ̃ : |
| ՚ի շուշանացեալ : | ՚ի շուշանաց : |
| 14. Բազայայեան գոր- | Բազայայեան մէջնութ̃ն : |
| ծութ̃ն : | . . . . . . . . . |
| Թէք ոչ ; | Թէև նորա : |
| ոյն մարտնացելոյ : | ոյն և մարտնացելոյ : |
| բովանդակ . . . . զամե- | բովանդակ . . . ամէն խորողաւ̃ և |
| նակարողութիւն և զա- | ամէն փառօք̃ : |
| մենատեսութիւն : | . . . . . . . . . |
| 16. ՚Ի տեսողութիւն : | ՚Ի փառօք̃ն : |
| ԳԼ. Զ: | ԳԼ. Զ: |
| 2. Ըմպել ը̄ ձեզ : | Ըմպելու ըստ նոսա : |
| 3. Զոր հարանէ . | (Յ. որ ՚ի հարանէ :) |
| ձեացեալ զհարանն : | յեացեալ զհարանն : |
| զքանչելատեսակ : | զքանչելապատիւ : |
| 4. Անխափանելի էր : | Անդնդանելի էր : |
| 5. Հայելով ՚ի վարան : | Հայելով ՚ի վարան : |
| զայս լուալիս : | զայս լուալեաց : |
| 8. Անեամ զժողովրդոց: | Անեամ զժողովրդոց : |
| զանեպք և թագուհիք | գաղերթն և թագուհիքն փեսին |
| և տեսին զհարան և ե- | զհարան և երանեցին նմա : |
| րանեցին նմա : Այսու: | Այրդ՝ ասաց : |
| 10. Մ՛երիմով փակեալ է: | Մ՛արտով պատեալ է : |
| առակտոր յաֆրնին: | առակտու՝ որ յանէնաբանին : |
| 11. Անբծութիւն : | Անբծութ̃ : |

| Գ. Լ. Ծ: | Գ. Լ. Ծ: |
|---|---|
| 1. Ծանուցանեմ: | Ծանուցեալ եմ: |
| օձին խայթոցայ: | օձին խայթոցից: |
| խելապատակացն: | խելապատկանացն: |
| անբարձ գլուխն 'ի գե- | անբարձ գլուխն 'ի գետին, և |
| տին մոլար գխտութե | չբերէր կնանալի է ... |
| հերձուածողացն: | հերձուածողացն: |
| . . . . . . . | . . . . . . . |
| 2. Ինքնամբ յինքենէ: | Ինքնեան յինքեանս: |
| անուշութե: | անուշահոտութե: |
| լսելութեն ժողովելոյն: | ընտրածին ծաղկելոյն: |
| 4. Սաղսանեն թզուորին: | Սղասարեն թագաւորին: |
| քնով ցանկալեալ: | (յորինուածն. ...) |
| 5. Վայելչականք սեփ- | Վայելչական են սեփականութե: |
| հականութե: | . . . . . . . |
| զգեստու: | զգեստ: |
| երբև թաց 'ի գլուխս: | ով թաց որ 'ի գլուխս: |
| զամ մնում զգայուեց: | զամ զգայաս: |
| քեսոց և հաստատելոց | քսոց, և հաստատելոց: |
| գիրք: | . . . . . . . |
| 8. Ընդ ընկեր 'ի անր: | Ընդ ընկեր անր: |
| համանունչհատուն: | հաց անուշն: |
| 9. Զինչ ուսանեք: | Զինչ տեսեք: |
| ուսուցանէ: | ուսուցէ: |
| խնդացելոյն, և ըն- | խնդացելոց, և ընծաբեր: |
| ծայաբեր: | . . . . . . . |
| այլ զամ ինչ որ: | զայլ ամ որ ինչ: |
| անօթն ընդիր ասէ: | անօթն ընդարձակ ասէր: |
| անբովանդակելի: | անբաւանդակելի: |
| 10. Այլոց միաւորութե: | Այլոց միաւոր: |
| 11. Այլոս բերոց: | Այլոց բանից: |
| Գ. Լ. Ը: | Գ. Լ. Ը: |
| 1. Բովանդակ ամ: | Բովանդակ ամ: |
| 4. Շնորհակալեալ: | Շնորհ կալեալ: |
| 5. Ողջեկեց լեալ: | Ողջանիլ լեալ: |
| Նմանեցուցանէ: | Նմանեցուցեալ: |
| 6. Զհակառակորդն: | Զհակառակօղն: |

խամ

| | |
|---|---|
| խառնիկն զսէր : | համբէն զէր : |
| ահեղխառնաբար : | ահեղխառնաբար : |
| 7. Բանս աղուականս : | ('Ի միտս, աղուաղականս, |
| . . . . . . . . | յայլուստ. աղուականս :) |
| ոչ բաւեմ : | ոչ կարեմ : |
| 8. Ստեղծողութեն : | Ստեղծմանէ : |
| թէ եւ միւսն : | Թէպէտ եւ միւսն : |
| անտեսանելի : | անտեսանելի : |
| գրեալ եմ : | Գիտեալ եմ : |
| այպերանս (յունարէն) | այպերանս : |
| ոչ գոյ յարմարանք մար- | ոչ յարմար բանք մարգարէա- |
| գարէականք : | կանք : |
| առնեալք : | խառնեալք : |
| 10. Ոչ կարէք : | Ոչ կարէիք : |
| Չմարտապէս : | Չմարտապէս : |
| 11. Զայրն առնու : | Զայրն առնէ : |
| բանտարգելոց : | բանտարգելելոց : |
| ծառայի հարկք : | ծառայի հարկք : |
| եղեւ 'ի սկսանելս : | եղեալ 'ի սկսանելն : |
| 12. Ընդ մէջ է : | 'Ի մէջ է : |
| զերկու բնութեանս : | զերկուսն : |
| զինն այսմ : | զինն այսր : |
| 13. Զպտուղ այգւոյն : | Զպտուղ հոգւոյն : |
| անձնկալք : | անձնկալան : |
| մտաւորք են : | մտաւորք են : |
| զմնանելոյ ճաշին 'ի | զմնանելոյն ճաշանակին պտղ- |
| պատրաստել ծախելով : | րատուէն ծախելով : |
| բաղում քեալ յառաջ լան : | (մ. բերէ կամ առաւելս լան :) |
| յորժամ ոչ եւ յուշառն | (մ. ոչ եւ յառաջագոյն մե- |
| մաներն իցէ. եւ յաւելա- | ռեալ իցէ՝ զոր լուծելով ի- |
| գոյնս մաղթեն, զոր | մեյն, թէ եւ յուշագոյն |
| հարաշարն փակեցինն : | մաղթեն :) |
| ձերբակալեցն 'ի հրաշա- | (մ. 'ի հարսանեաց՝ զոր բա- |
| նեցն, զոր բարի հարսն | րի հայրն՝ բարեաց փեսային առ- |
| ուրախ առնէ բարեաւ վես | նէ, ձերբակալեալ զի նորհայրն |
| սային, յորս կնոջ նոր | կնոջ, նմ զի այնինչ գնեալ ո- |
| բաժակին, կմ յորս | գաւակին, նմ յորս նուազ եղանց :) |

Ընդ

լծոյ եզանց, զորս չա-
րաչար տառայս :

. . . . . . . .

. . . . . . . .

գտեալ մեղաւորաց :
և ծուլացելոցն :
անկատարք են և թերքք
առ հանդերձեալ ու-
սումն :

. . . . . . . .

. . . . . . . .

. . . . . . . .

յոյժ անկար է այս :
Ն.Ի.Զ. 'ի թուականուն
և 'ի թվ̃րուեն հայոց :
որ առաւել քան :
պաղատանան :

զորս չարաչար տառապան :(Այս
գտելոց են 'ի բանն գրիգ. ծծուբ.
'ի ձառն աբ, Արտասութե . աղ
ապաւգի 'ի յասնախանէն :)
դատապար տիեղերաց :
(ծ. 'ի ծուլացելոցն :)
(Թուի գրելի . թերի : կմ թիւք
ասին մ՛ւ ադխախաբար, այլ բաղւ
դատապարտ հանդերձելոյն . կմ թե
'ի մեր խաղմանե . բայ որմ մարթ
է մեղ թիարիւ յայնցանե, կամ
թիար իմանալ :)
(Թուի լինել . անկատար :)
'Ի Ն.Ի.Զ. թուականութեան հայոց :

. . . . . . . . .

որ առելի եր քան :
պաղատեցին :

ՀԱՅՈՒ ԳԱ
ՀՆԹՑԻՔ ԽՎ ՀՐԱ... ...Յ
...ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՌԻՆ 5130